

ՀԱՅԿ. ՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՄ. ՄԱՆԿԱԳԱՐԺՈՒԿԱՆ ԲՆՈՍԻՏՈՒՏ

Զինագրի իրավունքով

Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

ԿԼԻՄԱՏՈԼՈԳԻԱՅԻ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

(ՆՅՈՒԹԵՐ)

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

Коллич. пред. выдат _____

Зак. 38

551.5
Ա-73

Ձեռագրի իրավունքով

Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱՆ Է 1961 Ձ.

ԿԼԻՄԱՏՈԼՈԳԻԱՅԻ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

(ՆՅՈՒԹԵՐ)

Խմբ. սյրոփ. Գ. ԳՈԶԱՐՅԱՆ



A $\frac{7}{15622}$



ՎԼԻՄԱՏՈՒՈՐԻԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երկրագնդի վրա տեղի ունեցող ֆիզիկական պրոցեսները, ինչպեսիք են ծանրության ուժի արտահայտությունները, սեյսմիկականությունը, ջերմունակությունը, ուսումնասիրում է գիտություն հատուկ ճյուղը՝ գեոֆիզիկան. հասկանալի է, որ մթնոլորտի ֆիզիկական հատկությունների ուսումնասիրությունը ևս մտնում է այդ գիտություն շրջանակի մեջ. դրանով զբաղվում է մետեորոլոգիան, որը, այսպիսով, գեոֆիզիկայի մի մասն է կազմում: Մետեորոլոգիան ուսումնասիրում է մթնոլորտի մեջ տեղի ունեցող երևույթները՝ նրա ջերմացումը և սառչելը, խոնավությունը և տեղումների առաջանալը, ճնշումը, քամիները, նրանց ուղղությունն ու արագությունը, լույսի, ձայնի և էլեկտրականությունից բխող ճառագայթների: Մետեորոլոգիան այս էլեմենտները ուսումնասիրում է փորձնական ֆիզիկայի մեթոդներով — զանազան գործիքներով, յուրաքանչյուր էլեմենտի հատկանիշը նա արտահայտում է մասթիմատիկական էմպիրիկ ֆորմուլաներով:

Մետեորոլոգիական էլեմենտների տարբեր կոմբինացիաները առաջացնում են տվյալ վայրի եղանակը. մի կոմբինացիան սովորաբար կարճատև է լինում և փոխարինվում է մի ուրիշով. դրանից էլ առաջանում է եղանակի փոփոխականությունը:

Էլեմատոլոգիան ֆիզիկական աշխարհագրություն մի առանձին ճյուղն է, որը, հենվելով մետեորոլոգիայի տվյալների վրա, փորձում է բացահայտել մթնոլորտի ստորին շերտերում տեղի ունեցող պրոցեսների պատճառները՝ կապված երկրի ցամաքների, նրանց սելեֆի, բուսական ծածկի, ծովի և ցամաքի ջրերի, ինչպես և արևի էներգիայի ազդեցություն հետ:

Էլեմատոլոգիական ուսումնասիրությունների մեջ մեծ մասամբ օգտվում են ջերմաստիճանների, խոնավությունից և այլ երև-

վույթներին վերաբերվող միջին թվերից: Վերջերս, սակայն, ձեռնարկում են քննադատաբար վերաբերվել միջին թվերին, որովհետև նրանք սքողում են բնության մեջ տեղի ունեցող բազմազանությունները: Այդ կապահցությամբ կլիմայի հին բնորոշումը, որպես «մետեորոլոգիական էլեմենտների միջին վիճակի», ներկայումս փոխարինվում է նոր բնորոշումներով (Ն. Տիխոմիրով, Ս. Պրոմով), որոնցից ամենահաջողը, մեզ թվում է, տրված է Ն. Ռուբինշտեյնի և Պ. Ալիսովի կողմից: Այլմասն այդ հեղինակները համարում են «մետեորոլոգիական էլեմենտների օրինաչափ հաջորդականություն, որը որոշվում է ֆիզիկա-աշխարհագրական պայմանների կոմպլեքսով և արտահայտվում է եզանակի տվյալ վայրում դիտվող բազմամյա սեծիմով»: Ըստ որում, եզանակի բազմամյա սեծիմի տակ պետք է հասկանալ տվյալ վայրում ոչ միայն գերակշռող, այլ և առհասարակ համարվող եզանակի պայմանները:

Այսպիսով, կլիմատոլոգիան միջին թվերի սփերայից ոտք է դնում դեպի եղանակները դիսամբիկայի և նրան պայմանափոքող բազմազան կապերի ուսումնասիրությունը:

Ներկայումս կլիման ուսումնասիրող գիտությունը հարբստանում է խիստ հետաքրքրական երևույթի՝ օդային զանգվածների մասին բազմաթիվ տվյալներով:

Պարզվում է, որ տվյալ վայրում մետեորոլոգիական էլեմենտների փոփոխությունը չի կարելի հստակապես առանց հաշվառանելու օդի այն հսկայական զանգվածների հատկությունները, որոնք տեղական ծագում չունեն և ներխուժում են այլ լայնություններին ու մարզերին: Դեռևս անցյալ դարում ողջ մեծ կլիմատոլոգ Վոնյկովը նշել էր նոր երկրի սառն օդի ներխուժումը Արևելասկզբապահան հարթության վրա, այդ կասեմները անցյալ տասնամյակում հաստատեցին նորվեգիական հետազոտողները (Բյորկնես, Բերթերոն), որոնք և ստեղծեցին օդային զանգվածների մասին ուսմունքը: Նրանք ցույց տվին, որ երկրագնդի տարբեր մարզերում, հասկապես ավելի կայուն անտիցիկլոնային սեծիմ ունեցող վայրերում, ինչպես և Սիբիրիկան, սուբարոպիկ լայնությունները, ձևավորվում են այդ վայրերին հատուկ ջերմությունը, խոնավությունը, ճնշումն ունեցող օդային զանգվածներ, որոնք անավելի միստորաբար շրջանառության մեջ, տեղափոխվում են այլ վայրեր և մասնակցում այդ վայրերի եզանակի պայմաններին ձևավորմանը, հաճախ շրվ-

Ման ու պայքարի մեջ մտնելով այլ զանգվածների հետ առան-
ձին ֆրոնտները վերա շեռակաբար կլիմատոլոգիան պետք է
ուսումնասիրի այն պրոցեսները, որոնք կատարվում են մթնո-
լորտի ավյալ հատվածում եկվոր օդային զանգվածների մաս-
նակցութեամբ և շրջապատի ֆիզիկո-աշխարհագրական պայման-
ների ազդեցութեամբ: Մետեորոլոգիական կայանների լայն ցան-
ցը, հատկապես ՍՍՌՄ-ում, հնարավորութեամբ կտա օրեց-օր
ուշի-ուշով հետեւիւու օդային զանգվածների շարժումներին և
պարզելու նրանց օրինաչափութեանները շատ ավելի մանրամաս-
նորեն, քան ներկայումս, որով և հնարավոր կդառնա դինամիկ
կլիմատոլոգիայի ստեղծումը:

Աշխարհագրութեան ուսումնասիրողների համար կլիմատո-
լոգիայի նշանակութեանը չափազանց մեծ է:

Ֆիզիկո-աշխարհագրական միջավայրը ոչ միայն ազդում է
կլիմայի վրա, այլև ինքը կրում է նրա վճռական ազդեցութեան
կնիքը: Եթե լեռները ազդում են օդային զանգվածների շարժ-
ման վրա, կոնգլոմերատայի են ենթարկում խոնավութեանը,
պապա այս վերջինս էլ զարգարում է լեռների լանջերը բուսա-
կանութեամբ, սնունդ է տալիս աղբյուրներին և գետերին, որոնք
փոխում են լեռների տեսքը: Ակադ. Ա. Գրեբորյեվը ֆիզիկո-աշ-
խարհագրական պրոցեսի առաջատար էլեմենտը համարում է
կլիման, հատկապես ինտոլյացիայի և օդի զանգվածների շարժ-
ման առանձնահատկութեանները, որոնք և հիմք են ծառայում
ֆիզիկո-աշխարհագրական ուսյոնացման համար, այսինքն պայ-
մանավորում են առանձին լանդշաֆտների դիմագծերը: Այն-
քան մեծ է բույսերի, հողի, կենդանիների կախումը կլիմայից,
որ նրանք երկրագնդի վրա տարածվում են զոնաներով, օրինակ,
ՍՍՌՄ-ում տայզանների փշատերև ծառերը տարածվում են տե-
րիտորիայի մի շերտում, որտեղ ամառվա ամենատաք ամսի
միջին ջերմաստիճանը 10-ից բարձր է, 20°-ից ոչ ավելի:
Ծառերի առանձին տեսակների տարածումը կախված է գլխա-
վորապես ջերմութեան և օդում ու հողում եղած խոնավութեան
քանակութեանից: Մյուս կողմից, գտնելով երկրի կեղևի հին
շերտերի մեջ որևէ ժամանակակից բույսի մնացորդ, կարելի է
դատել այն ժամանակվա կլիմայի մասին, երբ գոյացել է
ավյալ շերտը:

Կլիմատոլոգիայի նշանակութեանը մեծ է մանավանդ մեր
շինարարութեան պրակտիկայի համար: Ուսումնասիրելով կլիմա-

յազան պայմանները, մենք կարող ենք նշել նրանց լավագույն օգտագործման պայմանները, ընտրելով գյուղատնտեսության մեջ այնպիսի կուլտուրաների դարգացումը, որոնք ամենից ավելի արդյունավետ կլինեն տվյալ երկրում կամ շրջանում:

1. ՄՔՆՈՒՈՐՏ (ԱՏՈՍԱՖԵՐԱ)

Սահմանները

Երկրագունդը շրջապատող օդային թաղանթը կոչվում է մթնոլորտ կամ ատմոսֆերա: Նրա բարձրությունը, հաշված երկրի մակերևույթից, հասնում է մոտ 1.000 կիլոմետրի. այսպես, ատմոսֆերայի այն շերտը, որն ընդունակ է ցրելու և անդրադարձնելու արևի ճառագայթները, ունի մինչև 70 կիլոմետր բարձրություն, ամենաբարձր շերտին հասնող ամպերի տեսակը՝ արծաթավուն ամպերը դիտվում են մինչև 80—85 կիլոմետր վրա, մետեորիտներն այրվում են մինչև 900 կմ., իսկ հյուսիսսփայլերի (ավելի ճիշտը՝ բևեռափայլերի) երևույթը դիտվում է 750—1000 կիլոմետրի հասնող բարձրությունների վրա:

Թեորիպպես ատմոսֆերայի վերին սահմանը հասնում է մինչև այնտեղ, ուր հաժառարակչություն են երկրագնդի կենտրոնածից և կենտրոնախույս ուժերը, հասարակածի համար այդ տարածությունը հավասար է 6,6 R*—ի երկրի կենտրոնից կամ 5,6 R (36.000 կիլոմետր) երկրի մակերեսից հաշված, որից հետո սկսվում է միջմոլորակային տարածությունը խիստ ցածր ջերմաստիճանով (բացարձակ 0° կամ —273°):

Մարդկային պրակտիկայի համար էական նշանակություն ունի միայն ատմոսֆերայի ստորին շերտը, արոպոսֆերան, որ 11 կիլոմետր հաստություն է հասնում: Սա ատմոսֆերայի ամենախիտ մասն է, պարունակում է զգալի քանակությամբ ջրային գոլորշիներ, այստեղ են գոյանում ամպերը, վերընթաց և վայրէջ օդային հոսանքները. դեպի վեր բարձրանալիս արոպոսֆերայի ջերմաստիճանը նվազում է:

Տրոպոսֆերայի միայն ստորին կեսն է պիտանի մարդու բնակություն համար. ամենաբարձր բնակավայրերը հասնում են 4.600—5.200 մետրի: Հարավային Պերույում կան բնակավայրեր

*) R—երկրագնդի հասարակածային շառավիղն է 6378,2 կմ. երկարությունը:

5.210 մ. բարձրության վրա, հողագործությունը հասնում է մինչև 4.350 մետրի, Տիրեթում 4.650 մետրի վրա զբաղվում են մերկասերմ գարու մշակութամբ, քոչվորների ամառային արոտափեղերը Պամիրում 4,8 կմ. վրա են:

Տրոպոսֆերայից վեր, մինչև 70—80 կմ. բարձրության շերտը կոչվում է ստրատոսֆերա, ըստ որում նրա սահմանը բևեռներին վրա ավելի մոտ է երկրին, քան հասարակածի վրա (17—18 կմ.): Ստրատոսֆերայի խտությունը փոքր է ստրոպոսֆերայի օդի խտությունից, որի շնորհիվ այդ շերտերով զերարագաթախ ռազմացույցային համար մեծ հեռանկարներ են նշվում:

Ատոմոսֆերայի հշված երկու շերտերը մարդիկ ուսումնասիրում են թե գիտական և թե պրակտիկ նպատակներով:

Տրոպոսֆերայի ստորին շերտերն ուսումնասիրվում են մարդկային բնակավայրերում և նրանց մոտեքում հիմնված մետեոլոգիական կայանների միջոցով, բարձր շերտերը՝ լեռների գագաթներին դրված գործիքներով, որոնք իրենք են զբանջում օդի ջերմության, խոնավության, քամու ուժի և արագության վերաբերյալ ավյալները և պարբերաբար ստուգվում են մարդկանց կողմից: Տյան Շանի լեռներում Ստալին-Պիկի 5.600 և 6.850 մետր բարձրությունների վրա դրված են այդպիսի գործիքներ: Հայաստանում Քրազածի վրա (3.250 մ. բարձր) ունենք հատուկ կայան: Ավելի բարձր շերտերն ուսումնասիրվում են թռչող մեքենաների միջոցով վեր բարձրացվող ապարատներով:

900-ական թվականներից արդեն մարդկությունը հասավ ստրոպոսֆերայի վերին սահմանին, իսկ նախապատերազմյան տարիներում սովետական տեխնիկան փայլուն նվաճումներ ձեռք բերեց նաև ստրատոսֆերայի ուսումնասիրման գործում. 1934 թ. «Օստավիաբիմ» ստրատոստատը հասավ 22 կմ. բեկորային բարձրության, որը հետագայում մի քանի տասնյակ մետրով միայն գերազանցվեց ամերիկացիների կողմից:

Էլ ավելի մեծ բարձրության (40—42 կիլոմետր) հասնում են զոնդ-գնդերը, իրենց մեջ տեղավորված ապարաթներով: Ստրատոսֆերայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստրոպոսֆերայի սահմանից վեր ջերմության անկումը նվազում է և հաստատվում համարյա անփոփոխ ջերմաստիճան՝ —55° C, բացի դրանից, արտատոսֆերայում օդի խտությունը 15—25 անգամ պակաս է, քան ստրոպոսֆերայի ստորին շերտերում:

70—80 կիլոմետրից վեր դառնվում է ամամոֆերայի կրքորդ* ամենաբարձր շերտը (խոնոսֆերա):

Ամամոֆերայի բաղադրությունը

Ամամոֆերան, որպես կրկրագունդը շրջապատող թաղանթ բաղադրվում է այնպիսի էլեմենտներից, որոնք մտնում են նաև հիդրոսֆերայի ու լիթոսֆերայի մեջ: Մինչև վերջերս ամամոֆերան գիտվում էր որպես «պերմեանա գազ»**, այժմ, սակայն, հետազոտելու արդյունքում է դառնում այն տեսակետը, թե ամամոֆերան բրկնից ներկայացնում է կոլլոիդային լուծույթ, որտեղ լուծիչի գեր կատարում են դազերը, որոնց մեջ լուծված են կարծր ու հեղուկ մարմինների մանրագույն մասնիկները, որպես կոլլոիդ մարմիններ:

Երկրի մակերեսին մոտ օդի բաղադրությունը հետևյալն է. ազոտը*** ըստ ծավալի կազմում է օդի 78,08 տոկոսը (ըստ կշռի 75,5 տոկոս), ի թվածինը՝ 20,94 տոկոս (ըստ կշռի 23 տոկոս), արգոնը՝ 0,94 տոկոս, ածխածինը՝ 0,03 տոկոս, ջրածինը՝ 0,01 տոկոս, հեռոնը՝ 0,0012 տոկոս, հելիումը՝ 0,007 տոկոս, աննշան քանակությամբ կան նաև կրիպտոն և քսենոն (տես պժ. 1):


Բայց հիշվածներից, օդի բաղադրություն մեջ մտնում են և ջրային գոլորշիներ. նրանց քանակությունը տատանվում է, օդի բարձր ջերմաստիճանների ժամանակ հասնելով մինչև 4 տոկոսի, իսկ ուժեղ ցրտի ժամանակ ընկնելով մինչև 0,01 տոկոսի:

Հասարակածի վրա նրանց բաժինն օդի մեջ ավելի մեծ է (2,63 տոկոս), քան թե բարձր լայնությունների վրա (70° հյուս. լայնություն վրա 0,22 տոկոս): Օդոն և ազոտաթթու օդի մեջ քիչ կան, զրա փոխարեն միշտ առկա են օրգանական նյութերի քայքայման արդյունքներ՝ ամմիակ, բակտերիաներ, ինչպես և մանրագույն փոշեմատիկներ, որոնց քանակը շուր օդի մեկ խորամ. մեջ հասնում է 130.000-ի (անձրեից հետո 32.000): Օվկիանոսների վրա դրանց փոխարեն օդի մեջ կան աղի մանրագույն մասնիկներ: Օդի բաղադրություն մեջ մտնող հիմնական գազերն

*) Տրոպոսֆերան և ստրատոսֆերան միմյանցից բաժանվում են անցողիկ, ոչ հզոր շերտով, որը կոչվում է սուբստրատոսֆերա:

**) H. Wagner, 1922.

***) Ազոտի խոնոթյունը (օդի համեմատությամբ) 0,967 է, թթվածինիը՝ 1,105, ածխածինիը՝ 1,529, ջրածինիը՝ 0,0695:



Մ. № 1. Ատմոսֆերայի կազմը և ընդհանուր շարժումը

ատմոսֆերայի կտրվածքում անհամաչափ են բաշխված, քանի որ ունեն տարրեր խտություններ: Անմիջապես երկրի մակերեսին մոտ գտնվող շերտում գերակշռում են այն գազերը, որոնց խտությունը գերազանցում է օդի խտության, կամ մոտ է նրան. այսպես, եթե ստորին շերտում ազոտը կազմում է օդի ծավալի 78,08 տոկոսը, ապա 70 կմ. բարձրության վրա նրա բաժինն իջնում է 62 տոկոսի, թթվածնի բաժինը 20,94 տոկոսից իջնում է 6 տոկոսի, բայց դրանց փոխարեն այնտեղ հանդես է գալիս ջրածինը (32 տոկոս), որն օդի ստորին շերտում համարյա բացակայում է: 100 կլումեար՝ բարձրության վրա ազոտը կազմում է միայն 3 տոկոս, ջրածինը՝ 95 տոկոս, թթվածինը՝ 0,1⁰/₀:

Այսպիսով ատմոսֆերայում հիշյալ գազերը «շերտավորված են» ըստ իրենց տեսակարար կշռի, բայց պարզ է, որ այդ շերտերը հատու սահմաններ չունեն և ներթափանցված են միմյանց մեջ:

Արեգակնային ռադիացիան և օդի ջերմությունը

Որովհետև կյանքի համար արևից ստացվող ջերմությունը մեծ նշանակություն ունի, ապա մթնոլորտի ջերմության և նրա աշխարհագրական բաշխման օրինաչափությունների ուսումնասիրությունը հատուկ տեղ է բռնում կլիմատոլոգիայի մեջ: Ջերմությունը ֆիզիկո-աշխարհագրական պայմանների ամենակարևոր սրոշիչն է, իսկ նրա ակտիվ գործակիցը հանդիսանում է խոնավությունը:

Ատմոսֆերան ընդունակ է ընկալել և ցրել ջերմային ճառագայթները, որոնք գալիս են արևից. նա իր մեջ պահում է այդ ճառագայթների մի մասը և չի թողնում, որ հասնեն երկրին, սակայն մյուս կողմից նա արգելակում է երկրի ստացած ջերմության անարգել ծախսումը և երկրի սառեցման առաջն է առնում, կատարելով, այսպեսով, ջերմային ռեժիմի կարգավորիչի դեր:

Տրոպոսֆերայի ստորին շերտի ջերմության հիմնական աղբյուրը երկրի մակերեսն է: Երկրի արևից ստացած տարեկան ջերմությունը կազմում է $1,91 \times 10^{24}$ փոքր կալորիա, մի քանակություն, որը բավական կլինի մի տարում հալեցնելու 36 մետր հաստության սառցի շերտը կամ գոլոշիացնելու 2,8 մ. ջրի շերտը եթե նրանցով պատած լինեիր ամբողջ երկրագունդը:

Երկրի կեղեք տաքանալով արձակում է իր հերթին անտեսանելի ջերմային ճառագայթներ, որոնք տաքացնում են օդը: Ծնորհիվ այս պրոցեսի, ստորին շերտում օդն ստանում է բավականի ջերմութուն, որն արտահայտվում է ամբողջ երկրագնդի համար՝ տարեկան $+14,3^{\circ}$ միջին ջերմաստիճանով:

Այնտեղ, ուր մթնոլորտը հազեցած է ջրային գոլորշիներով: նրա ջերմընկալ՝ հատկութունն ավելի ցայտուն է երևան գալիս. ծովամերձ երկրներն ունենում են ամառը ոչ շատ շոգ և ձմեռը ոչ շատ ցուրտ կլիմա, բարձր լեռների վրա, ուր օդը նոսր է և չի կարող բավարար չափով ընկալել ջերմային ճառագայթները, երկրի մակերեսի ջերմաստիճանը ենթակա է շատ մեծ տատանումների օրվա ընթացքում, որի հետևանքով լեռներն ինտենսիվորեն հողմահարվում են:

Արևի լուսավորումից (ինսոլյացիայից) ստացվող ճառագայթային էներգիան կոչվում է արեգակնային ռադիացիա. այդ էներգիայի այն քանակութունը, որ ստանում է արևի ճառագայթներին ուղղահայաց դրված 1 քառ. սմ. սև մակերեսը մեկ րոպիի ընթացքում, կոչվում է արեգակնային ռադիացիայի լարվածություն:

Ամպամած եղանակին ճառագայթներն օդում ավելի շատ են ցրվում, և ռադիացիայի լարվածութունն իջնում է. եթե ամպոսֆերան չլիներ, կամ բոլորովին թափանցիկ լիներ, արեգակնային ռադիացիայի լարվածութունը կկազմեր 1,94 փոքր կալորիա. այս ցուցանիշը կոչվում է արեգակնային քառանուր: Սովորաբար ռադիացիայի լարվածութունը չի հասնում արեգակնային հաստատունին և կազմում է վերջինիս մոտ 60 տոկոսը*, կախված լինելով, յուրաքանչյուր առանձին դեպքում, ավելի վարում ամպոսֆերայի ընդհանուր վիճակից, այսինքն՝ 1) նրա մեջ եղած փոշու և գոլորշիների քանակից, որոնք ցրում, կլանում կամ անդրադարձնում են արևի ճառագայթները, 2) օդի խտությունից, որը դժվարացնում է ճառագայթների ճանապարհը դեպի երկրի մակերեսը, 3) արևի և երկրի փոփոխազդեցությունից, որին հակադարձ համեմատական է ինսոլյացիայի ինտենսիվութունը: Այստեղից պարզ է, որ ինչքան թափանցիկ ու նոսր է օդը և ինչքան ավելի մոտ է երկիրն արևին (պերիհելիումի կետ), այնքան

*) Արևի զենիթային դիրքի և ամպայ երկնքի դեպքում մինչև 75%: Այս ցուցանիշը կոչվում է թափանցիկության գործակից: Մթնոլորտի վերին շերտերում նա մոտենում է 100 %-ի:

առդիացիայի լարվածութունը մոտ է արեգակնային հաստա-
տունին:

Մինչև այժմ մենք խոսում էինք այն դեպքի մասին, երբ
տաքացվող մակերեսը ուղղահայաց է արևի ճառագայթներին, սա-
կայն, եթե հաշվի առնենք, որ երկիրը սփերիկ մակերես ունի,
ապա արևի մի դիրքում, ասենք աշնանային կամ գարնանա-
յին դիշերահավասարի կետում, արևի ճառագայթներն ուղղա-
հայաց կլինեն միայն հասարակածի ուղղությամբ ընկած մա-
կերեսներին, իսկ բարձր լայնություններում արևի ճառագայթ-
ները և երկրի մակերեսի միջև անկյունները կփոքրանան և
բևեռներում կհասնեն 0°-ի, հետևաբար հասարակածից դեպի բե-
վեռները առդիացիան նվազում է, նվազեցնելով նաև երկրի մա-
կերեսից օդին հաղորդվող ջերմության քանակությունը:

Սույաբ կլիմա եվ Գրանից կատարվող շեղումները

Ջերմությունը մթնոլորտի մեկ հետաքրքրող ստորին շեր-
տում ենթակա է զանազան փոփոխությունների. ամենաընդա-
նուր ձևով այդ փոփոխությունները հանդես են գալիս աշխարհա-
դրական լայնությունների աճման կամ նվազման հետևանքով,
քանի որ ինսուլյացիայի ինտենսիվությունն ամենից առաջ կախ-
ված է արևի ճառագայթների անկման անկյունից, որը միևնույն
աշխարհագրական լայնության վրա ունի միևնույն մեծությունը,
ռելիֆի միանման պայմաններում:

Ընդունված է այդ հիման վրա երկրագունդը բաժանել
հինգ ջերմային գոտիներ:

Ցրանսիացի աշխարհագրագետ Մարտոնը դրանց համար
բնորոշ է համարում հետևյալ էլեմենտների համարժեքու-
թյունը.

1. ցերեկվա տևողությունը (D) արտահայտված ժամերով,
 2. արեգակի բարձրությունը հորիզոնի վրա ամենօրեկաբ
ցերեկվա կեսօրին (H).
 3. ջերմաստիճանի տարեկան փոփոխականությունը (V).
 4. ջերմաստիճանի օրական փոփոխականությունը (v):
- Համաձայն այդ հատկանիշների, նա դասադասում է հետև-
յալ գոտիները.

1. Հյուսիսային բևեռային գոտի—բևեռային շրջանից
հյուսիս, որտեղ արևի մաքսիմալ բարձրությունը (H) հասնում
է բևեռային շրջանի վրա 47°, բևեռում—23,5°, ամենաօրեկաբ ցե-
րեկվա տևողությունը (D) համապատասխանաբերեն՝ 24 ժամ և 6
ամիս: V մաքսիմալ, իսկ v միևնիմալ չափերի է հասնում:

II. Հյուսիսային բարեխառն գոտի՝ 23,5° և 66,5° հյուս. լայնությունների (Սեցզեանի արևադարձի և հյուս. բևեռային շրջանի) միջև: $H=90^\circ$ -ից (23,5° հս. և վրա) մինչև 47° (66,5° հս. և վրա): $D=24$ ժամից (66,5° հս. և վրա) մինչև 13 ժամ (23,5° հս. և վրա): Չերմաստիճանների տարեկան՝ փոփոխականությունն ավելի, իսկ օրական փոփոխականությունը պակաս է, քան հասարակածի վրա:

III. Տրոպիկ գոտի—երկու արևադարձի միջև. $H=90^\circ$, $D=13\frac{1}{4}$ ժամից 10 $\frac{3}{4}$ ժամ: Քանի որ ցերեկվա տևողությունը համարյա հաստատուն է, սպա V աննշան է, իսկ V մեծ է, քան որևէ այլ անդում:

IV. Հարավային բարեխառն գոտի, նման II գոտուն:

V. Հարավային բևեռային գոտի, նման I գոտուն:

Ծանոթիվ D -ի արժեքների տարբերությանը, տրոպիկ և բևեռային գոտիների միջև ամառային արևադարձի մոմենտին համապատասխան բևեռն ստանում է ավելի շատ ջերմություն, քան հասարակածը*), դա բացատրվում է ամառային պերիոդում բևեռներում ինսուլյացիայի մեծ տևողությամբ (գիշերներ չեն լինում), սակայն ինսուլյացիայի ընդհանուր ընթացքը և ուղիացիայի լարվածությունը պայմանավորված են աշխարհագրական լայնությամբ, որի հիման վրա և ընդունվում է կլիմայական հիմնական գոնանների վերոհիշյալ բաժանումը՝ սույր կլիմաների սխտեմը: Զերմության բաշխումը պայմանավորում է կլիմայի նաև մյուս էլեմենտների չափերը սույր գոտիներում: այսպես, հասարակածում տարեկան միջին ջերմությունն ընդունվում է 26,3°, մթնոլորտի ճնշումը՝ 758 մ.մ., մթնոլորտային տեղումների քանակությունը՝ 1950 մ.մ., ամպամածությունը՝ 58 տոկոս: Հյուս. լայնության 20°-ի վրա տարեկան միջին $t^\circ +25,2^\circ$, ճնշումը՝ 759,2 մ.մ., տեղումները՝ 820 մ.մ., ամպամածությունը՝ 40 տոկոս: Հյուս. և 60°-ի վրա $t^\circ -10^\circ, 0$, ճնշումը՝ 758,7 մ.մ., տեղումները՝ 480 մ.մ., ամպամածությունը՝ 61 տոկոս: Զերմաստիճանն ու տեղումները հասարակածից բևեռ նվազում են, ճնշումը մաքսիմալ չափերի է հասնում միջին լայնություններում:

*) Հունիսի 21-ի հյուս. բևեռի յուրաքանչյուր քառ. սմ. մակերեսն ստանում է 1.100 փ. կալորիա ջերմություն, հասարակածում՝ 811 փ. կ (տարեկան արժեքներն են՝ բևեռում 133 հազ., իսկ հասարակածում 321 հազ. մեծ կալորիա):

(հյուս. լայն. 40° վրա 762 մ.մ.), ամպամածուխյունը՝ հասարակածում և բարձր լայնություններում:

Աշխարհագրական լայնությունը, սակայն, կլիմայական տարբերությունների միակ աղբյուրը չէ: Եթե այժմ հյուսիսային, ավելի կոնտինենտալ կլիմայի տվյալները համեմատենք հարավային կլիմայի տվյալների հետ, ապա կտեսնենք, որ հարավային ավելի օվկիանոսային կլիմայից շերմաստիճանները ցածր լայնություններում սրահաս, իսկ բարձր լայնություններում՝ ավելի են հյուս. կլիմայից համապատասխան լայնությունների շերմաստիճաններից: Բացի այդ, հարավային կլիմայի բարեխառն լայնություններում մոտ երկու անգամ ավելի մթնոլորտային տեղումներ են թափվում, քան հյուս. կլիմայի նույն դատում, իսկ ամպամածուխյունը համարյա ամենուրեք ավելի բարձր է հյուս. կլիմայից համապատասխան լայնությունների ամպամածուխյունից: Անգամ միևնույն հյուսիսային կլիմայից կլիմայական և ամենից առաջ շերմային պայմանները խիստ շեղվում են աշխարհագրական լայնությունից. այսպես՝ հյուս. լայն. 65°-ի տակ, հարավային Իսլանդիայում և հս. լ. 45°-տակ՝ Արիմում հունվարյան շերմաստիճանները միևնույնն են: Արևմտյան Մուրմանում (հս. լ. 70°) ձմեռն ավելի տաք է, քան Վլադիվոստոկում հս. լ. 43° տակ: Ամառվա շերմաստիճանները հակառակ պատկեր են ներկայացնում. նրանք Վլադիվոստոկում և Արիմում ավելի բարձր են, քան Մուրմանսկում և Իսլանդիայում, և հիմնականում կլիմայով պայմանավորվող բուսականությունը, որ ավելի պահանջկոտ է ամառվա շերմության նկատմամբ, վերջին երկու վայրերում աղքատիկ բնույթ ունի: Ֆալկլենդյան կղզիներում, որոնք գտնվում են հարավային կլիմայից 51—52° հար. լայն. տակ, ամառն այնքան քիչ է շերմությունը (ամենատաք ամսին՝ փետրվարին 9,6°), որ ծառեր չեն աճում, ցորենը չի հասունանում, իսկ դարին ու վարսակն աճում են մեծ դժվարութայամբ. մինչդեռ հյուս. կլիմայից նույն լայնության վրա գտնվող Կուրսկի, Վորոնեժի և Սարատովի մարզերում առատորեն ցորեն է արտադրվում: Ամենացուրտ ամիսը Սարատովում (հունվար) ունի —10,8° միջին շերմաստիճան, իսկ Ֆալկլենդյան կղզիներում (հուլիս) 2,3° է:

Սույլաբ կլիմայից կատարվող այս և բազմաթիվ այլ շեղումների պատճառներն են. 1) ցամաքների ու ջրերի բաշխումը երկրագնդի մակերեսի վրա, 3) ցամաքների ու կղզիների ու ամերի

կարավածությունը, 3) օդային տարրեր զանգվածների հատկությունները (խոնավություն, ջերմություն, ճնշում և մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը), 4) ցամաքի մակերեսը ծածկող ապարների բնույթը և բուսական ծածկը, 5) մարդկանց գործունեությունը (բուսական և հողային ծածկի փոփոխման, քաղաքների, ջրամբարների շինարարության միջոցով):

2. ՕՂԻ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Աղիաբատիկ պրոցես

Օղի ջերմության հիմնական աղբյուրը, ինչպես ասվեց, երկրի մակերևույթն է, հետևաբար դեպի վեր բարձրանալիս մենք պետք է նկատենք ջերմաստիճանի նվազում: Այդ տեղի է ունենում մանավանդ այն պատճառով, որ օդի ստորին շերտի մասնիկները տաքանալով բարձրանում են վեր, ընկնելով նոր օդի միջավայրը, նրանք ընդարձակվում են, որի հետևանքով տեղի է ունենում ջերմության կորուստ: Այս երևույթը կոչվում է ադիաբատիկ պրոցես: Ջերմության անկումը կազմում է յուրաքանչյուր 100 մետր վերելքին 1° (ադիաբատիկ գրադիենտ): Գոլորշիներով հագեցած օդը սառչում է ավելի քիչ, քանի որ բարձրանալիս գոլորշիները խտանում են վերին շերտերի ցրտից և արձակում են իրենց մեջ եղած թագնված ջերմությունը. գրադիենտն այս դեպքում կազմում է $0,5-0,4^{\circ}$: Ներքևից բարձրացող տաքացած-թեթևացած օդի փոխարեն վերևից իջնում են ավելի սառն ու հետևապես ծանր օդի զանգվածներ, ներքևի ավելի խիտ միջավայրում նրանք սեղմվում են և հետևապես անջատում ջերմություն. թե՛ չոր և թե՛ խոնավ օդը յուրաքանչյուր 100 մետր իջնելիս տաքանում են 1° ու՛ր:

Ամառվա եղանակին, ցերեկ ժամանակ, ադիաբատիկ գրադիենտը 1° -ից ավելի է, այսինքն ջերմության նվազումը բարձրանալիս ավելի մեծ չափով է կատարվում. դիշերը նկատվում է հետաքրքիր երևույթ՝ ներքեում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան վերին շերտերում: Այս երևույթը կոչվում է ստորին ինվերսիա. դա բացատրվում է դիշերվա ընթացքում երկրի մակերևույթի սառչելով, որը և հաղորդվում է օդի ստորին շերտին, մինչդեռ վերին շերտերը պահպանում են ցերեկվա ընթացքում երկրից ստացած ջերմությունը: Դեպքեր են լինում նման ին-

վերսիայի ժամանակ, երբ 10—20 մետր բարձրանալիս Չերմու-
թյունն ավելանում է 10°-ով:

Օդի վերընթաց և վարընթաց հոսանքները կամ կոնվեկ-
ցիան, որ տեղի է ունենում օդի մասնիկների տուրբուլենտ շարժ-
ման*) շնորհիվ, օդի Չերմության վերտիկալ բաշխման կարգա-
վորչի դեր է կատարում: Օդը Չերմության վան հաղորդիչ է և
նրա անշարժ վիճակի դեպքում Չերմաստիճանի օրական տա-
տանուճանները կնկատվին շատ դանդաղ կերպով, երկրի մակերեսը
կտաքանար, բայց Չերմության հաղորդումը օդի շերտով դեպի
վեր իրատ կուշանար. օրինակ, 50 սմ. բարձրության վրա ուշա-
ցումը կկազմեր 12 ժամ: Զերմության վերտիկալ բաշխումն ու-
րույն կնիքն է դնում լեռնային երկրների Չերմային սեփմի
վրա: Լեռներում կեսօրվա ռադիացիայի լարվածությունը մեծ է
և ավելի մոտ արեգակնային հաստատունին, քան դաշտավայրում*
օդի նստրության հեռանքով լեռներում արևի Չերմային ճա-
ռագայթները քիչ են կլանվում և հողն ավելի է տաքանում, քան
դաշտավայրերում: Սամարղանդի մոտ գտնվող լեռնաշղթայի մի
հովտում, որ ունի 1.360 մ. բարձրություն, օդի Չերմաստիճանը
դիտվել է ժամի 13-ին 24°, իսկ հողինը՝ 47°, 2.000 մետր բարձ-
րություն ունեցող լեռնալանջում օդի Չերմաստիճանը նույն ժա-
մին եղել է 14°, հողինը՝ 54°. գրանով էլ բացատրվում է լեռնա-
յին բուսականության ցածրահասակ լինելը՝ անգամ ծառերը այս-
տեղ ձգտում են հողին մոտ գտնվել՝ ավելի շատ Չերմություն
ստանալու համար: Գիշերը լեռներում հոյն անարգել կերպով ար-
ձակում է ստացած Չերմությունն ու սառչում, այնպես որ դիտ-
վել են դեպքեր, երբ անտիտը հողի վրա Չուրը ստեղծ է, մինչ-
դեռ օդի Չերմաստիճանը բարձր է եղել 0°-ից. այսպիսով, չնայած
ռադիացիան լեռներում ավելի ինտենսիվ է, բայց հողի ճառա-
գայթումն էլ մեծ է:

Միջին հաշվով ընդունվում է, որ լեռներում ադիաբատիկ գրա-
դիկնաը 0,5° է, ըստ որում հյուսիսային լանջերում անկումն
ավելի դանդաղ է, քան հարավայինում (հյուս. կիսագնդում): Բա-
բելսոն գտառ լեռներում ամառը գրադիենտն ավելի մեծ է, քան

*) Հեղուկ և գազային մարմինները շարժման գոյություն ունի երկու
տիպ. գանդակ շարժման ժամանակ, երբ հոսքերի զծերը միմյանց զուգահեռ
են, շարժումը կոչվում է լամինար. բայց երբ շարժման արագությունն անց-
նում է որոշ սահմանից, հոսքի զծերը և զուգահեռ շերտերը լատնվում են
զոյացնելով փոթորկացումներ. դա կոչվում է տուրբուլենտ շարժում:

ձմռանը (օր. Շվեյցարիայում ձմռանը 0,45, ամռանը 0,75): Նկատված է նաև, որ լեռնային մասերի վերին կենտրոնական մասում անկումն ավելի քիչ է, քան պերիֆերիաներում, սա բացատրվում է մեծ մասսաների տաքացնող ազդեցությամբ: Ընդհանրապես լեռներում զրադիենտն ամուս է լանջերի թիքության աստիճանի հետ ուղիղ հարաբերությամբ և հաճախ բոլորովին չէ նկատվում սարահարթերում կամ թույլ արտահայտված սելենի պայմաններում:

Մինչև 14 կիլոմետր բարձրության ասամոսֆերայի շերտի համար բազմաթիվ զիտոլոգիստներից ստացվել է ջերմութային անկման հետևյալ պատկերը.

0-ից մինչև	1 կմ.	°	ընկնում է	6°
1 » »	2 » »	»	»	5°
2 » »	3 » »	»	»	5°
3 » »	4 » »	»	»	5°
4 » »	5 » »	»	»	6°
5 » »	6 » »	»	»	7°
6 » »	7 » »	»	»	7°
7 » »	8 » »	»	»	7°
8 » »	9 » »	»	»	7°
9 » »	10 » »	»	»	6°
10 » »	11 » »	»	»	4°
11 » »	12 » »	»	»	1°
12 » »	13 » »	»	»	-1°
13 » »	14 » »	»	»	0°

Այսպիսով ադիարատիկ պրոցեսը ցույտուն կերպով արտահայտվում է միայն արոպոսֆերայի սահմանում. սարատոսֆերայում ջերմութային անկումն աննշան է, և նույնիսկ սեղի է ունենում որոշ ավելացում բարձրանալու հետ: Հետևաբար սարատոսֆերայի ստորին շերտերն ավելի փոքր ջերմաստիճան ունեն, քան վերին շերտերը. այս երևույթը կոչվում է վերին ինվերսիա:

Ձերմաստիճանի չափումներ և իզոթերմների կառուցումը

Պէի ջերմութային չափումները կատարվում են մեանորոշումնական կայաններում սնդիկային ջերմաչափերով: Պ-ից ցածր ջերմաստիճանները չափվում են սպիրտային ջերմաչափերով (քանի որ -40 աստիճանում սնդիկը սառնում է): Ներկայումս



Ջերմաչափի ընդունված տիպը Յելսիուսինն է, որ ունի 100 սա-
 տիճանի բաժանված շկալա Հին քարանդներում և շատ ժամա-
 նակակից բրիտանական կլիմայական քարանդներում օդապարծ-
 վում է Պարենհայտի շկալան, որտեղ Յելսիուսի 100°-ին
 համապատասխանում է 212°, իսկ Օ. ին Պարենհայտի 32°-ը՝
 Ջերմաչափերից բացի օդապարծում են նույն նպատակով Սամանի
 պիլերամետրերը և Ջերմաստիճանի փոփոխությունները դրանցով
 ինքնազիր տերմոլոգիաները*): Որպեսզի սովորական Ջերմաչա-
 փերը ճիշտ ցույց տան օդի Ջերմութունը, նրանց պետք է հե-
 ապցնել կողմնակի Ջերմային աղբյուրներից, որոնք կարող են
 ազդել և ազավազել Ջերմաչափի ցուցումները: Մասնավորապես
 պետք է խուսափել Ջերմաչափի արևի տակ կախելուց, որովհետև
 այդ դեպքում նա կչափի ոչ թե օդի Ջերմաստիճանը, այլ ու-
 ղիսցիտայի ինտենսիվությունը: Սովորաբար Ջերմաչափերը և
 տերմոլոգիաները դրվում են հատուկ արկղներում, պետից 2
 մետր բարձր: Չափումները կատարվում են օրական չորս անգամ՝
 ժամի 7-ին, 13-ին, 19-ին և 1-ին: Բաժանելով ստացած
 Ջերմաստիճանների գումարը 4-ի, ստանում են օրական մի-
 ջին Ջերմաստիճանը, որպեսզի չկարգացնենք տարիների տար-
 բերությունը և ստանանք նորմալ միջինը, պետք է վերցնել եր-
 կաբաակ պերիոդի (30—35 տարի) պիտոլոգիաների արդյունք-
 ները: Ամսական միջին Ջերմաստիճանները ստանալու համար
 դումարում են օրական նորմալ միջինները և բաժանում սվյալ
 ամսի օրերի թվի վրա: Նույն ձևով տարեկան միջին Ջեր-
 մաստիճան ստանալու համար գումարում են միջին ամսական
 նորմալները և բաժանում 12-ի: Պետք է ի նկատի ունենալ,
 սակայն, որ տարեկան միջին Ջերմաստիճանները (ինչպես և առ-
 հասարակ միջին արժեքները) վերանում են ընտելթյան մեջ՝ գո-
 յություն ունեցող բազմազանություններից, հաճախ միևնույն
 տարեկան միջին Ջերմաստիճան ունեցող վայրերը խիստ տար-
 բերվում են միմյանցից իրենց Ջերմային սեփմով: Օրինակ,
 Փարիզը, Նյու-Յորքը, Բուխարեստը, որոնք ունեն համարյա-
 միևնույն տարեկան միջին Ջերմաստիճանները (10—11),
 տարբերվում են միմյանցից հունվարյան և հուլիսյան Ջեր-

*) Մեծաբազմազան ակադեմիաների նկարագրությունը տրված է հա-
 մապատասխան ձևակարգներում (սեու Проф. В. Н. Оболенский, Основы
 метеорологии, 1937 г., Л.).

մաստիճաններով. Փարիզի հունվ. միջինը $2,0^{\circ}$ է, հուլիսյանը $18,0^{\circ}$, Նյու-Յորքինը՝ $-0,6^{\circ}$ և $23,2^{\circ}$, Բուխարեստինը՝ $-3,4^{\circ}$ և $22,7^{\circ}$:

Երկրագնդի մակերեսի վրա շերմության բաշխումը գիտելու և նրա օրինաչափություններն ըմբռնելու համար օգտվում են իզոթերմիքի քարտեզից: Դա սովորական քարտեզ է, որտեղ միևնույն շերմություն ունեցող վայրերը միացված են անընդհատ գծերով: Մենք գիտենք, որ շերմաստիճանները սաստանվում են ըստ աշխարհագրական լայնությունների, այդ պատճառով էլ իզոթերմիքը ունեն գուղահեռներին մոտ ուղղություն. սակայն գոյություն ունեն բազմաթիվ ազդեցություններ, որոնց շնորհիվ տվյալ վայրի շերմաստիճանը, ավելի կամ պակաս, տարբերվում է լայնություն նորմալ շերմաստիճաններից, որի հետևանքով իզոթերմիքը բազմաթիվ շեղումներ են կատարում գուղահեռներէ ուղղությունից:

Իզոթերմիքի կառուցման համար անհրաժեշտ է առավել ճշտություն ստանալ միջին շերմաստիճանները և նրանց բերել նորմալ մակարդակի, այսինքն ծովի մակերեկույթին: Սա նշանակում է, որ եթե 2.000 մետր բարձրություն ունեցող վայրում հուլիս ամսվա միջին շերմաստիճանն ստացվել է $+5^{\circ}$, ապա պետք է հեռանալ, թե ինչքան կլինեք այդ շերմաստիճանը, եթե տվյալ վայրի բարձրությունը լինեք 0 , այսինքն ծովի մակերեկույթին հավասար: Այդ բանը կատարելու համար օգտագործում են աշխարհատիկ գրադիենտը, Վերն ասվեց, որ նրա մեծությունը 1° է, սակայն այդ այն գեպքում, երբ վեր բարձրացող օդը ոչ շերմություն է տալիս շրջապատին և ոչ կոդիֆիկալի շերմություն ստանում: Իրականում օդի մեջ միշտ էլ շրային գոլորշիներ են լինում, որոնք, ինչպես պարզեցինք, բարձրանալով և սառչելով, շերմություն են անջատում (գա այն շերմությունն է, որ ձախավել էր շուրջ գոլորշու վիճակին անցնելիս): Բացի այդ, դրադինալը փոփոխություն է կրում նաև տարվա եղանակների ընթացքում (ձմեռվա միջինը $0,50^{\circ}$, ամառվա միջինը $0,62^{\circ}$), այդ պատճառով նրա աստիճանի միջին արժեքը ընդունված է $0,56^{\circ}$ կամ կլորացված՝ $0,5^{\circ}-0,6^{\circ}$, մեր օրինակում իրական շերմաստիճանը ծովի մակերեկույթին իջեցնելիս կստացվի՝


$$(2.000:100) \cdot 0,5 + 5 = 15^{\circ}$$

Նման իջեցում կատարվում է նաև հունվարյան և տարեկան միջին շերմաստիճանների նկատմամբ: Իզոթերմիք անցկաց-

նելիս օգտվում են այդ ձևով ստացված Չերմաստիճաններին քանի որ իրական Չերմաստիճաններով անցկացվող իզոթերմերը կկրկնենին սելեֆի հիմնական գծերը և ընդհանուր պատկեր չէր ստացվի, չէր կարելի հետաձուլի նել Չերմության բաշխման օրինաչափություններին:

Այժմ իզոթերմերի քարտեզի վրա դիտենք տարեկան, հունվարյան և հուլիսյան Չերմաստիճանների բաշխումը և փորձենք պարզել իզոթերմերի շեղումների հիմնական օրինաչափությունները: Նախ նկատենք, որ ցամաքն ու ծովը, որոնք անկանոն կերպով հաջորդում են միմյանց քարտեզի վրա, ունեն տարբեր Չերմային ուժեր: Յամաքի տեսահարար Չերմընկալությունը կաղմում է ջրի Չերմընկալության 0,6-ը, հետևաբար, ցամաքը մոտ 2 անգամ ավելի արագ է հասնում միևնույն Չերմաստիճանին, քան ջուրը (ցամաքը 6 ժամում, ջուրը 10 ժամում), բացի այդ, ջուրը իր ստացած Չերմության մոտ $\frac{1}{10}$ մասը ծախսում է գոլորշիացման վրա, գոլորշիներն իրենց հերթին կլանելով Չերմային ճառագայթները, արգելակում են ջրի հետագա տաքացումը: Այդ պատճառով տաք եղանակին ցամաքը միշտ ավելի տաք է, քան ջուրը: Բայց մյուս կողմից ցամաքի վրա Չերմության տարեկան փոփոխությունները հասնում են մինչև 20 մետր խորություն, իսկ ջրի մեջ, նրա մասնիկների տուրբուլենտ (կոնվեկցիոն) հոսքերի շնորհիվ, 100—200 մետր խորություն, որի հետևանքով ջրի մեջ միշտ Չերմության պաշար կա, մինչդեռ ցամաքը Չերմություն չստանալով, հշտությամբ ճառագայթում և կորցնում է իր ստացածը. հետևաբար ցուրտ եղանակին ջուրն ավելի տաք է ցամաքից:

Տարեկան իզոթերմերի ֆարտեզում (դժ. 2) ամենից առաջ նկատում ենք, որ ամենաբարձր Չերմության գոտին հասարակածը չէ, թեպետ արևն այստեղ միշտ բարձր է լինում և տարեկան երկու անգամ դենիթային (ուղղահայաց) դիրքում: Այստեղ զգացվում է ցամաքների աղքեցությունը, որոնք բռնում են հյուսիսային կիսագնդի 39 տոկոսը, իսկ հարավային կիսագնդի 19 տոկոսը. դրա համեմատ Չերմային հասարակածը աշխարհաղբակա հասարակածից դեպի հյուսիս է շեղված, առանձնապես հյուսիս է բարձրանում նա Մեքսիկայում, Մահարայում և Հնդկական թերակղզում, որտեղ տարեկան միջին Չերմաստիճանները հասնում են $+30,0^{\circ}$ -ի: Ամենատաք զուգահեռը հյուսիսային լայնություն լայն 10° է, որտեղ տարեկան Չերմաստիճանը $26,8^{\circ}$ է:



ԳՃ. 2. Տարեկան խոնրերը

Փորձիք են կատարված հաշվելու յուրաքանչյուր զուգահեռի միջին ջերմաստիճանները, որոնց աղյուսակը բերում ենք ստորև (ըստ է. Մարտոնյանի, Լ. Բերդի, Վ. Կյուրպինի):

Աշխ. լայնու- թյուն	Ցամաքի տվույթ		Ամենատաք ամսվա թ°		Ամենացուրտ ամսվա թ°		Տարեկան միջ. թ°	
	հյուս. հար. կիսա- կիսազննում գնում	հյուս. կի- հար. կի- սազննում	հյուս. կի- սազննում	հար. կի- սազննում	հյուս. կի- սազննում	հար. կի- սազննում	հյուս. կի- սազննում	հար. կի- սազննում
0		22	26,4	25,8	26,3	25,8	26,8	26,3
10	24	10	26,9	26,3	26,3	25,8	26,8	25,4
20	33	24	28,3	25,4	25,4	21,9	25,2	23,0
30	43	20	27,5	21,8	21,8	14,6	20,3	18,4
40	46	4	24,0	15,6	15,6	4,9	14,0	12,0
50	56	2	18,1	8,3	8,3	7,0	5,8	5,6
60	61	0	14,0	3,2	3,2	-15,8	1,0	-2,0
70	55	0	7,0	-0,8	-0,8	-26,0	-10,1	-11,5
80	22	90	1,8	-6,5	-6,5	-33,5	-16,7	-19,8
90	0	100	0,0	-13,0	-13,0	-36,0	-19,0	-33,0
Երկիրը	39	19	22,4	17,0	17,0	8,1	15,2	13,3


Ամբողջ երկրագնդի օդի ջերմաստիճանը հունվարին $12,6^{\circ}$ է, հուլիսին $16,0^{\circ}$, այս տարբերությունը բացատրվում է նրանով, որ օդի ջերմաստիճանը հարավային կիսագնդի ամառն է, բայց քանի որ կիսագնդի մակերևույթին ջրային տարերքը ավելի, քան 4 անգամ գերակշռում է ցամաքի նկատմամբ և ասքանում է դանդաղ ու քիչ չափերով, ապա օդն էլ քիչ ջերմութուն է ստանում: Մյուս կողմից՝ նա շատ ջերմութուն է կորցնում հունվարին հյուսիսային կիսագնդում, որտեղ այդ ժամանակ ձմեռ է և լայն տարածված ցամաքները ծախսելով իրենց ջերմութունը, ստանում են նաև օդը: Հակառակ պատկեր է ըստացվում հուլիսին, երբ հյուսիսային կիսագնդում ամառ է և օդը ուժեղ տաքացվող ցամաքներից շատ ջերմութուն է ստանում, իսկ հարավային կիսագնդում, որտեղ ձմեռ է, կորցնում է համեմատաբար քիչ, շնորհիվ օվկիանոսների գերակշռության:

Տարեկան միջին ջերմաստիճանը անբողջ երկրագնդի համար $14,3^{\circ}$ է: Ամենաբարձր տարեկան ջերմաստիճանը՝ $30,2^{\circ}$, դիտվել է Մասսաուսյում (Էրիտրեա) հյուս. լայնություն 15° և արևմտային $20,4^{\circ}$, Գրինլի երկրում (Գրենլանդիայից արևմուտք), Անտարկտիդայի և Գրենլանդիայի ստացապատ սարահարթերը հավանաբար հաճախանում են ջերմաստիճանի տարեկան միներումի կենտրոններ (-25°):

Տարեկան իզոթերմները 45° -ից բարձր լայնություններում օվկիանոսների վրա բարձրանում են դեպի բևեռներ, ցամաքների վրա ձգտում են դեպի հասարակած, դա նշանակում է, որ այդ գոտում օվկիանոսի դերը իր ջերմային մեծ պաշարով առաջնային է, մանավանդ, որ թե՛ Ատլանտյան և թե՛ Սաղարգ օվկիանոսների արևելյան ավերը սղողվում են տաք հոսանքներով:

Յաճախ լայնություններում տարեկան իզոթերմների ընթացքը հակառակ պատկեր ունի՝ օվկիանոսներում մոտենում են հասարակածին, ցամաքների վրա հեռանում նրանից. այստեղ վճռական դեր է կատարում ցամաքների ուժեղ տաքացումը, իսկ օվկիանոսների արևելյան ավերը ցրտեցվում են շնորհիվ սառը հոսանքների:

Հուլիսյան իզոթերմների ընթացքը հյուս. և հարավային կիսագնդերում տարբեր է, քանի որ հարավային կիսագնդում հունիսին ձմեռ է (գծ. 3): Հարավային կիսագնդում նրանց ընթացքը նման է տարեկան իզոթերմներին, իսկ հարավային արևմտադարձը մոտավորապես փոխարինում է 45° զուգահեռին: Հյուս-




Р. 3. 3. Isotherms in the North Pacific

սիսային կիսազնչում իզոթերմերը օվկիանոսների վրա ձգտում են զեպլի հասարակած, իսկ ցամաքների վրա զեպլի բևեռ: Ցամաքների անբևեռյալ ամերին համեմտելով նրանք շեղակի իջնում են հարավ. այստեղ արտահայտվում է օվկիանոսների արևմտյան ամերիի ցուրտ հոսանքների ազդեցութունը: $+20^{\circ}$ -ի իզոթերմը, որ Ատլանտյան օվկիանոսի վրայով ընթանում է մոտավորապես 40° հյուս. լայնության ուղղությամբ, Արևմտյան Եվրոպայում հասնում է 50° զուգահեռին, իսկ Արևելյան Սիբիրում՝ 60° զուգահեռին (Ալբանի ավազանը) և կրկին իջնում զեպլի 40° զուգահեռը (Հյուս. Կորեա), այսպիսով Եվրոպայում սուբարկտար գոտում ընկած ցամաքային վայրերը հուլիսին նույնպիսի ջերմաստիճան ունեն, ինչպիսին հատուկ է Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների սուբարկտիկ լայնություններին:

Հուլիսյան ամենաբարձր միջին ջերմաստիճանները (30° և ավելի) ընկնում են ոչ թե հասարակածի, այլ հյուս. լայնության 14° և 40° միջև Մահարայի, Արաբիայի, Իրանի, Թուրանի և Կալիֆորնիայի անապատներում (Մասսաուսում 35° , Մահարայում $36,0^{\circ}$): Ծայրահեղ մաքսիմումը նկատված է Կալիֆորնիայում (Մահլան հովիտ)՝ $56,7^{\circ}$, այստեղ հուլիսին 29 օր ջերմաստիճանը բարձրանում է 50° և ավելի: Տրիպոլիում 1922 թ. սեպտեմբերի 13-ին ջերմաստիճանը հասել է $58,0^{\circ}$ -ի (իհարկե սովորում): Հարավային կիսազնչում հուլիսյան ջերմաստիճանները հար. լայնության 55° -ից հարավ արդեն դառնում են բացասական. Անտարկտիդայում $78^{\circ}38'$ հար. լայնության տակ օդոստոսի միջին ջերմաստիճանը կազմում է $-44,5^{\circ}$, մաքսիմումը՝ $-24,5^{\circ}$, մինիմումը՝ $-58,5^{\circ}$:

Հունվարյան իզոթերմերը (դժ. 4) հյուսիսային կիսազնչի միջին և բարձր լայնություններում ցամաքների վրա շեղակի իջնում են հարավ, իսկ օվկիանոսների վրա, հատկապես նրանց արևելյան ամերին, բարձրանում հյուսիս. այդ բացատրվում է օվկիանոսների համեմատական տաքությամբ, մինչդեռ ցամաքները խիստ ցրտացած են:

0° -ի իզոթերմը Հյուս. Ամերիկայում նշվում է հյուս. լայն. 35° -ի վրա (Նյու-Մեքսիկո շտատ), ապա ընթանալով զեպլի հյուսիս-արևելք, Նյու-Յորքից հարավ հատում է 40° զուգահեռը, Ատլանտյան օվկիանոսի արևելյան ամերին (Նորվեգիա) հասնում հյուս. լայն. 72° -ին, այստեղից, Սկանդինավյան թերակղզու ամերիկ կարուկ իջնում է հարավ. Եվրոպայում նա իջնում է մին-



ՊՆ 4. Համաշխարհային էպիթերմիկ

չև Բալիանյան Բերակղզի (Ռոդոսյան լեռներ) 43° հս. լ., Ասիայում մինչև 34° հս. լ. (Պուան-Նե գետի ստորին հոսանքը) և բարձրանալով Խաղաղ օվկիանոսի վրա դեպի հյուսիս-արևելք, Ալյասկայի ափերի մոտ հասնում է 60° հս. լ.: Հյուս. բևեռային շրջանի վրա նորվեգիայում հունվարյան միջինը +1,0° է, իսկ նույն լայնություն վրա արևելյան Սիրիերում —48,0°: Այսպիսով հունվարյան իզոթերմերը խիստ շեղվում են զուգահեռներից. ցածր լայնություններում շեղումը փոքրանում է:

Հունվարյան ամենաբարձր ջերմաստիճանները, բնականաբար, հարավային կիսագնդում են* (Արևմտյան Ալյասկայիայում 32,0°-ից էլ բարձր), ամենացածրը՝ Արևելյան Սիրիերում. Յակուտսկում հունվ. միջինը —43,3° է, Վերխոյանսկում —50,5°, բացարձակ մինիմումը այստեղ հասնում է մինչև —69,8°-ի, սակայն երկրագնդի ցրտի բևեռն է. բնորոշակ դոդաձորություն մեջ կուտակվող սառը և ծանր օդը 5—6 ամիս պահպանում է ցածր ջերմաստիճանները: Մի այլ ցրտի կենտրոն նշվում է Վերխոյանսկից հարավ-արևելք, Օյակոնի շրջանում, երրորդ կենտրոնն է Գրենլանդիան (հունվ. միջինը —45°):

Հունվարյան իզոթերմերի բաշխումը, հատկապես Եվրոպայում, որտեղ նրանք համարյա միջօրեական ուղղությու են ունեն, խիստ խախտում է ջերմության կախումը աշխարհագրական լայնությունից կամ սույլար կլիմայից:

Ջերմաստիճանների փոփոխությունն ու ամպիտուդները

Պրկա ընթացքում ջերմաստիճանները որոշ մոմենտին հասնում են մաքսիմումի, այնուհետև նվազում և մինիմումի են հասնում: Նույնը կատարվում է նաև ջերմության տարեկան ընթացքի մեջ: Մաքսիմումները հաստատվում են արևի ամենաբարձր դիրքի ժամանակ, ավելի ճիշտ՝ նրանից 1—2 ժամ հետո, քանի որ այդ ժամանակ է միայն երկրի արեգակից ստացած ջերմության քանակը հավասարվում է երկրի կողմից մթնոլորտին արվող ջերմության քանակին: Պարզաբանենք հետևյալ սխեմատիկ օրինակով. ենթադրենք, թե ժամի 11—12-ին ուղիայից կազմում է 40 փոքր կալորիա, որից 30 փ. կալ. ծախս-

* Իզոթերմերի ընթացքն այստեղ նման է տարեկանին, բայց ցամաքների արևմտյան ափերի մոտ իզոթերմերի շեղումն ավելի խիստ է, շնորհիվ սառը հոսանքների ցրտեցվող օվկիանոսների և ուժեղ ասթացվող ցամաքների ջերմային տարբերություն:

վում է երկրի մակերեսը տաքացնելու վրա, իսկ 10 փ. կալ. ճա-
 ռադայթվում է մթնոլորտի մեջ հաջորդ ժամին՝ 12—13-ին ու-
 ղիացիան թուլանում է, կազմելով 30 փ. կալ., որից հողի մեջ
 մնում է 20 փ. կալ. և ճառագայթվում 10 փ. կալ., ժամի 13—14-ին
 ռադիացիան 20 փ. կալ., որից հողի մեջ մնում է 10 և ծախս-
 վում 10 փ. կալ., ժամի 14—15-ին արդեն ռադիացիան կկազմի
 ընդամենը 10 փ. կալ., որը և ամբողջովին արվում է մթնոլոր-
 տին, հետևաբար ջերմության մուտքն ու ելքը հավասար են.
 սա հողի մեջ ջերմության ամենամեծ կուտակման մոմենտն է,
 որից հետո ռադիացիան այլևս չի ծածկում հողի ջերմության
 ծախքը, եթե, ասենք, ժամի 16-ին ստացվում է 5 փ. կալ., ա-
 պա դրան հողն իր կուտակած ջերմությանից ավելացնում է ևս
 5 փ. կալ. և ճառագայթում 10 փ. կալ., հետևաբար սկսում է
 սառչել: Ջերմաստիճանի միխումումը կլինի, այսպիսով, արևա-
 ծագից առաջ, քանի որ մինչև արևածագի մոմենտը, ամբողջ
 գիշերվա ընթացքում երկիրը ծախսում է ջերմությունը մուտքի
 բացառապես ջան պայմաններում: Նույն օրինաչափությամբ էլ
 տարվա ընթացքում ջերմաստիճանի մաքսիմումը ընկնում է ոչ
 թե հունիս ամսին, երբ արևը հորիզոնում ամենաբարձր գիր-
 քում է գտնվում (հյուս. կիսագնդում արևադարձից մինչև բե-
 վեռ), այլ հուլիս ամսին, մինիմումը՝ հոբնվարին: Օրական (կամ
 տարեկան) մաքսիմալ և մինիմալ ջերմաստիճանները տարբե-
 րությունը կոչվում է ամպլիտուդ: Եթե, օրինակ, ամառվա ու-
 բե է օրվա ընթացքում երևանում մաքսիմալ ջերմաստիճանը
 հասնում է 27,0⁰-ի, մինիմալը 13,0⁰-ի, ապա ամպլիտուդը կլինի
 14,0⁰. ձմռանը հնարավոր է նման պայմաններ — մաքսիմումը՝
 —3,5⁰, մինիմումը՝ —21,0⁰, ամպլիտուդը 17,5⁰, այն դեպքում,
 եթե մաքսիմումը գրական նշան ունենա, ասենք՝ +2,5⁰ ամպլի-
 տուդը կկազմի 23,5⁰:

Սրական ամպլիտուդների մեծությունը կախված է մի շարք
 հանգամանքներից.

ա) ա շ լ ա ր հ ո գ ր ա կ ա ն լ ա յ ն ու թ յ ու ն ի ց . ցածր
 լայնություններում, ուր արեդալի կեսօրյա գիրքն ամենից
 բարձրն է, ցերեկվա և գիշերվա ջերմաստիճանների տարբե-
 րությունը հասնում է մեծ չափերի (20—25⁰), եթե մասնավաճ
 դիրտողության վայրը ծովից հեռու է, բուսականությունից զուրկ,
 նվաղ ամպամածությամբ. բուն հասարակածային գոտին այդ
 տեսակետից ավելի նպաստավոր գրեթե մեջ է, քանի որ ա-
 ռատ խոնավությունը, բուսականությունը, ամպամածությունը

արդեւք են հանդիսանում ցերեկվա ստացած ջերմության ծախսը վերանայն: Մերձարեւադարձային անապատների դոռին, ընդհակառակը, աչքի է բնկնում օրական մեծ ամպլիտուդներով. Սահարայում նկատված է 20—25° և ավելի, եղել են դեպքեր, երբ ցերեկվա սոսկալի շոգից հետո, գիշերը ջերմաստիճանը 0°-ից ցածր է իջել և ջուրը սառել է: հյուսիսային Սահարայում ցերեկվա 30° շոգից հետո հաճախ գիշերը ջերմաստիճանն ընկնում է մինչև —6—8°: Բարձր լայնություններում օրական ամպլիտուդը նվազում է. րևուստային երկրներում, ուր ցերեկվա ջերմությունն աննշան չափով է ավելի գիշերվանից, օրական ամպլիտուդները փոքր են: Գարնան օրերի ամպլիտուդները այստեղ ավելի մեծ են, քան ձմեռվա և ամառվա օրերին, քանի որ ձմեռնան գիշերները ինչպիս և ամառվա ցերեկները մեծ անողություն ունեն և հեռեւորար ջերմաստիճանների փոքր ասարեբություն:

բ) Տարվա եղանակից. քանի որ ամառը արեգակնավելի բարձր դիրքում գտնվելով ցերեկվա ընթացքում շատ է տաքացնում, ապա այդ եղանակին օրական ամպլիտուդներն ավելի մեծ են, քան ձմռանը: Միջին լայնություններում ձմռանը օրական ամպլիտուդը 2—3° է, ամռանը՝ 7—10°:

գ) Երկրի մակերեսի բնույթից. օվկիանոսների վրա օրական ամպլիտուդը կազմում է 1—1,5°, ասիաստաններում և անապատներում՝ 15—20° (առանձին օրերին 30°), հարուստ բուսականությամբ ծածկված վայրերում օրական ամպլիտուդը փոքր է, քանի որ բուսականությունը ցերեկը թույլ չի տալիս, որ հողն ուժեղ տաքանա, ծախսելով ջերմության մի մասը գոլորշիացման վրա, իսկ գիշերը թույլ չի տալիս, որ հողը շատ սառչի:

դ) Ռելեֆի բնույթից. ռելեֆի ուղղիկ մասերը (բլուրներ, լեռներ, լանջեր), որոնք ցերեկը համեմատաբար քիչ են տաքանում, օրական փոքր ամպլիտուդներ ունեն, գոյգովոր մասերը (հովիտ, գոգավորություն)՝ մեծ:

ե) Օդի խտությունից, խոնավությունից, ամպամածությունից. քանի որ այդ հատկությունների առկայության դեպքում օդը ցերեկվա ընթացքում կլանում է բավականին ջերմություն և չի թողնում, որ հողն ուժեղ տաքանա, իսկ գիշերվա ընթացքում արդեւք է հանդիսանում հողի խիստ սառչելուն:

Պենտրոնական Սահայի բարձրադիր սարահարթերում, որտեղ
իշխում է չոր, նոսր օդ, նվազ ամպամածությամբ, նկատված
են մինչև 30° (Տիրեթ), իսկ Հյուս. Ամերիկայում Կոլորադոյի
և Արիզոնայի սարահարթերում մինչև 40° օրական ամպլիտուդ-
ներ:

Տարեկան ամպլիտուդները հասարակածից դեպի բևեռ ոչ
թե նվազում, այլ ընդհակառակը, ավելանում են: Միա-
ժամանակ, երկրի մակերեսի բնույթը (օվկիանոս, բուսական
ծածկ, լեռն ապարներ) տարեկան ամպլիտուդների չափի վրա
ևս նույն ձևով է ազդում, ինչ ձևով օրական ամպլիտուդների
վրա: Նույնը կարելի է ասել նաև ուղիքի բնույթի, օդի վիճա-
կի ազդեցության մասին: Մահարան և Արևելյան Սիրիերը աչքի
են ընկնում երկրագնդի վրա ամենամեծ տարեկան ամպլի-
տուդներով: Մահարայում դրա պատճառն է լայնատարած ցամա-
քը, իսկ Սիրիերում դրա հետ միասին նաև բարձր լայնությունը:
Ամենափոքր տարեկան ամպլիտուդները նկատվում են հասա-
րակածի վրա, քանի որ այնտեղ արևի դիրքը միշտ մոտ է դե-
նիթին: Թղի Չերմաստիճանի տարեկան ընթացքը այստեղ եր-
կու մաքսիմում (գարնանային և աշնանային գիշերահավասարից
հետո) և երկու մինիմում (ամառային և ձմեռային արևադա-
ղարից հետո) ունի:

Արևադարձային գոտում, ուր Չերմաստիճանի մաքսիմումը
հաջորդում է ամառային, իսկ մինիմումը՝ ձմեռային արևա-
դադարին, տարեկան ամպլիտուդը մեծ է, քան հասարակածի
վրա, բայց ընդհանրապես փոքր է՝ ծովափերին 5°, ցամաքային
վայրերում 20°: Բարեխառն գոտում* տարեկան ամպլի-
տուդները մեծ են և աճում են ըստ լայնության
և մանավանդ ըստ արևելյան երկայնության, այսինքն
օվկիանոսային ազդեցություններից հեռանալուն համաչափ: Բնո-
րոշ են հյուս. լայն. 52° վրա ընկած հեռեկալ քաղաքների տա-
րեկան ամպլիտուդները (ըստ Օբոլենսկու):

* Չերմության ընթացքի մեծ տարբերությունների պատճառով բա-
րեխառն գոտին բաժանում են երեք գոնայի՝ մերձարևադարձային (սուբար-
պիկ), բուն բարեխառն և մերձ-բևեռային (սուբպոլյար):

	Ամենատար ամսվա t ⁰	Ամենացուրտ ամսվա t ⁰	Տարեկան ⁵ միջին t ⁰	Տարեկան ամսվիտուդը
Չալենսիա (Իսլանդիա)	15,2	7,1	10,5	8,1 ⁰
Հաննովեր (Գերմանիա)	17,3	0,4	8,4	16,9 ⁰
Կուբսկ (ՍՍՌՄ)	19,4	-9,3	5,2	23,7 ⁰
Չկալով »	22,0	-15,4	3,8	37,4 ⁰
Իրկուտսկ »	18,4	-20,8	-0,4	39,2 ⁰
Նեբչինսկ »	18,5	-29,7	-8,7	48,2 ⁰
Պետրոպավլովսկ (Կամչատկայի)	11,9	-11,2	0,2	23,1 ⁰

Սրանցից հյուսիս ընկած քաղաքների ամսվիտուդները ա-
րևմուտքից արևելք փոփոխվում են հետևյալ կերպ.

	Սշխ. լայնութ.	Ամսվիտուդը
Բերգեն (Նորվեգիա)	60,2 ⁰	13,2 ⁰
Սառկհոլմ (Շվեդիա)	59,3	19,9
Լենինգրադ (ՍՍՌՄ)	59,9	27,0
Մոսկովա »	55,8	29,9
Տորոնտո »	58,2	38,1
Մեխիսեյսկ »	58,4	42,8
Յակուտսկ »	62,0	62,3
Վերխոյանսկ »	67,6	65,9

Բերված ավյալները ցույց են տալիս, որ դեպի արևելք
ամսվիտուդներն աճում են, ըստ որում ծովամերձ վայրերը փոքր
ամսվիտուդի հետ միասին բավականին բարձր տարեկան մի-
ջին ջերմաստիճաններ ունեն, դեպի արևելք ամառային ջերմաս-
տիճաններն աճում են, բայց ոչ այնչափով, ինչ չափով նվա-
զում են ձմեռվա ջերմաստիճանները, զրա հետևանքով միև-
նույն լայնության վրա դեպի արևելք շարժվելիս տարեկան ջեր-
մաստիճանները նվազում են:

Հյուս. Ամերիկայում նույն երևույթները նշվում են արե-
վելքից դեպի արևմուտք շարժվելիս. մոտավորապես 40° զուգա-
հեռի վրա ընկած քաղաքների տարեկան ամպլիտուդները հե-
տևյալ չափերն ունեն.

	Հուլիսյան ջերմաստիճանը	Հունվարյան ջերմաստիճանը	Ամպլիտուդը
Ֆիլադելֆիայի	24,3°	0,2°	24,1°
Պիտսբուրգի	23,7	0,9	24,6
Ինդիանոպոլիսի	24,2	2,0	26,2
Օմախայի	24,9	5,8	30,7

Սաղազօվկիանոսյան օրին ընկած վայրերի ամպլիտուդը
չնչին է և զիջում է անգամ Իսլանդիայում արձանադրված ցածր
ամպլիտուդներին. Սան-Ֆրանցիսկոյի (հյուս. լ. $37^{\circ} 48'$) ամենա-
տաք ամսվա ջերմաստիճանը (IX) $15,3^{\circ}$, ամենացուրտ ամսինը՝
 $9,7^{\circ}$ է, տարեկան ամպլիտուդը՝ $5,6^{\circ}$:

Ավելի մեծ ամպլիտուդները տարածվում են Ս.ՄՆ-ի հյուսի-
սային նահանգներում, կանադայում (հյուս. արևմուտքում մինչև
 53°) և Ալյասկայում:

Եթե այժմ գծերով միացնենք մաքսիմալ ամպլիտուդների
կենտրոնները, ապա կստացվի առանցք, որը եվրասիայում ըն-
թանում է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք, իսկ Հյուս. Ամե-
րիկայում հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք, այսինքն երկու
դեպքում էլ համընկնում է ցամաքի ամենամեծ տարածման
ուղղութայն հետ: Համադրելով ամպլիտուդների արժեքները տե-
ղումների քանակների հետ, կնկատենք, որ ամենուրեք նրանք
հակադարձ հարաբերութայն մեջ են գտնվում. հետևաբար ամպ-
լիտուդները կլիմայի կոնտինենտալութայն ցայտուն չափա-
նիշն են հանդիսանում: Այս տեսակետից ավելի կոնտինենտալ
կարող ենք համարել հյուսիսային կիսագնդի կլիման ամբող-
ջությամբ առած, որի ամպլիտուդան կազմում է $14,5^{\circ}$, մինչդեռ
հարավային կիսագնդում ընդամենը $7,0^{\circ}$, որ լիովին համապատաս-
խանում է ջրային տարերքի ավելի լայն գերակշռութայնը այդ
կիսագնդում: Հյուսիսային կիսագնդում են նկատված նաև երկ-

բազնդի վրա երբևէ տեղի ունեցած ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանների դիպքերը, «Մահվան հովտում» (Կալիֆորնիայի նահանգ) հուլիսին ջերմաչափի անդիկը բարձրացել է մինչև 56,7° (1913 թ.), իսկ Վերխոյանսկում, հունվարին սպիրտային ջերմաչափը ցույց է տվել — 69,8° (1892 թ.). այս ծայրահեղ մեծությունների տարբերությունը (ամպլիտուդը) կազմում է 126,5°:


Ջերմաստիճանի ամպլիտուդներն ուսումնասիրելիս, ուրեմն, պետք է հաշվի առնել ոչ միայն միջին ջերմաստիճանի տարբերությունները, այլև նկատված ծայրահեղ մաքսիմումների և մինիմումների արժեքները:

Ֆրանսիայի բաշխման անոմալիաները և երանց սխառությունները

Իդոթերմերի ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ջերմություն իրական բաշխումը երկրագնդի վրա շատ անհարմար է համապատասխանում աշխ. լայնությունների համար ստացված միջին (կամ նորմալ) ավալներին, որոնք բերված են 22 էջի աղյուսակում: Օրինակ, աղյուսակում արված է, որ 50° հյուս. լայնության ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանն է 18,1°, ամենացուրտը՝ — 7,0°, տարեկանը՝ 5,8°. այդ լայնության վրա գտնվող Խարկովի ամենատաք ամսվա ջերմաստիճանն է 20,6°, ամենացուրտը՝ — 7,7°, տարեկանը՝ 6,7°. էլ ավելի մեծ ջեղում ցուցաբերում է Օլեկմինսկի (հս. լ. 68° 22') ջերմային սեփիմը՝ տարեկան — 7,6°, ամենատաք ամսինը 18,9°, ամենացուրտ ամսինը — 35,4° (մինչդեռ ըստ աղյուսակի՝ 60° հս. լ. տարեկան միջինն է 1,0°, ամենատաք ամսվանը 14,0°, ամենացուրտ ամս. — 15,8°):

Նորմալից կատարվող այս շեղումները կոչվում են անոմալիաներ: Միևնույն չափի անոմալիաները քարտեզի վրա միացնում են գծերով, որոնք կոչվում են իզոանոմալներ: Եթե շեղումը նորմալից բարձր է, անոմալիան դրական է, եթե ցածր է՝ բացասական:

Հունվարյան իզոանոմալների փարսեզի վրա ամենամեծ բացասական անոմալիան ընկնում է Կենտրոնական Մախյում, Սիրիերում (Յակուտիայում — 20—24°), ինչպես և Հյուս. Ամերիկայում: Դրական մեծ անոմալիա է հաստատվում Ատլանտյան



Палеоарктический
 фаунальный
 район

Палеоарктический
 фаунальный
 район

150° 140° 130° 120° 110° 100° 90° 80° 70° 60° 50° 40° 30° 20° 10° 0° 10° 20° 30° 40° 50° 60° 70° 80° 90°

150° 140° 130° 120° 110° 100° 90° 80° 70° 60° 50° 40° 30° 20° 10° 0° 10° 20° 30° 40° 50° 60° 70° 80° 90°

150° 140° 130° 120° 110° 100° 90° 80° 70° 60° 50° 40° 30° 20° 10° 0° 10° 20° 30° 40° 50° 60° 70° 80° 90°

150° 140° 130° 120° 110° 100° 90° 80° 70° 60° 50° 40° 30° 20° 10° 0° 10° 20° 30° 40° 50° 60° 70° 80° 90°

(մինչև 20°) և Սաղաղ օվկիանոսների հյուսիսում, ինչպես և Եվրոպայի մեծ մասում. հարավային կիսագնդում օվկիանոսների հարավային մասում նկատվում է բացասական մեծ անոմալիա հատկապես Անտարկտիդայի շուրջը, որտեղ այդ ժամանակ սառույցները հալչելով մեծ ջերմութուն են կլանում: Հուլիսին հյուս. կիսագնդում ամենամեծ անոմալիաները Մահարայում և Արաբիայում, Իրանում և Տիբեթում են՝ +8°, օվկիանոսներում՝ բացասական, հատկապես արևմտյան մասերում, սառը հոսանքների պատճառով: Հարավային կիսագնդում ձմեռ է, բայց ցամաքները շատ հարավ չեն իջնում, որի հետևանքով բացասական անոմալիաները քիչ են (Ավստրալիայում՝ -4°) և տարածված են արևմտյան ափերին, ցուրտ հոսանքների ազդեցութայն շնորհիվ:

Տարեկան ամենամեծ անոմալիաները (+12°) Ատլանտյան օվկիանոսի հյուսիսում և Արևմտյան Եվրոպայի վրա են (գոլֆշտրոմի ազդեցութունը): Ամերիկայի արևելքում անոմալիան բացասական է (մինչև -4°) շնորհիվ լարբադթրյան սառը հոսանքի: Ամերիկայի արևմտյան ափից սառը հոսանքի ազդեցութունը չի թափանցում ցամաքի ներսը, որի հետևանքով դրական անոմալիաները սահմանափակվում են առափնյա նեղ շերտով, հա. լ. 45°-ից հյուսիս:

Երկրի ջերմային բալանսը

Մենք այժմ մոտենում ենք այն հարցին, թե ինչի է հավասար երկրագնդի ստացած և ծախսած ջերմութայն հարաբերութունը: Ընդունված է հաշվել, որ ինչքան երկրագունդն արեւից ջերմութուն է ստանում, նույնքան էլ տալիս է միջովորակային տարածութայն:

Արեւից ստացվող էներգիայի 43 տոկոսը անդրադարձվում է, 14 տոկոսը կլանվում է ատմոսֆերայում, 43 տոկոսը հասնում երկրի մակերեսին:

Երկիրն ունի սեփական ջերմութուն՝ 288°: Սրանից նա ճառագայթում է արեւից ստացածի 115 տոկոսի չափով, որից 11 տոկոսը անցնում է միջմոլորակային տարածութուն, 104 տոկոսը կլանվում ատմոսֆերայի կողմից. վերջինս ստանում է նաև հավելյալ 16 տոկոս գոլորշիների խտացման և տեղումներ գոյանալու շնորհիվ:

Այսպիսով, ատմոսֆերան ստանում է $14 + 104 + 16 = 134$ տոկոս, որից 88 տոկոսը տալիս է երկրին, 46 տոկոսը միջմոլորակային տարածութեան:

Երկրին ստանում է $43 + 88 = 131$ տոկոս, տալիս է $115 + 16 = 131$ տոկոս:

Ատմոսֆերայի վերին սահմանում ստացվում է 100 տոկոս, անդրադարձվում է գեպի միջմոլորակային տարածութեան $43 + 11 + 46 = 100$ տոկոս:

Այսպիսով, երկրագնդի ջերմային բալանսը հավասարակշռված է:

Փորձեր են կատարված հաշվելու երկրի սարբեր վայրերում (Օնգստերմ, Սափինով) և նույնիսկ ամբողջ երկրագնդի վրա (Սիմպսոն) ջերմութեան մուտքի և ծախսի բացարձակ արժեքները, այսպես օրինակ, ըստ գուգահեռների յուրաքանչյուր քառ. սմ. մակերեսը պարեկան միջին հաշվով մեկ բողբոս ստանում և ծախսում է ջերմութեան հետևյալ քանակութեանները (կալորիաներով).

	0°	10°	20°	30°	40°	50°	60°	70°	80°	90°
Ջերմութեան մուտքը	0,34	0,33	0,32	0,29	0,27	0,23	0,19	0,16	0,14	0,11
» ծախսումը	0,27	0,28	0,28	0,28	0,28	0,28	0,27	0,26	0,25	0,25
Բալանսը	0,07	-0,05	-0,04	-0,01	-0,01	-0,05	-0,08	-0,10	-0,11	-0,14

Այսպիսով բեկոր հասարակածից $2\frac{1}{2}$ անգամ պակաս է ջերմութեան ստանում, բայց ծախսում է համարյա նույնքան, հետևաբար պրոգրեսիվ կերպով ցրտում է, որպիսի երևույթ նկատում ենք սկսած $35-40^\circ$ գուգահեռներից: Մյուս կողմից, ցածր լայնութեանների դրական բալանսները իրենց մեծությամբ դիջում են բարձր լայնութեանների բացասական բալանսներին. այս հանգամանքները ստեղծում են կարող ապացուցել, որ ընդհանրապես երկրագունդը սառչում է. պետք է հաշվի առնել, որ դրական բալանս ունեցող ցածր լայնութեանները լռում են երկրագնդի մակերեսի մեծ մասը, և այնտեղ կուտակված ջերմութեանը հավասարակշռում է բարձր լայնութեանների ջերմութեան կորուստը:

Ստոկհոլմում կատարված հաշվառումները ցույց են տվել, որ Ֆրեդրի մակերեսը այնուհետև Չեքոսլովակիայի և շահում ապրիլից սեպտեմբեր, իսկ հաջորդ վեց ամիսներում՝ հոկտեմբերից մարտ, վորուստ է ունենում: Յմենամեծ չափով մուտք է կատարվում մայիս ամսին, երբ յուրաքանչյուր քառ. սմ. հորիզոնական մակերեսն ստանում է 7.505 կալորիա Չեքոսլովակիայի, ամենամեծ կորուստը սեզի է ունենում հունվարին՝ 3.140 կալորիա: Տարեկան մուտքը 73.385 կալորիա է կազմում, ծախսը՝ 53.240 կալորիա: Հետևապես 20.145 կալորիա կամ ստացածի 27 տոկոսը մնում է երկրի մակերեսին և ծախսվում օդի տաքացման վրա՝ թե անմիջական Չեքոսլովակիայի մասն և թե տեղումների գոլորշիացման միջոցով: Գոլորշիացման վրա ծախսվում է 23.400 կալորիա, պակասող 3.255 կալորիան երկրի մակերեսը ետ է ստանում մթնոլորտից: Այսպիսով, եթե ցածր լայնություններում մթնոլորտը երկրի մակերեսից Չեքոսլովակիայի է ստանում, ապա բարձր լայնություններում էլ, ընդհանրապես, նա ինքն է երկրին տալիս համապատասխան քանակությամբ Չեքոսլովակիայի:

3. ԱՏՄՈՍՖԵՐԱՅԻ ՃՆՇՈՒՄԸ ԵՎ ՔԱՄԻՆԵՐ

Նորմալ ննշում և բարոմետրիկ աստիճան

Ատմոսֆերայի հզոր շերտը, բնականաբար, կշիռ ունի և այդ պատճառով ճնշում է երկրի վրա: Ճնշման ուժն ամենից մեծ է ծովի մակերեսույթին, որովհետև նրա վրա ընկած է ատմոսֆերան իր ամբողջ բարձրությունը, մինչդեռ ցամաքի վրա, ասենք 7,5 կմ. բարձրություն ունեցող լեռան դագաթին, ատմոսֆերայի բարձրությունը կրճատվում է 7,5 կիլոմետրով, հետևապես և ճնշումը պակասում: Ծովի մակերեսույթի յուրաքանչյուր քառ. մետրի վրա ատմոսֆերայի ճնշումը կազմում է մոտ 10,3 տոննա, իսկ աշխ. լայնություն 45° վրա, Չեքոսլովակիայի 0°-ի դեպքում, 1 խոր. մետր չոր օդի կշիռը մոտ 1,3 կիլոգրամ է: Մյուս կողմից կշիռ ունեցող օդի բարձրությունը հասնում է 7.991 մետրի (համոզեն ատմոսֆերայի բարձրություն):

Ճնշման ուժը չափվում է սնդկային բարոմետրերով և անբորիզներով: Նորմալ պայմաններում, այսինքն ծովի մակերեսույթին, 45° լայնություն վրա, չոր օդի 0° Չեքոսլովակիայի դեպքում բարոմետրի սնդիկը 760 մմ. բարձրություն սյուն է կազ-

մում (սյան մակերեսը 1 քառ. սմ.): Ծովի մակերևույթից վեր բարձրանալիս սնդիկի սյան բարձրութունը նվազում է, նույն հետևանքն է ստացվում, երբ օդի ջերմութունն է բարձրանում: Երբ օդի ջերմաստիճանն իջնում է կամ նրա մեջ ավելանում են ջրային գոլորշիներ, սնդիկի սյունը բարձրանում է: Ծովի մակերևույթից վեր բարձրանալիս ատմոսֆերայի ճնշումը փոփոխվում է հետևյալ կերպ.

Բարձրութունը ծովի մակերևույթից կմ.	0	5	11	15	20	30	40	50	100	140
Ատմոսֆերայի ճնշումը միլիմետրերով	760,0	405,0	168,0	89,6	41,0	8,6	1,84	0,403	0,067	0,040

Վերջերս ճնշումը չափելու նոր միավոր է մուծվում դիտության մեջ՝ բարը, որը համապատասխանում է 1 քառ. սմ. վրա 1 միլ. դին ճնշման կամ 750,1 մմ. սնդկի սյան: Բարի մեկ հազարերորդ մասը կոչվում է միլիբար: Նորմալ ճնշումը (760 մմ.) միլիբարերի վերածելով կառանանք 1000: $750 \times 760 = 1013,25$ միլիբար:

Վերը բերված աղյուսակից երևում է, որ բարձրանալիս ճնշումը նվազում է անհամաչափ կերպով. 0—5 կմ. բարձրության վրա նվազումը կազմում է յուրաքանչյուր 14 մետրին 1 մմ., 5—11 կմ. բարձրության շերտում՝ 25,3 մետրին, 15—20 կմ. շերտում մոտ 100 մետրին 1 մմ. և այլն: Ատմոսֆերայի ստորին շերտի համար ընդունվում է, որ ճնշումը 1 մմ. նվազում է 10,5 մետր բարձրանալիս: Այս տարածութունը կոչվում է բարոմետրիկ աստիճան:

Բարոմետրիկ աստիճանն իմանալով կարելի է որոշել բարձրութունները թե ցամաքի վրա և թե ազատ ատմոսֆերայում: Ենթադրենք, ծովի մակերևույթին բարոմետրը ցույց է տալիս 760 մմ. ճնշում, իսկ ծովափին որևէ լեռ բարձրանալով նկատում ենք, որ ճնշումն իջնում է 640 մմ., հետևաբար լեռան բարձրութունը կլինի $760 - 640 \times 10,5 = 1260$ մետր:

Ճնշման բաշխումը երկազգեղի վրա եվ ֆամիներ:

Ջերմության բաշխումն ուսումնասիրելիս մենք տեսանք, որ ցամաքն ու ծովը տարբեր չափերով են տաքանում: Ամառը

ցամաքն ուժեղ տաքանում է, ջերմությունը հաղորդվում է օդին, որը թեթևանում և բարձրանում է վեր, այնտեղից էլ հոսում գեղցի հարևան ծովի մակերևույթի վրա կղած օդը. այս վերջինս վերևում ավելի նոսր է, քանի որ ծովի մակերևույթի սառնու-թյան հետևանքով ներքևի օդը վեր չի բարձրանում: Քանի որ ջերմության բաշխումը հիմնականում կատարվում է աշխարհագրական լայնությունների համեմատ, ապա և ճնշման բաշխումն էլ մոտավորապես նույն օրինաչափությամբ է կենթակա, սակայն եթե ջերմությունը հասարակածի և նրան հարակից շրջաններում մաքսիմումի է հասնում, ճնշումն, ընդհակառակը, հասնում է մի-նիմումի, քանի որ այդտեղ իրականանում է վերը հիշած պրո-ցեսը: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ճնշման փոփոխու-թյունները ըստ աշխ. լայնության (միլիմետրերով).

Ատմոսֆերայի ճնշումը	Հյուս. կիսագունդ			Հար. կիսագունդ		
	հունվար	հուլիս	տարի	հունվար	հուլիս	տարի
80	760,3	759,5	760,8	751	752	751
70	760,1	757,7	759,5	747	750	747
60	760,9	757,2	759,5	742	746	744,4
50	762,8	758,3	761,0	752,3	752,5	752,4
40	764,5	760,4	762,5	760,9	761,5	760,7
30	764,6	759,5	762,1	762,0	765,4	763,9
20	761,9	758,4	759,9	758,9	763,7	761,7
10	759,2	758,0	758,5	757,0	761,3	759,3
0	757,4	759,3	758,1			

Դիտելով ճնշման տարեկան բաշխումը հյուսիսային կիսագուն-դում, նկատում ենք, որ մաքսիմումն ընկնում է 30,40⁰ վրա: Սա առաջանում է գինամիկական պատճառներից: Հասարակածի վրա տաքանալով, օդը բարձրանում է վեր (1,5—2,5 կմ.) և քա-նի որ, վերը նշված պատճառով, միևնույն բարձրության վրա թույլ ջերմացման վայրում ճնշումը ցածր է, ապա թեքվում դե-պի հյուսիսային և հարավային կիսագնդերի բարձր լայնություն-

ները. Ընթացքի ժամանակ, երկրի պտույտի ազդեցութեան տակ, նա հյուսիսային կիսագնդում թեքվում է դեպի արև, իսկ հարավային կիսագնդում դեպի ձախ:

Հասարակածային օդի այդ տեղափոխվող զանգվածները անտիպասատ են կոչվում, նրանք աստիճանաբար շեղվում են իրենց միջօրեական ուղղութիւնից և 30—35° լայնութիւնների վրա (երկու կիսագնդերում էլ) ընդունում են զուգահեռի ուղղութիւն. այդ սլոցները տեղի է ունենում անընդհատ կերպով, որի հետևանքով նշված լայնութիւններում կուտակվում են օդի նորանոր զանգվածներ, որոնք սեղմվում, խտանում են և տառաջանում մաքսիմալ ճնշման անդրադարձիկական գոտի երկրի մակերեսի վրա: Աղյուսակից երևում է, որ երկրորդ մաքսիմումը, որ ավելի լավ արտահայտված է հյուսիսային կիսագնդում, գոյութիւն ունի բնիկի մարդկում: Մրա պատճառը դեռ պարզված չէ, բայց պետք է ի նկատի ունենալ, որ անդրադարձիկական մաքսիմումի գոտու օդի մի մասն էլ բարձր շերտերով հոսում է դեպի բնիկ: Ծնշման միւսիմումի (դիսլրեսիայի) մեկական գոտի էլ ձգված է մոտավորապես բեհոային շրջանների ուղղութեամբ:

Քամիներ: Բարձր ճնշման վայրերից օդը հոսում է դեպի ցածր ճնշման վայրերը, կամ քարտեզի վրա բարձր իզոբարերից (միևնույն ճնշումն ունեցող վայրերը միացնող դժեր) դեպի ցածրերը: Այս շարժումները կոչվում են քամիներ, ճնշման տարբերութիւնները չափելու միավորը ընդունվում է միջօրեականի 1 աստիճանը (111 կիլոմետր), որը կոչվում է բարոմետրիկ դրագիկնտ: Որքան դրագիկնտը մեծ է, այնքան մեծ է քամու արագութիւնը. 1 մմ. զրագիկնտի դեպքում (այսինքն երբ 111 կիլոմետրի վրա ճնշման տարբերութիւնը 1 մմ. է) քամու արագութիւնը մեկ վայրկյանում 8,5 մետր է կազմում: Երբ արագութիւնը գերազանցում է 4 մ/վայրկյանից, քամին փչում է ոչ թե համաչափ արագութեամբ, այլ պոռթկումներով, որոնց պատճառ կարող են լինել սկիւֆի անհարթութիւնները, կոնվեկցիոն հոսքերի առկայութեանը, օդի սուրբուլենս վիճակը: Քամու արագութիւնը չափվում է Բոֆորտի շկալայով, որը բաղկացած է 12 բալլից (1-ից—12): 0 բալլով նշվում է օդի խաղաղ վիճակը, 1 բալլը համապատասխանում է քամու 0,6—0,7 մ/վայրկյան արագութեանը, 8 բալլի դեպքում, (արագութիւնը 15,3—18,2 մ/վայրկյան) շատ ուժեղ քամին: շարժում է ամբողջ ծառեր, գծվարացնում է մարդկանց շարժումը, փրփրալից

ավիքներ է առաջացնում ծովերի վրա, 12 բալլ ունեցող քամին
անեղ փոթորիկ է, որ ոչնչացնում է ամեն ինչ իր ճանապարհին
(արագությունը 29 մ/վայրկյանից ավելի): Հատուկ գործիք-
ները, որ կոչվում են անեմոմետրեր և անեմոգրաֆներ, չափում
և գրանցում են քամու վայրկենային արագությունը:

Քամիների ուղղությունը (չափվում է Ֆլյուգեր կոչվող գոր-
ծիքով) որոշվում է հորիզոնի այն կետերով, որոնցից նրանք
փչում են. երբ քամին փչում է արևմուտքից—արևելք, նա կոչ-
վում է արևմտյան քամի, եթե փչում է հյուսիս-արևելքից հա-
րավ-արևմուտք, կոչվում է հյուսիս-արևելյան քամի: Միջազ-
գային մասշտաբով ընդունված են քամու ուղղության նշանա-
կումներ, որոնց համապատասխան հորիզոնը բաժանվում է 16
աստիճանների, սրանցից 4-ը գլխավոր կողմերն են (հյուսիս N, հարավ
S, արևելք E, արևմուտք W)*: 4 երկրորդականները (հյուսիս-արե-
վելք NE, հյուսիս-արևմուտք NW, հարավ-արևելք SE, հարավ-
արևմուտք SW) և 8-ը նրանց միջև ընկած կողմերը, որոնք նշա-
նակվում են նույն ձևով (օրինակ հյուսիսի և հյուսիս-արևելքի
միջև ընկած կետը NNE և այլն):

Մթնոլորտի ընդհանուր շրջանառության սխեման

Ճնշման մաքսիմումների և մինիմումների միջև տեղի են
ունենում օդային զանգվածների տեղաշարժեր: Մենք սկսանք,
թե ինչպես են ճնշման հասարակածային գեպրեսիայից նրանք
տեղափոխվում գեպի հյուսիս և հարավ, գոյացնելով անդրարո-
պիկ (կամ սուբարոպիկ) մաքսիմումներ, այսպիսով, 1,5—2,5 կմ.
բարձրության վրա հասարակածից գեպի հյուսիս են ընթանում
հարավ-արևմտյան անտիպասատները, գեպի հարավ՝ հյուսիս-
արևելյան անտիպասատները: Երկրի մակերեսի վրայով սուբ-
արոպիկ մաքսիմումների օդի մի մասը տեղաշարժվում է գեպի
հասարակած: Դրանք պասսատներ են կոչվում. հյուսիսային կի-
սազնդում նրանք ունեն հյուսիս-արևելյան NE ուղղություն,
իսկ հարավային կիսագնդում՝ հարավ-արևելյան (SE). երկու գեպ-
քում էլ օդային զանգվածները երկրի պտույտի հետևանքով
շեղվում են մերիդիոնալ ուղղությունից—հյուս. կիսագնդում գե-
պի աջ, հարավայինում՝ ձախ, ըստ որում, հասնելով հասարակա-

* N—նորդ, S—սյուղ, E—էստ, W—վեստ

ծին, նրանք երկուսն էլ դառնում են արևելյան քամիներ՝ մաք-
սիմալ չափով շեղվելով իրենց նախնական մերիդիոնալ ուղղու-
թյունից: Պասսատները համեմատաբար ցուրտ քամիներ են, ու-
րովհետև միջին լայնություններից փչում են դեպի հասարակած.
ճանապարհին նրանք միաժամանակ տաքանում և չորանում են:
հասարակածի վրա, երկու պասսատների միջև ընկնում է «խա-
ղաղության» գոտի (ИТТИАЛЬ):

Սուբտրոպիկ մաքսիմումից օդի մյուս մասն ընթանում է
դեպի բորեալ լայնությունների (60—65°) դեպրեսիան. հյուսիսա-
յին կիսագնդում դա առաջացնում է հարավ-արևմտյան
և արևմտյան, իսկ հարավային կիսագնդում՝ հյուսիս-
արևմտյան և արևմտյան քամիների սիստեմ: Բևեռներից,
որտեղ ցուրտ և խիստ օդի կուտակման պատճառով ճնշման մաք-
սիմումներ են հաստատվում, փչում են սառը քամիներ դեպի
նույն դեպրեսիան, հյուսիսային կիսագնդում՝ հյուսիս-արևել-
յան, հարավային կիսագնդում՝ հարավ-արևելյան ուղիքերի:
Այս քամիները ավելի հարստ են բնույթ ունեն, քան սրո-
պիկ լայնությունների քամիները. սկսոք է նկատի ունենալ,
որ սրոպիկական դեպրեսիան տարվա ընթացքում տեղաշարժ-
վում է հասարակածից 23¹/₂ հյուսիս և հարավ, որի համեմատ
տեղաշարժվում են նաև սուբտրոպիկ մաքսիմումները:

Իզոթերմների փարտեզը

Օդի շրջանառության վերը նշված սխեման բարդանում է
տեղական և պլանետար նշանակություն ունեցող ֆակտորների
շնորհիվ (ցամաքների և օվկիանոսների բաշխումը, ցամաքնե-
րի ուկեֆը, ադրիացիայի տարբեր քանակությունները): 39
էջում բերված աղյուսակը միայն ընդհանուր բնույթ ունի և
արտահայտում է տարբեր լայնությունների ճնշման միջինը.
Իրականում, ինչպես ջերմություն, նույնպես և ճնշման տարա-
ժումը էական շեղումներ է կատարում լայնությունների նորմա-
լից:

Այդ շեղումները հեշտ է նկատել իզոթերմների փարտեզի
վրա. իզոթերմները գծեր են, որոնք միացնում են միևնույն
ճնշում ունեցող վայրերը քարտեզի վրա, ըստ որում սեկեֆի
ազդեցությունից ազատվելու համար իրական ճնշումը բերում
են ծովի մակերևույթին, եթե, օրինակ, 1.050 մ. բարձրությամբ
վրա ճնշումը 650 մմ. է, ապա ծովի մակերևույթին ճնշումը
կլինի 1.050: 10,5 ÷ 650 = 750 մմ.: Բացի այդ, կատարվում է ուղ-





Рис. 6. Состояние погоды в Европе и Азии

դում՝ հաշվի առնելու համար ծանրության ուժի ազդեցությունը սնդիկի սյան վրա (դրա համար օգտվում են հատուկ ազյուսակներից, բարոմետրի ցուցմունքը բերելով 45⁰ լայնության վրա ծանրության ուժի լարվածության):

Հունվարյան իգոբարներ: Հյուս. կիսագնդում ցամաքների վրա հաստատվում է մաքսիմալ ճնշում, հատկապես Կենտրոնական Ասիայում և Արևելյան Սիբիրում, որոնց բարձրագույն սարահարթերը ուժեղ ցրտելով սառն ու ծանր օդի կուտակման վայրեր են հանդիսանում: Մոնղոլիայում և Տուրքմանի զոգավորության շրջանում ճնշումը հասնում է 780 մմ.-ի (ողջ երկրագնդի վրա նկատված բացարձակ մաքսիմումը), Սիբիրի ցրտության Բենոի շրջանում ճնշումը 774—770 մմ. է: Ասիական մաքսիմումի այս շրջանից բարձր ճնշման մի գոտի (766—765 մմ.), մոտավորապես 50⁰ զուգահեռի վրայով անցնում է դեպի Եվրոպա, աստիճանաբար իջնելով դեպի 40⁰ զուգահեռը. ոռու մեծ կլիմատոլոգ Վոեյկովը, որ տոաջինն է նկատել այս գոտու զոյությունը, նրան անվանել է «մայր ցամաքային բարոմետրիկ առանցք»: Ատլանտյան օվկիանոսի վրա նա միանում է 35⁰-ի ուղղությամբ ձգված ազորյան մաքսիմումին (769 մմ.): Հյուս. Ամերիկայում բարձր ճնշման մարզը (767 մմ.) ընկնում է Ժայռոտ լեռների շրջանում, 45⁰ հյուս. լայնության վրա, իսկ Խաղաղ օվկիանոսում 25—30⁰ վրա (մինչև 766 մմ.): Բարոմետրիկ մինիմումներ ընկնում են Ատլանտյան օվկիանոսի հյուսիսում (իսլանդական մինիմում, 748 մմ.) և Խաղաղականի հյուսիսում՝ Թլեռայան կղզիների ուղղությամբ (752 մմ.):

Հարավային կիսագնդում հունվարին բարձր ճնշման կենտրոնները օվկիանոսներն են, 30⁰ հար. լայնությամբ ընկած գոտում (765 մմ.). մինիմումները (757 մմ.) ընկնում են ցամաքներում և 60—65⁰ հար. լայնության վրա (745 մմ.):

Հուլիսին հյուս. կիսագնդում բարոմետրիկ մաքսիմումն ընկնում է Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների սուբտրոպիկ բարևխառն լայնություններում (768—770 մմ.), մինիմումն ընկնում է ցամաքների վրա (Իրանի սարահարթում 747 մմ.), Ատլանտյան օվկիանոսի հյուսիսում պահպանվում է իսլանդական մինիմումը (756 մմ.), իսկ միջին լայնություններում ատլանտյան մաքսիմումը տարածվում է նաև Եվրոպայի վրա, մոտավորապես Վոեյկովի առանցքի ուղղությամբ: Հարավային կիսագնդում բարոմետրիկ մաքսիմումի գոտին համարյա անընդհատ օղակով



ՊՃ. 7. Հուլիսյան լիցքաբերներ

Շնորհակալում է սուրարոպիկ լայնությունները (770—760 մ.մ.):
Սուբպոլյար լայնության բարձրագույն միջնամասը (750—745 մ.մ.)
հետո ճնշումը նորից բարձրանում է հարավային բևեռում:

Ճնշման օրական փոփոխությունները: Օրվա ընթացքում
և միջնոլորտի ճնշումը փոփոխվում է, նվազելով Չերմության
մաքսիմումի և խոնավության միջնամասի ժամանակ և բարձ-
րանալով հակառակ պայմաններում: Միջնամասի ժամերն են՝ ա-
ռավոտյան 3—4-ը և 3—4-ը կեսօրից հետո. մաքսիմումները լի-
նում են սռավոտվա ժ. 9—10-ին և երեկոյան 9—10-ին, ըստ
որում ճնշման տատանումները 3 մ.մ-ից չեն գերազանցում:

Հասարակածում մաքսիմումներն ու միջնամասները հաջոր-
դում են միմյանց ժամացույցի ճշտությամբ. բարձր լայնու-
թյուններում նրանք հաճախ քողարկվում են ոչ պարբերական
տատանումներով և կարող են հայտնաբերվել միայն երկար ժա-
մանակվա դիտումների միջին արժեքներով:

Պասսատներ, ցիկլոններ և անտիցիկլոններ, օդային զանգ-
վածներ և ֆրոնտներ

Տրոպիկ գոտում սուրարոպիկ մաքսիմումներից դեպի հաս-
րակած փչում են պասսատներ, իսկ վերևից նրանց հակառակ
ուղղությամբ անտիպասատներ: Պասսատները տեղական քամի-
ներ են, փչում են ամբողջ տարին միևնույն ուղղությամբ. նը-
րանց ասարածման գոտում երկինքը պարզ է, օդի խոնավու-
թյունը նվազ: Ատլանտյան օվկիանոսի պասսատի միջին արա-
դությունը վայրկյանում 4,7 մ. է (մաքսիմումն ապրիլին 6,0 մ.,
միջնամասը հոկտեմբերին 3,0 մ.), SE պասսատը ավելի ուժեղ է
միջին արագությունը 6,2 մ. (մաքսիմումը սեպտեմբերին 7,6 մ.,
միջնամասը մայիսին 4,9 մ.): Պասսատների շնորհիվ արոպիկ
(արևադարձային) լայնություններում եղանակը կայուն է, փո-
փոխությունները կրում են բարբերական բնույթ:

Բարեխառն և ցուրտ գոտիներում եղանակի այդպիսի կա-
յունություն չկա, փոփոխությունները խիստ հաճախակի են՝ ծո-
վի և ցամաքի անկանոն բաշխման և դրա հետևանքով Չերմու-
թյան և ճնշման խայտարեկա պատկերի շնորհիվ: Մենք տեսանք
թե ինչպես առանձին կենտրոններում գոյություն ունեն տար-
բեր ճնշում և Չերմաստիճան. այդ կենտրոնների օդային դանդ-
վածները, այդ պատճառով, տարբերվում են միմյանցից: Ցածկ

ճնշում ունեցող օդային զանգվածները ցիկլոնային են կոչվում: Մինչև ժամը ճնշումը գտնվում է ցիկլոնի կենտրոնում, այդ պատճառով եզրերից քամիներ են փչում դեպի կենտրոն, թեքվելով հյուսիսային կիսագնդում դեպի աջ, հարավային կիսագնդում՝ ձախ. այսպիսով ցիկլոնում քամիները պտուտակահողմի բնույթ ունեն, որոնք ընթանում են հյուս. կիսագնդում ժամացույցի սլաքին հակառակ, իսկ հարավայինում նրա շարժման ուղղութեամբ: Ֆիկլոններին հակառակ բնույթ ունեն անտիցիկլոնները, որոնց ճնշումը կենտրոնում բարձր է և նվազում է դեպի եզրերը, հետևապես և քամիներ են փչում նույն ուղղութեամբ, կրելով շեղումներ երկրագնդի պտույտի ազդեցութեան առկա:

Ֆիկլոնային և անտիցիկլոնային զանգվածներն իրենց գոյացման վայրերից շարժվում են դեպի այլ լայնութեաններ, մասամբ պահպանելով իրենց հատկութեանները, մասամբ կրելով նոր միջավայրի ներգործութեանը: Օդային զանգվածները ունենում են հազարավոր կիլոմետր տրամագիծ, բարձրութեանը հասնում է մի քանի հարյուր մետրի, երբեմն մինչև ստրատոսֆերա:

Երկու օդային զանգվածների սահմաններում ընկած գոտին կոչվում է ֆրոնտ. նա հազարավոր կիլոմետր երկարութեան է ունենում և մի քանի տասնյակ կիլոմետր լայնութեան: Ֆրոնտի հակադիր կողմերում, նայած թե ինչ զանգվածներ է նա բաժանում, օդի հատկութեանները (ջերմաստիճան, ճնշում, քամիների ուղղութեան, խոնավութեան) հաճախ բոլորովին տարբեր են լինում. ջերմաստիճանի տարբերութեան, օրինակ, ֆրոնտի լայնութեամբ կարող է հասնել 20⁰-ի:

Օդային զանգվածների և ֆրոնտների ծագումը կապված է բարոմետրիկ մաքսիմումների և մինիմումների գոտիների ու մարզերի հետ: Ատլանտյան օվկիանոսի հյուսիսում բորեալ ֆրոնտները ձմռան անցնում են Ֆլորիդայի, Բերմուդյան և Ազորյան կղզիների վրայով դեպի Լամանշ, հարավում ունենալով բարոմետրիկ սուբտրոպիկական մաքսիմում. ամառը թե այս վերջինս և թե բորեալ ֆրոնտը ձգվում է շատ ավելի հյուսիս ընկած լայնութեաններով: Բորեալ օդային զանգվածները արևմուտքից արևելք են շարժվում Ատլանտյան օվկիանոսի 60⁰ հյուս. լայնութեամբ անցնող բարոմետրիկ մինիմումի (որը հատկապես լավ արտահայտված է Իսլանդիայում և նրան հարակից շրջան-

ներում) հարավային եզրով, իսկ նրանց զուգահեռ և նույն ուղ-
 դությամբ շարժվում է սուբարոպիկ մաքսիմումից եկած սուբ-
 արոպիկ օդը*։ այս երկու, ցուրտ և տաք օդային զանգվածներ
 միջև ընկած Ֆրոնտի երկարությամբ առաջանում են ցիկլոններ-
 սուբարոպիկ օդի ալիքները մասնում են բորեալ օդի մեջ, ունե-
 նալով համեմատաբար բարձր ջերմություն, նրանք միմյանց
 ճնշման կենտրոններ են հանդիսանում ափելի սառը և խիտ բո-
 րեալ օդի միջավայրում։ Յիկլոններն իրենց հերթին ունենն տաք
 և սառը Ֆրոնտներ. հասկանալի է, որ հյտև. կիսագնդում ցիկլո-
 նի տաք Ֆրոնտը նրա առաջավոր հարավ արեելյան մասն է,
 որտեղ գերակշռում են տաք SE, S և SW քամիներ. ընդհակա-
 ռակը, ցիկլոնի NW մասը սառը Ֆրոնտն է հյուսիսային ուղմ-
 բերի քամիների գերակշռությամբ։ Սառը Ֆրոնտի երկարու-
 թյամբ այդ քամիների սառն օդը մտնում է տաք օդի տակ,
 վերջինս արագ վեր է բարձրանում, նրա մեջ եղած գոլորշիները
 ստոչում են առաջացնելով կարճատև, բայց առատ և ուժեղ
 տեղումներ։ Տաք Ֆրոնտի երկայնքով տաք օդն աստիճանաբար
 է բարձրանում դիմացի սառն օդի վրա, նրան սառչումն առտի-
 ճանաբար է տեղի ունենում և տեղումները երկարատև ու հանդիսա-
 բնույթ ունեն։ Այսպիսով, տաք և սառը Ֆրոնտների միջև գտըն-
 վող տաք սեկտորը (սուբարոպիկ օդի ալիքը) աստիճանաբար
 նեղանում է իր հիմքի մոտ և վերջապես անջատվում է հիմ-
 նական զանգվածից (օկլյուզիա), գոյացնելով տաք օդի կղզի
 սառն օդի միջավայրում, որը շարունակում է նրան վեր բարձ-
 րացնել, որի հետևանքով ցիկլոնը հետզհետե սպառվում է։

Յիկլոններն անցնում են սերիաներով, որոնց թիվը տա-
 րեկան հասնում է 60—65-ի, յուրաքանչյուրը 5—6 օր տևողու-
 թյամբ Յիկլոնների մոտեցումը զգացվում է ճնշման նվազմամբ
 («բարոմետրն ընկնում է»), հանդես են գալիս փետրավոր ամ-
 պերը, ջերմաստիճանը բարձրանում է, քանի որ նրանք շարժ-
 վում են արեմուտքից արևելք, ապա ավյալ վայրով նախ անց-

* Այսպիսով, տրոպիկական և արկտիկ օդային զանգվածները միմյանց
 հետ անմիջապես չեն շփվում և բաժանված են բորեալ (բարեխառն գոտու)
 օդով։ Իրա համեմատ մթնոլորտի ընդհանուր շրջանառու թյան սխեման բար-
 դանում է, հասանելի է հյուսիս մաքսիմումի գոտիներ են նշվում հս. լայն
 30°, 55° և բևեռի վրա. միմյանումի գոտիներ՝ 20° և 45° հս. լայն. վրա, այ-
 սինքն այն տեղերում, ուր հանդիպում են մաքսիմումներից եկած զանգ-
 վածները և վերընթաց հոսանքներ առաջացնելով իջեցնում ճնշումը (առա-
 ջինը կոչվում է արկտիկ, երկրորդը բորեալ Ֆրոնտ)։

նում է ցիկլոնի տաք ֆրոնտը, փչում են հարավային սումբերի քամիները, ամպերը ծածկում են երկինքը և մանր անձրև է տեղում, ապա անցնում է սառը ֆրոնտը, քամիները փչում են հակառակ կողմից (հյուսիսից և հյուսիս-արևմուտքից), եղանակը ցրտում է: Չմեղը ցիկլոնները Ստրանտայան օվկիանոսից Ղոնջկոփե առանցքի հյուսիսային եզրով անցնում են դեպի ՍՍՌԲ և վրայական մասը՝ և նրա արևմուտքում և հյուսիս-արևմուտքում առաջացնում ակունքներ, եղանակի զգալի փոփոխում, երբեմն հալհլոց:

Ցիկլոնների ամենատիպական ճանապարհը եվրոպայում անցնում է՝

1. Բլիտանական կղզիների և Սկանդինավիայի հյուսիս-արևմտյան ափերով,
- 2) Սկանդինավիայի հարավով և Բալթիկ ծովով դեպի Ֆինլանդիան ծոց,
- 3) Միջերկրական ծովով դեպի ՍՄՌԲ-ի հարավը: Բոլոր դեպքերում նրանց կլակեաը Ստրանտայան օվկիանոսն է: Հյուսիս-Ամերիկայում՝ 1) Ֆեժ լճերի վրայով, 2) Միսիսիպիի դաշտավայրով, ընթացքը՝ արևմուտքից — արևելք:

Արևելիկ ֆրոնտի ուղղությամբ (Հար. Գրենլանդիա, Յան-Մայն, Ալշի, Նոր Երկիր կղզիներով մինչև Կարայի ծովը) նույնպես դեպի արևելք են անցնում ցիկլոններ, որոնք նպաստում են օդային զանգվածները փոխանակության Արևելիկայի և բարեխառն լայնությունների միջև:

Տրոպիկական երկրներում ցիկլոնները նման կանոնաչափ հաջորդականություն չունեն, բայց ավելի ուժեղ պտուտակահողմերի ընդլայնում և ավերիչ դործունեություն են հանդես բերում:

Սուգանում նման ցիկլոնները կոչվում են տրոպիկոս, նրանց կենտրոնում մոլեգին պտուտակահողմը կործանում է ամեն ինչ, հաճախ թաղում ավազի տակ մարդկանց և կենդանիների: Ծովերի վրա նա բարձրացնում է ջրի հսկայական սյունեղջի ցիկլոններ առաջանում են նաև Բենգալյան ծոցում, Չինական ծովերում (Թայֆուններ), Անտիլյան կղզիներում և ԱՄՆ-ի հարավում (օրկաններ). սրանց տրամագիծը մի քանի հարյուր կիլոմետրի է հասնում, բայց միայն կենտրոնում (30—40 կմ շառավղով) շարժման արագությունը վտանգավոր է: Նկատված է որ այդ ցիկլոններն առաջանում են միշտ միևնույն մարզերում, հատկապես այն մոմենտներին, երբ ամսագրիցայի ընդհանուր շրջանառությունը փոխում է իր ուղղությունը (առտրոպիկ մասը

ախմուսներէ տեղաշարժերէ կապակցութեամբ), երբ կարող են հանդիպել հակառակ ուղղութեան օրային հոսանքներ:

Անտիցիկլոնները ներկայացնում են ցիկլոններին հակառակ պատկեր, նրանց կենտրոնում ճնշումն ավելի է, քան պերիֆերիայում, քամիները փչում են կենտրոնից դեպի պերիֆերիա և հյուս. կիսագնդում թեքվելով դեպի աջ, սլորալի ձև են ստանում և պտտվում ժամացույցի սլաքի ուղղութեամբ: Կենտրոնում վերևից օդը իջնում է ցած, հետևաբար տաքանում և չորանում է, այդ պատճառով անտիցիկլոնի ներքում բնորոշ է պարզ, անամպ եղանակը, քամիները շատ թույլ են, քանի որ ճնշման նվազումը այնպես մեծ չափերի չի հասնում, ինչպես ցիկլոնում: Այդ պատճառով էլ ամառը անտիցիկլոնի մարզում ցերեկը տաք է, գիշերը դով, խիչ ձմռանը ուժեղ սառնամանիքներ են լինում, քանի որ անամպ եղանակի շնորհիվ հողը ազատ ճառագայթում է ստացած ջերմութեանը և իր սառնութեանը հաղորդում օդին, խիչ քամիների բացակայութեանը հնարավորութեան չի տալիս, որ կոնվեկցիա կառարվի և վերևի ավելի տաք օդն իջնի ցած: Մյուս կողմից անտիցիկլոնները ավելի կայուն են, քան ցիկլոնները և փնում են միևնույն տեղում երկար ժամանակ, որի հետևանքով և անտիցիկլոնով զբաղված տեղի-տարիաները ձմռանն ուժեղ ցրտի կենտրոն են հանդիսանում: Սիրիի ցրտութեան բևեռը հենց պարտական է այստեղ ձմեռները հաստատվող ուժեղ անտիցիկլոնին*, որը տարածված է ոչ միայն Արևելյան Սիրիի, այլ և Կենտրոնական Ասիայի և Արևմտյան Սիրիի վրա և մի լեզվակով (Վոյեյկովի բարոմետրիկ առանցքը) անցնում է ՄՍՌՄ եվրոպական մասով և հասնում Հարավային Եվրոպայի վրայով մինչև Ատլանտային օվկիանոս: Վերը հիշատակված անդրտրոպիկական (մերձարևադարձային) բարոմետրիկ մաքսիմումի գոտին հենց անտիցիկլոնի բնութիւնն է, այդտեղ, ինչպես գիտենք, ճնշումը մեծանում է շնորհիվ վերևից իջնող օդի դանդաղման: Այլ վայրերում ևս, որտեղ ստեղծվում են այդպիսի վայրէջ հոսքերի նպաստալից պայմաններ, առաջանում են անտիցիկլոնի տեղական կենտրոններ: Քայց հյուս. բարեխառն (բորեալ) գոտու անտիցիկլոնների ծագ-

* Լայն տարածված, խիստ սառնող ցամաքն էլ, իր հերթին, ուժեղացնում է անտիցիկլոնը:

ման կենտրոնը բեկրն է, իր վրա կուտակված սառն և ծանր օդային զանգվածներով, որոնք բեկոային ֆրոնտի ղիդրադավոր գծից ալիքներով թափանցում են դեպի հարավ: ՄՄԻՄ տերիտորիան նրանք թափանցում են Արևախաչից Կարայի ծովի վրայով կամ Գրենլանդիայից՝ Կոլա թերակղզու վրայով: Սառնության բեկոային կուտակումից («պլսարկից») լեղվակներ են անջատվում դեպի հարավ, հասկապես որոշակի տեղերում, որտեղ արևախաչ օդի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք շարժվող զանգվածները արգելքի են հանդիպում՝ ցամաքի ուղղորդ ափերի, կամ լեռնաշղթաների, օրինակ Թայմիր թերակղզու ափերին, Ուրալին, Հյուս. Ամերիկայում՝ Ժայռոտ լեռներին (որի հետևանքով Կանադայում ստեղծվում է Մանիտորայի անտիցիկլոնը), Գրենլանդիա կղզու արևելյան ափերին և այլն:

Անտիցիկլոնի այս ալիքներն էլ հանդիսանում են բարեխառն գոտու եղանակի գլխավոր գործոնները, նրանց եզրերին գոյանում են օդային զանգվածների բաժանման ֆրոնտային մակերեսներ ու ցնկլոնային այլոյություններ: Օդային զանգվածների շարժման ուղղություններն ու օրինաչափությունները ռուսումնասիրվում են մետեորոլոգների կողմից, իսկ ուսումնասիրության արդյունքները օգտագործվում են եղանակի մոտակա ժամկետներում կատարվելիք փոփոխությունները կանխագուշակելու (պրոգնոզի) համար: ՄՄԻՄ-ում մետեորոլոգիական կայանների լայն ցանցը հնարավորություն է ապահովում մեծ մասով տեղյակ լինելու երկրի տարբեր մասերում կատարվող Չերմության, ճնշման, քամիների, խոնավության, ամպամածության, տեղումների փոփոխություններին, արձանագրելու այդ փոփոխությունները աշխարհագրական քարտեզների վրա օրական 3—4 անգամ, հետամուտ լինելու այդ ձևով կազմված քարտեզների միջոցով (սինոպտիկ քարտեզներ), թե ինչպես են շարժվում ցիկլոններն ու անտիցիկլոնները: Այդ գործով ղրադվում է եղանակի կենտրոնական իշուրոն Մոսկվայում և ռեսպուբլիկական ու մարզային եղանակի բյուրոները տեղերում: Սրանով ընդգծվում է այն մեծ նշանակությունը, որ արվում է մեր երկրում եղանակի ուսումնասիրությանը՝ այն ժողովրդական անասնությանը, առաջին հերթին՝ գյուղատնտեսությանն իսպաս գնելու համար:

Քամիների այլ տիպերը

Ծովամերձ վայրերում, ուր ցամաքի և ծովի միջև ճնշման տարբերություններ են առաջ գալիս ամառվա ու ձմեռվա, ինչ-

պէս և ցերեկվա ու գիշերվա ընթացքում, քամիներ են փչում ծովից ցամաք (տաք եղանակին և ցերեկը) և ցամաքից ծով (ձմռանը և գիշերները): Օդական քամիները կոչվում են բրիւններ և ծովափնյա նեղ շերտ են ընդգրկում. ավելի ընդարձակ տարածութիւններ են ընդգրկում մուսսոնները, որոնք ձմեռը փչում են ցամաքից ծով, իսկ ամառն ընդհակառակը: Ատիայի հարավային, արևելյան և անդամ հյուսիսային ափերը ափայիկ մուսսոնային ակտիւ ունեն, ձմռանը մուսսոնները աղբյուր են հանդիսանում Սիբիրի և Կենտրոնական Ասիայի անտիցիկլոնները, որոնց սառը և ծանր օդը հոսում է դեպի օվկիանոսները: Ամռանն Ասիայի ցամաքը ուժեղ տաքանում է և ստեղծվում ճնշման միւնիում, որը ծծում է շրջապատի օվկիանոսների խոնավ օդը, որը բարձր ճնշման տակ է դառնում. մուսսոնները լավ արտահայտված են նաև Աֆրիկայի արևելյան և Գվինեյան ծոցի ափերին, Ավստրալիայում, ԱՄՆ-ի հարավում, որտեղ խոնավարեւր մուսսոններ փչում են Մեքսիկական ծոցից: Անդրկովկասում ձմռանը Հայկական ըարձրավանդակի վրա հաստատվում է անախցիկլոնի տեղական կենտրոն Դարբի շրջանում, սրա շուր և սառն օդը փչում է դեպի Սև և Կասպից ծովերը, որտեղ ջրի տաքութեան հետևանքով օդի ճնշումը թաւլ է: Այս քամիներն ևս մուսսոնային բնույթ ունեն: Բրիւնները առաջանում են ոչ միայն ծովերի, այլև լճերի ափերին: Արևադարձային երկրներում ծովային բրիւնները սկսվում են առավոտյան ժամը 10-ից բերելով ծովից թարմություն և դովություն: Երեկոյան սկսվում են ցամաքային բրիւնները. սրանք այնպես կանոնավոր են հաջորդում միմյանց, ինչպես արևածագն ու արևամուտը: ՄՍՌՄ-ում բրիւններն առանձնապես զգալի են Սև ծովի ափերին, օրինակ Սուխումիում ծովային բրիւնը ուժի մեջ է մտնում մոտ ժամի 12-ից, իսկ երեկոյան ժամի 6-ից նրան փոխարինում է ցամաքային բրիւնը: Եթե ցիկլոններ չկան, այդպիսի բրիւնները այստեղ փչում են ամբողջ տարվա ընթացքում: Բաթումիում և Նովորոսիսկում բրիւնները լավ են զգացվում ապրիլից մինչև սեպտեմբերը, Ադովի ծովում, Սեվաստոպոլում, Օդեսայում, Ինեստրի կիմանում ամառը: Հայկ. ՄՍՌ-ում Սևանա լճի հարավ-արևելյան ափին ամռանը ցերեկները ցամաքը 13,2⁰-ով (VII, Զաղալու) տաք է ջրից, իսկ ձմռանը (I) 15,5⁰ սառն է նրանից, որի հետևանքով առաջանում են բրիւններ, որոնցից ավելի մեծ արագություն ունի դիշերայինը (վայրկյանում 2,4 մ.): Բրիւններ փչում են նաև

մեծ գետերի ողողաաներում, Վալդայի վրա Սարատովում ամառը ամսական 8—9 օր փչում են ցերեկը գետից դեպի արև (E, NE, S), գիշերը՝ հակառակ ուղղությամբ (W և NW):

Բացի նշված վայրերից, բրիգաները հայտնի են և ունումնասիրված նաև Բալթիկ, Ազովի, Կասպից ծովերի, Լադոգա, Օնեգա, Ուլեսո, Զայսան, Ժնեխի, Բոդենի, Միչլիգան լճերի ափերին:

Ծովափնյա քամիներից են նոսի նորդ-օստը (բորա) նովորոսիյսկը և Տրեխտում, միտարալը՝ Պրովանսում. սրանց առանձնահատկությունն այն է, որ իջնում են դեպի ծովափ ոչ բարձր լեռներից, հետևաբար չոր և տոթ քամիներ են, իսկ ձմեռը սառնություն են բերում: Նովորոսիյսկում, օրինակ, նորդ-օստը ձմռանը ծագում է Կովկասյան լեռների հյուսիսային լանջերին իշխող անտիցիկլոնի օդային դանդաղածներից, որոնք խիստ ցածր ջերմաստիճան ունեն. լեռներն ի վեր բարձրանալիս նրանք ավելի են սառչում, և թեպետ հարավային լանջով իջնելիս որոշ չափով տաքանում են, բայց ջերմաստիճանը կրկին ցածր է մնում այնքան, որ հաճախ աղեաբեր է դառնում ծովափի բուսականությունը համար: Բայցիլա լճի ափերին նման քամիները կոչվում են սարմա:

Անառաքաներում փչող, կամ նրանց վրայից անցնող չոր և տաք քամիները կրում են տարբեր անուններ, օրինակ Եգիպտոսում՝ խամսին, Վերին Գվինեում՝ հարմատան, Արաբիայում՝ սամում:

Լեռնային երկրների կլիմային հատուկ Փյուն, չինուկ և շեռնահովտային քամիների մասին խոսք կլինի առանձին բաժնում:

4. Օդի ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄՅՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Օդի խոնավության աղբյուրը, Գոլորշիների կոնդենսացիան:

Երկրի ջերմացման պրոցեսի ամենակարևոր հետևանքն այն է, որ օվկիանոսների ու այլ ջրավազանների մակերեսից հսկայական քանակությամբ ջուր է գոլորշիանում և լուծվելով օդի մեջ խոնավացնում նրան: Օդի մեջ եղած խոնավությունն է մթնոլորտային ամեն տեսակի տեղումների աղբյուրը (անձրև,

ձյուն, կարկուտ և այլն) և Ֆիզիկո-աշխարհագրական պրոցեսներին մասնական գործող ուժերից մեկը: Բավական է ասել, որ Չերմության ազդեցութեանը օրգանական և անօրգանական աշխարհի վրա խոնավութեան մասնակցութեան շնորհիվ ավելի ինտենսիվ է դառնում, ապառների հողմահարութեանը, հողագոյացումը, էրոզիան ու գենուդացիան, նստվածքները դոյացումը, բուսական ու կենդանական աշխարհի զարգացումն ընթանում են ավելի արագ և բազմազան ձևերով:

Կատարված հաշվարկումների համաձայն համաշխարհային օվկիանոսի ջուրը 1,37 մլրդ. խոր. կիլոմետր է. այդ քանակութեանից գոլորշիանում է չնչին մասը՝ տարեկան 511,1 հազ. խոր. կմ., այս քանակութեանն էլ թափվում է երկրի մակերեսին, ջրի և ցամաքի վրա որպես մթնոլորտային տեղումներ: Այսպիսով, խոնավութեանը շրջանառութեան է կատարում. գոլորշիացման ժամանակ ծախսված Չերմութեանը նորից անջատվում է գոլորշիների խտացման և տեղումների գոյացման ժամանակ: Սա նշանակում է, որ ցամաքի վրա տեղումների հետ միասին գալիս է նաև օվկիանոսում գոլորշիացման վրա ծախսված Չերմութեանը:

Ճիշտ է, ցամաքի վրայից էլ գոլորշիացում է կատարվում, բայց գոլորշիանում է այդտեղ թափված տեղումների (99,5 հազ. խոր. կմ.) $\frac{2}{3}$ մասից էլ պակասը, $\frac{1}{3}$ -ից ավելին (37,1 հազ. խոր. կմ.) ցամաքի վրայով հոսք է կատարում դեպի օվկիանոսը, հետևապես ցամաքը շահում է այնքան Չերմութեան, որքան կպահանջվեր այդքան ջուրը գոլորշիացնելու համար:

Գոլորշիանալով օվկիանոսների ու ծովերի մակերեսից, խոնավութեանը տարածվում է նաև ցամաքների վրա, այդ գործում մեծ դեր են խաղում օդային դանդվածների շարժումները, որոնց մասին նախորդ գլխում խոսվեց: Բացի այդ, երբ արդեն տեղումները թափվում են ցամաքի վրա, նա էլ իր հերթին է գոլորշիացնում թե՛ անմիջապես հողից, ձյան ու սառցի մակերեսներից և թե՛ բույսերի միջոցով (արանսպիրացիա): Հասկանալի է, որ ամենուրեք մթնոլորտի խոնավութեանը նույնը չի կարող լինել. բարձր սարահարթերի վրա, լեռներով շրջապատված գոգավորութեաններում, օվկիանոսներից մեծ հեռավորության վրա գտնվող վայրերում օդի խոնավութեանը խիստ պակաս է. քանի որ խոնավաբեր քամիները նրանց չեն կարող հասնել:

ընդհանրապես, ծովամերձ ցածրադիր երկրներում, որոնք բաց են դեպի ծովը, իսկ ցամաքի կողմից եղերված են բարձր լեռներով, օդի խոնավությունը մեծ չափերի կարող է հասնել, եթե մասնավոր դեպք է և նրանից դեպի ցամաք քամիներ են փչում:

Սա նշանակում է, որ առաջին դեպքում օդի ծավալային մեկ միավորի, ասենք 1 խոր, մետրի մեջ ավելի քիչ ջրային գոլորշիներ կան, քան երկրորդ դեպքում: Այդ քանակը չափվում է ջրի կշռով կամ ջրային գոլորշիների առաձգականությամբ: Էսպես, այդ երկու չափումներն էլ միևնույն արդյունքն են տալիս. երբ օդի հիշված ծավալի մեջ ջրի քանակը 10 գրամ է, ապա այդ նույն չափի ջրային գոլորշիներն իրենց առաձգականությամբ առաջացնում են ճնշում, որը համապատասխանում է սնդիկի սյան 10 միլիմետրին (հիշենք, որ ատոմսֆերայի ճնշումը հավասար է չոր օդի ճնշման՝ 760 մմ եղած գոլորշիների ճնշումը): Այս ցուցանիշը կոչվում է օդի բացարձակ խոնավություն և ամենից առաջ կախված է ջերմությունից, որովհետև օդի խոնավընկալ հատկությունն էլ ջրի լուծիչ հատկության նման ավելանում է, երբ բարձրանում է ջերմաստիճանը: Այսպիսով օդի բացարձակ խոնավությունը ուղիղ հարաբերական է ջերմաստիճանին և հետևապես հասարակածից դեպի բևեռ, ինչպես և տարվա տաք եղանակից մինչև ցուրտ եղանակը աստիճանաբար նվազում է. այդ երևում է հետևյալ համեմատությունից. հասարակածային երկրներում՝ բացարձակ խոնավությունն ամենամեծն է՝ 25 մմ., բևեռային երկրներում ամենափոքրը՝ 2—3 մմ.:

Հյուս. կիսագնդի բարեխառն լայնություններում բացարձակ խոնավության մաքսիմումը ընկնում է հուլիսին՝ 10—12 մմ., մինիմումը հունվարին՝ 5—6 մմ.:

Օրվա ընթացքում ևս մինիմումը համապատասխանում է նվազագույն ջերմաստիճանի ժամերին (առավոտյան դեմ ժ. 3—4-ին), բայց մաքսիմալ ջերմաստիճանին խոնավության մաքսիմում չի համապատասխանում, այլ երկրորդ մինիմում, քանի որ կեսօրին վերընթաց կոնվեկցիոն հոսքերը ներքևից բարձրացնում են գոլորշիները և վերևից ցած իջեցնում չոր օդ, որ իջնելով խտանում ու տաքանում է և հետևապես ավելի չորանում: Ինչ վերաբերում է օրական մաքսիմումներին, ապա

Նրանք բնկնում են առավտար ժամի 8—9-ին, երբ գոլորշիացումն ուժեղանում է, և երեկոյան 8—10-ին, երբ վերընթաց հոսքերն ընդհանվում են:

Օդը, սակայն, խոնավությամբ հարստանալ է արդյ է մինչև մի արդ սահման, մինչև հազեցում. գրան հասնում է նա, երբ ավյալ անկոտորի ջերմաստիճանի դեպքում խոնավության նոր ավելացումը հանդեպնում է ավելորդ գոլորշու խառցման կամ կոնդենսացիայի և հողի կամ ալլ տարիկաների մակերեսին, հատկապես մանր խոստիկներում ջրային մանր կաթիլները գոյացման (ցողի կետի): Այսպես, օդի, —30° ջերմության դեպքում հազեցնող բացարձակ խոնավությունը կազմում է 0,5 գր/մ³ (կամ 0,4 մ.մ.), 0°-ի դեպքում 4,8 գր/մ³ (կամ 4,6 մ.մ.), +30° դեպքում 30,4 գր/մ³ (կամ 31,9 մ.մ.):

Բացարձակ խոնավությունը կազմում է հազեցման համար անհրաժեշտ խոնավության մի մասը. բացարձակ և հազեցնող խոնավության հարաբերությունն արտահայտվում է սովորականով և կոչվում է հարաբերական խոնավություն: Օրինակ, +20°-ի ջերմության դեպքում 1 խոր. մետր օդը հազեցնել կարող են 17,5 գրամ ջրային գոլորշիներ, մինչդեռ նրա մեջ կա միայն 10 գր., որով հարաբերական խոնավությունը կկազմի $\frac{10 \cdot 100}{17,5}$. մոտ

57 առկոս*:

Հազեցնող և բացարձակ խոնավության տարբերությունը կազմում է խոնավության դեֆիցիտ. Հայտնի է, որ +16° ջերմության 1 մ³ օդը հազեցնում են 9,2 մ.մ.: գոլորշիները, եթե առկա է միայն 5 մ.մ., ապա դեֆիցիտը կկազմի 4,2 մ.մ., հենց այս դեֆիցիտն է առաջացնում ջրի գոլորշիացումը երկրագնդի մակերեսից:

Ի տարբերություն բացարձակ խոնավության, հարաբերական խոնավությունը ջերմությանը հակադարձ հարաբերական է, հեռավար, նա մեծ է բևեռային երկրներում, իսկ ցածր լայնություններում, հատկապես պասսատների գոտում, փոքր:

Ամենամեծ բացարձակ խոնավությունը նկատված է Զիգ-

* Այս հաշվարկման ֆորմուլն է՝ $r = 100 \frac{Q}{Q_0}$, որտեղ r-ը հարաբերական խոնավությունն է, Q-ն՝ բացարձակ խոնավությունը, Q₀-ն՝ հազեցնող խոնավությունը:

զում (Արաբիա), 31,2 մմ., ամենափոքրը՝ հյուսիս արեւելյան Սիբիրում՝ 0,1 մմ.:

Առվեռահան Միջին Ասիայում դիտված են հարաբերական խոնավութեան հետեյալ տատանումները. Նուկուսում ձմռանը մաքսիմումն է ընկնում է առավ. ժ 6—7-ին՝ 91⁰/₀, մինիմումը ժ. 2—3-ին՝ 69⁰/₀. ամառը մաքսիմումն այստեղ ընկնում է առ. ժամը 4—5-ին՝ 69⁰/₀, մինիմումը ժ. 2-ին՝ 24⁰/₀։

Աստրախանում սարեկան մաքսիմումն է ընկնում է դեկտեմբերին (87⁰/₀), մինիմումը հունիսին (57⁰/₀):

Վլադիվոստոկում հակառակն ենք նկատում՝ մաքսիմումն է ընկնում է հուլիսին (89⁰/₀), մինիմումը նոյեմբերին (68⁰/₀). պատճառն ամառային խոնավաբեր մուսսոններն են:

Մթնոլորտային տեղումների առաջացումը

Մթնոլորտային տեղումների առաջացումը կապված է խոնավութեան կոնդենսացիայի հետ. գոլորշիները հագեցնելով օդը, անցնում են հեղուկ վիճակի, տալով ցող, անձրև, իսկ 0⁰-ից ցածր ջերմութեան դեպքում՝ եղյամ, ձյուն, կարկուտ: Որպեսզի խոնավութեանը կոնդենսացվի, անհրաժեշտ է, որ օդը սառչելու վիճակում ընկնի հարաբերական խոնավութեանը և հասնի հագեցման, ցողի կեսին:

Օդի սառչելը կատարվում է երեք ձևով:

1. Երկրի մակերեսից, երբ վերջինս իր ջերմութեանը ծախսելով սառչում է. սառը մակերեսներին շփվելով, օդի գոլորշիները խառնում են և դոյացնում մառախուղ, ապա և փոխվում ցողի, իսկ 0⁰-ից ցածր ջերմութեան դեպքում եղյամի, որոնք ծածկում են ամենից շատ սառած մակերեսները՝ տանիքները, խոտերը, ծառերի ճյուղերը և այլն: Մառախուղ դոյանում է նաև այն դեպքերում, երբ տաք մակերեսներից գոլորշիները միանգամից թափանցում են սառն օդի մեջ և բարձրացնում նրա հարաբերական խոնավութեանը, օրինակ ձմռանը ծովերի ու լճերի վրա, երբ վերջիններս ավելի տաք են, քան օդը:

2. Ադիաբատիկ պրոցեսի հետևանքով, ազապ մթնոլորտում, երբ բարձրացող և ընդարձակվող օդի գոլորշիները սառչում և խառնում են. սա կատարվում է ոչ միայն ստորին շերտերի երկրի մակերեսից տաքանալիս, այլև այն դեպքում, երբ օդը ծովից անցնում է ցամաքի մակերեսի վրա, որտեղ հանդիպելով

զման, շարժումը թուլանում է և կատարվում օդի կուտակում և դրա հեռահանքով վեր բարձրացում: Նույնն է տեղի ունենում. երբ հարթավայրի օդը հանդիպում է լեռնալանջերին:

3. Մոնալությամբ ու ջերմությամբ միմյանցից տարբերվող օդային զանգվածների խառնվելիս. այս դեպքում նրանց խառնուրդի ջերմաստիճանն $\left(\frac{t+t'}{2}\right)$ ավելի ցածր է լինում, քան

այդ խառնուրդի հարաբերական խոնավությունը $\left(\frac{f+f'}{2}\right)$ նույն

աստիճանի վրա սահմանելու համար պահանջվող ջերմությունն է. հետևաբար հարաբերական խոնավությունը բարձրանում և կոնդենսացիա է կատարվում: Այսպիսի պրոցես տեղի է ունենում ցիկլոնների շնորհիվ, օրինակ՝ Նվրոպայում արևմտյան քամիների ժամանակ, երբ սուբարոպիկ տաք օդը ընկնում է միջին լայնությունների համեմատաբար սառը զանգվածների մեջ:

Որպեսզի կոնդենսացիան տեղումներ տա, անհրաժեշտ է, որ նա կատարվի շատ արագ, ինչպես այդ տեղի է ունենում ցիկլոնի սառը ֆրոնտում: Այդ դեպքում առաջանում են ջրի մանրագույն կաթիլներ, որոնց թիվը 1 խոր. սմ. ամպի մեջ հասնում է 200—500-ի, ջուրը կաթիլներ է կազմում, խտանալով ամպերի մեջ եղած փոշեհատիկների շուրջը, որոնք, այդպիսով, կոնդենսացիայի կորիզներ են դառնում: Կաթիլները միանալով միմյանց, մեծանում են և թափվում ցած, որպես անձրևի, սառյալ միանալ նրանք միշտ չեն կարող, եթե մասնավանդ միանման էլեկտրական լիցք ունեն և վանում են իրար, այդ դեպքում անձրև չի գոյանա: Ամպրոպները, որոնց հեռահանքով կատարվում է լիցքերի պարպում, խթան են հանդիսանում կաթիլների միացման (զույգ առ զույգ) և անձրևի պատճառ են դառնում:

Ամպեր և ամպամածուքյան բաշխումը երկրագնդի վրա

Տեղումները կապված են գլխավորապես ամպամածության հետ. առանց ամպերի մասնակցության, անմիջապես օդից կոնդենսացումը կատարվում է միայն ստորին շերտերում և մեծ չափեր չի ընդունում: Ամպերը գոյանում են օդի վերընթաց հոսանքների շնորհիվ, երբ սառչելուց նրա գոլորշիները հասնում են հազեցման աստիճանի և խտանում են, հեռակարար նրանք

կազմված են ջրի մանրագույն կաթիլներից կամ սառցե բյուրեղներից, նայած բարձրությանը և ջրմաստիճանին: Դիտված են ամպերի 4 հիմնական տիպեր՝ փետրավոր, կույտավոր, շերտավոր, և անձրևաբեր:

1) Փետրավոր (cirrus—ցիրրուս) ամպերը գոյանում են 8—10 կմ. բարձրության վրա, կազմված են սառցե մանրագույն բյուրեղներից, ունեն թևթև ու թափանցիկ տեսք: Նրանցից տեղումներ չեն թափվում, բայց նրանց երևալը նշան է ցիկլոնների մոտենալուն, իսկ անձրևներից հետո՝ եղանակի լավացման:

2) Կույտավոր (cumulus—կումուլուս) ամպերն ունեն միմյանց վրա կուտակված բամբակյա գնդերի տեսք, որոնց մի կողմը մուգ գույն ունի, մյուսը պայծառ, սպիտակ: Նրանք առաջանում են օդի վերընթաց հոսքերից հասարակածային գոտում, իսկ մեկ մաս ամառը կեսօրից հետո. երեկոյան դեմ, երբ հոսքերն ընդհատվում են, կույտավոր ամպերը կարծես հալչում են: Գտնվում են 2—6 կմ. բարձրությունների վրա, տեղումներ չեն տալիս:

3) Շերտավոր (stratus—ստրատուս) ամպերը համատարած մառախուղային ծածկոցի տեսք ունեն, գոյանում են տարբեր ջերմության, խոնավության, արագություն և ուղղություն ունեցող օդային զանգվածների շփման մակերեսին: Կարող են գտնվել զանազան բարձրության վրա, անգամ 500 մ. և ավելի ցած, որտեղ և ստանում են իսկազան մառախուղի տեսք, նրանցից վեր կարող է երկինքը բոլորովին պարզ լինել:

4) Անձրևաբեր (nimbus—նիմբուս) ամպերը մեծ հաստություն ունեն, հեռաբար մութ զանգվածներ են, ներքևում պատառոտված եզրերով. բարձրությունը 800—1600 մետր: Նրանք հատուկ են ցիկլոններին, խիստ անկայուն են, տալիս են առատ անձրևներ:


Ամպերի այս տիպերը սովորաբար հանդես են գալիս որոշ խմբեր կամ սխտեմներ կազմած, օրինակ, փետրավոր ամպերը հանդես են գալիս շերտավորների (cirro-stratus) կամ կույտավորների հետ (cirro-cumulus), կույտավորները նաև շերտավորների strato-cumulus) և անձրևաբերների հետ (cumulo-nimbus). այս վերջին կոմբինացիան ամպրոպային ամպի անունն է կրում և կարկտաբեր է:

Երկնակամարի ամպերով ծածկված լինելու աստիճանը կոչվում է ամպամածություն, որը որոշվում է մոտավորապես

Օ-ից մինչև 10 բալլերով, առաջինը համապատասխանում է բուրբուղին պարզ, երկրորդը համատարած ամպերով ծածկված երկնքին: Ամպամածությունը հաշվում են նաև տոկոսներով: Ամբողջ երկրագնդի ամպամածությունն ընդունվում է 54 տոկոս (ցամաքինը 48 տոկոս, օվկիանոսներինը՝ 58 տոկոս). հյուսիսային կիսագնդինը 52 տոկ., հարավայինը՝ 57 տոկ.: Ամենափոքր ամպամածությունն ընկնում է պասսատները Երասպետության դոտում (40—45⁰/₀), դեպի բեկոսները ամպամածությունն աճում է, հասնելով մաքսիմումի հս. ւ. 70⁰—80⁰ (66 տոկ.) և հար. ւ. 60⁰—70⁰ վրա (76 տոկ.): Հասարակածի վրա ևս համեմատաբար բարձր է: Ամենամեծ ամպամածությունը (միջին տարեկանը) Ատլանտյան օվկիանոսի հյուսիսում է՝ 80—85 տոկ., որը տարածվում է ինչպես կղզիների, այնպես էլ Եվրոպայի ափերի վրա: Բեկոսի ամպամածությունը սրան դիջում է (62 տոկ.), քանի որ սառն օդը քիչ ջրային գոլորշիներ է պարունակում: Ամենափոքր ամպամածությունը, հասկանալի է, նկատված է անապատներում՝ 20—5⁰/₀: Սովորաբար ամպամածության և տեղումների մաքսիմումները համընկնում են, բայց բարեխառն գոտու ցամաքային կլիմա ունեցող վայրերում, ուր տեղումների մաքսիմումը թափվում է ամռանը, ամպամածությունը մեծ է աշնան ամիսներին: Դա բացատրվում է նրանով, որ ամռան այդտեղ օդը վերընթաց հոսքերից դոյացող ամպերը մեկ օրում շատ ավելի տեղումներ են տալիս, քան աշնան շաբաթների ընթացքում երկինքը ծածկող ամպերը (այդպես են օրինակ ՍՍՌՄ եվրոպական մասը և Սիրիերը մինչև Լենա գետը):

Տեղումների բաշխումը երկրագնդի վրա

Ինչպես ասվեց, երկրագնդի վրա շրջանառության մեջ մասնակցում է 511.000 խոր. կմ. ջուր: Այս քանակը հավասար է 1.002 միլիմետր հաստություն ունեցող համատարած շերտի: Չափումները ցույց են տվել, որ երկրագնդի վրա թափված տեղումները մեկ տարվա ընթացքում կկազմեն մոտավորապես այդպիսի շերտ: Հասկանալի է, որ ցամաքի վրա ավելի քիչ տեղումներ են թափվում (760 մմ.) քան օվկիանոսի վրա (1139 մմ.): Թափվող տեղումները մեծադրոյզիական կայաններում չափվում են հատուկ անձրևաչափերով և ամսվա ու տարվա վերջին բոլոր



Նկ. 6. Մրճույթային տեղումների բախտումը երկրագնդի վրա

Հափուսները արդյունքները գումարելով ստանում են տեղում են
ների ամսական և տարեկան քանակությունները: Անձրեաչա-
փերի մեջ հավաքված ձյունն ու կարկուտը Հափելուց առաջ
հալեցնում են:

Տեղումների բաշխման մեջ մեծ դեր է կատարում աշխար-
հագրական լայնությունը: Ամենաշատ տեղումների գոտին հա-
սարակածային գոտին է, այստեղ ամենուրեք թափվում են
տարեկան 2.000 մմ-ից ավելի անձրևներ, Հարավ. Ամերիկայում—
Ջորջտաունում 2.138 մմ., Պարայում 2.023 մմ., Աֆրիկայում—
Կամերունում 4.195, Բեյտենդորգում (Ճալա կղզի) 4.427 մմ. և
այլն: Ամենուրեք լեռնոտ ծովեզերքներն ավելի շատ խոնավու-
թյուն են ստանում: Մուսսոնների շրջանում ևս շատ տեղումներ
են թափվում, օրինակ, Գեղանի Մալաբարյան ափին, Մալա-
բարեշվարում 8.035 մմ., Չերափունջայում (Ասամ) 12.040 մմ.:
Նրկրագնդի վրա ամենից շատ տեղումներ թափվում են Հավա-
յան խմբի Կաուաչի կղզու վրա՝ 12.090 մմ.: Այսպիսով բացար-
ձակ մաքսիմումն ընկնում է ոչ թե օվկիանոսների, այլ օվկիա-
նոսային կլիմա սենցող ցամաքների լեռնալանջերի վրա:

Տեղումների միջինումը ընկնում է պասսատների գոտուն,
հասկապես ցամաքների արևմտյան ափերին մոտ: Մահարայում
25—40 մմ., Կալահարիում 50—60 մմ., Հյուս-
Չիլում 8 մմ., հենց այստեղ, Իկիկե բնակավայրում
ընդամենը 1 մմ. տարեկան: Բարեխառն գոտում ցամաք-
ների արևմտյան ափերն ավելի շատ տեղումներ են ստա-
նում արևմտյան քամիների շտրկով: Նույն Չիլում, հար. և
32⁰-ից հարավ նրանց քանակը հասնում է 2.000 մմ-ի, դրանից
արևելք, Պատագոնիայում կազմում է ընդամենը 200 մմ., Բրի-
տանական կղզիներում 1.000—4.000 մմ. և ավելի, Ամերիկայում
Վանկուվեր կղզու արևմտյան ափին 5.000 մմ.: Միջերկրական
ծովի ավազանում ևս տեղումները բավականին մեծ քանակու-
թյուն են կազմում, ինչպես օրինակ Նեադոլում 850 մմ., Հոու-
մում 920 մմ., Ջենովայում 1.340 մմ., Կրայնայում 3.173 մմ.,
Դալմացյան ծովափին 4.642 մմ., Կորֆու կղզում 1.220 մմ.:

Չյան տեղումները մեծ չափերի են հասնում ցուրտ և բա-
րեխառն գոտիներում, ուր ձյունը ոչ միայն տեղում է ամեն
ձմեռ (ինչ ցուրտ գոտում սովորաբար նաև ամառը), այլև բա-
վականին հաստ ծածկ է գոյացնում ցամաքի, ինչպես նաև ծո-
վերի սառույցների վրա: Հյուս. կիսագնդում 30⁰ գուգանեոից
հարավ ձյունը հազվադյուռ երևույթ է. Ասիայում հասնում է

մինչև Կանտոն (հա. Լ. 23⁰): Միջերկրական ծովի հյուսիսային փեղերին թեպետ ձյունը ամեն տարի տեղում է (Միլանում տարեկան 9 օր, Նեապոլում 1 օր), բայց ձյունածածկ չի դոյանում Միցիլիայում և Կորֆու կղզում ձյուն պատահում է 10—12 տարին մեկ անգամ. Միացյալ Նահանգներում ձյուն չի գալիս միայն Փլորիդա թերակղզու և Կալիֆոռնիա նահանգի հարավում: Հար. Ամերիկայում ձյուն տեղում է Բուենոս-Այրեսում (հար. Լ. 34⁰37') և Մոնտեվիդեոյում (34⁰35'), Չիլիի փեղերին հասնում է մինչև 32⁰, Ավստրալիայում—Սիդնեյում (34⁰) և հարավագյուտ Կվինսլենդում (27⁰28'): Աֆրիկայի ծայր հարավում ևս ձյունը հակվազյուտ է: Չյան ծածկի տևականության սահմաններն էլ ավելի են շարժվում գեպի բևեռները. այսպես, Փարիզում նա մնում է ընդամենը 10 օր, Լեյպցիգում 45, Վարշավայում 60, Բուխարեստում 65, Ռիդայում և Կիևում 100, Մոսկվայում 150, ՍՍՌՄ եվրոպական մասի հյուսիսում 200—240 օր: Հյուս. Ամերիկայում՝ Նյու-Յորք, Վաշինգտոն, Սեն-Լուի և Սանտա-Ֆե քաղաքները միացնող գծից հյուսիս ձյունածածկի տևողությունը 30 օր և ավելի է, իսկ 90 օրվա ձյան ծածկի գիծն անցնում է Բոստոն, Դևարուա, Մեդիսոն և Միննեսոտայի քաղաքներով:

Չյան ծածկի հաստությունն ամենից մեծ է ՍՍՌՄ եվրոպական մասի հյուսիսում և հյուսիս-արևելքում, հատկապես Ուրալում՝ 70—80 սմ., հար. Լ. 58⁰-ից հյուսիս մինչև 90 սմ. և ավելի, Չերզինում 98 սմ., Արևմտյան Միբրիում 50—70 սմ.: Աև, Ալոպի և Կասպից ծովերի փեղերին 10 սմ.-ից պակաս խիստ բարակ է ձյան ծածկը նաև Անդրբայկալում (Չիտայում 8 սմ., Օլովյաննայա կայսրանում 2 սմ.):

Չյան ծածկը պաշտպանում է հողը սառչելուց, հետևապես նպաստում է խոտային բուսականության աճմանը: Արևելյան Միբրիում հողի հավերժական սառածությանը նպաստում է ձյան ծածկի համարյա քաջակայությունը: Մյուս կողմից, ձյան վրա ընկնող ճառագայթային էներգիայի 84 տոկոսը անդրադարձվում է, 16 տոկոսը գործադրվում է հալչելու վրա, հետևաբար օգը ձյան ծածկից ջերմություն չի ստանում և այդ պատճառով խիստ սառչում է:

5. ՑԱՄԱՔՆԵՐԻ ԵՎ ԾՈՎԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԼԻՄԱՅԻ ՎՐԱ

Երկրագնդի մակերեսի 29,2 տոկոսը (149 միլ. քառ. կմ.)՝ բռնաւմ են ցամաքները, իսկ 70,9 տոկոսը (361 միլ. քառ. կմ.) ծովերն ու օվկիանոսները: Մենք տեսանք, թե օդի ջերմությունը, խոնավությունը և ճնշումն ինչպիսի փոխակերպություններ են կրում ջրի և ցամաքների առկայութեան հետեանքով: Եթե ամբողջ երկրագունդը պատած լիներ միայն ցամաքով, կլիմայական պայմանները կախված կլինեին միայն աշխարհագրական լայնությունից, մանավանդ, եթե ենթադրվող ցամաքի մակերեսովույթը միանգամայն հարթ լիներ: Խոնավութեան բացակայութեան հետեանքով գոյություն կունենային ջերմաստիճանի մեծ ծայրահեղություններ, իզոթերմերը ինչպես և իզոթարները կունենային գուղահեռների ուղղություն: Իրականում ջրային տարրերի գերակշռությունը երկրագնդի վրա իր կնիքն է դնում ցամաքների կլիմայական պայմանների վրա, և այդ հատկապես այնպիսի տեղում, ուր օվկիանոսի օդային զանգվածները հեշտութեամբ թափանցում են ցամաքների վրա, ավելի կամ պակաս խորութեամբ: Սակայն ինչքան էլ մեծ լինի օվկիանոսային ազդեցությունը առափնյա վայրերի կլիմայի վրա, այնուամենայնիվ ցամաքներն իրենց լայն ձգվածութեան և բազմազան ուղեփոխ շնորհիվ ստեղծում են հատուկ կլիմայական տիպեր, որոնք խիստ տարբերվում են ծովային կլիմաներից: Ցամաքային կամ կոնտինենտալ կլիման, ըստ Կյոպպենի (1938), բնորոշվում է ամպլիտուդների մեծութեամբ, լինի դա ջերմաստիճանի, խոնավութեան, թե մթնոլորտի ճնշման ամպլիտուդ. այդ էլեմենտների թե՛ օրական և թե՛ տարեկան ընթացքը կոնտինենտալ կլիմայում արտահայտվում է ավելի մեծ տատանումներով, քան ծովային կլիմայում: «Քամու միջին արագությունը պակաս է (ուղեփոխ անհարթությունների շնորհիվ), շախններն (օդի խաղաղ վիճակը) ավելի շատ են, տեղումները (հարթությունների վրա) քիչ են հատկապես ձմեռը, օդն ավելի չոր է և հաճախ փոշով լի թե՛ ինսոլյացիան և թե՛ ճառագայթումն ալյուրով ավելի ուժեղ են: Տաք եղանակին դերակշռում են ցուրտ, խաղաղ, աստղալից դիշերները և շոգ ցերեկները՝ ուժեղ քամիներով, կեսօրին մոտ կուլտավոր ամպերով, հաճախ ամպերոպներով և հորդ անձրևներով: Տարվա ցուրտ եղանակին, ընդհանրապես, դերակշռում են օրեր՝ կամ միանգամայն պարզ, կամ

ցածր ամպերով ամբողջովին ծածկված երկնքով, մասնակի ամպամածութուն ձմռանը հազվադուր է լինում:

Շովային և կոնտինենտալ կլիմայի տարբերությունը ցայտուն կերպով երևում է հետեյալ համեմատությունից.

Արտաքին Հերբիդներում հունվարյան միջին ջերմաստիճանը $+5,4^0$ է, ամենատաք ամսինը (օգոստոս) $+12,8^0$, տարեկանը՝ $+8,6^0$ ամպլիտուդը՝ $7,8^0$: Հիշյալ կղզիները գտնվում են օվկիանոսային կլիմայի պայմաններում, Շոտլանդիայի արևմտյան ափերի մոտ նրանց ափերը ողողում է գոլֆշտրամ տաք հոսանքը, և չնայած բարձր լայնություն (57° 32') վրա գտնվելուն, ունեն երևանի համեմատությամբ (հյուս. լայն. 40° 11') 9,2° ավելի բարձր հունվարյան ջերմաստիճան. ի դեպ, պետք է ասել որ Արտ. Հերբիդների ամենացուրտ ամիսը ոչ թե հունվարն է, այլ մարտն է, քանի որ ջրային տարրերի ջերմաստիճանի ինչպես մաքսիմումը, այնպես էլ մինիմումը ցամաքի համեմատությամբ ուշանում են:

Համեմատությունն ավելի պարզ կլինի, եթե վերցնենք համարյա նույն լայնություն վրա գտնվող Կիրենակը (57° 47' հյուս. լայն.) Արևելյան Սիբիրում. այստեղ հունվարյան միջինը կազմում է—27,3°, հուլիսյան միջինը՝ 18,7°, տարեկանը՝—3,8°, ամպլիտուդը կկազմի 46,0°, այսինքն վեց անգամ ավելի, քան Արտ. Հերբիդներում: Զերմություն ինդեքսը, այսինքն տաք ամիսների (0°-ից բարձր է°) ամսական միջին ջերմաստիճանների գումարը Արտ. Հերբիդներում կազմում է 102,2°, Կիրենակում 63,3°, այսինքն գտնվելով միևնույն լայնություն ասկի, ցամաքային կլիմայի երկրներն ստանում են ճառագայթային էներգիայի գործոն քանակության ավելի փոքր բաժին, քան ծովային կլիմա ունեցող երկրները: Այսպես չեն սակայն ցածր լայնությունների վրա ընկած երկրները, որտեղ ցամաքային կլիմայի թե՛ ձմեռվա, թե՛ ամառվա և թե՛ տարեկան ջերմաստիճաններն ավելի բարձր են, վերցնենք համարյա նույն լայնություն վրա գտնվող Տիմբուկտու և Սեն-Լուի քաղաքները (Ֆրանս. Արևմտ. Աֆրիկա).

	Այլս. լայն.	Բարձր. ծով մակ.	Ամենատաք. ամսվա t°	Ամենացուրտ. ամսվա t°	Տար. միջ t°	Ամպլիտու.
Սեն-Լուի (ծովափ)	16° 02'	1 մ.	28,0	19,5	23,5	8,5
Տիմբուկտու	16° 43'	25 մ.	35,0	21,4	29,2	13,6

Արա պատճառը, ինչպես արդեն նշված է, այն վճռուկան նշանա-
կությունն է, որ ունի ցամաքի տաքացումը ամբողջ տարվա ընթաց-
քում. ձմռանն օվկիանոսի ջերմային պոտենցիալը դրա համեմա-
տությամբ նսեմանում է, մանավանդ, որ այդ լայնությունների
վրա օվկիանոսում սառը հոսանքներ գոյություն ունեն: Իրանով
էլ հենց պայմանավորված է Սեն-Լուի քաղաքի ջերմաստիճանի
մաքսիմումի տեղաշարժը դեպի աշուն, երբ օվկիանոսի ջերմու-
թյունը մաքսիմումի է հասնում արեգակի դեմիթով երկրորդ
անգամ անցնելուց, այսինքն անձրևների վերջանալուց հետո:

Ծովային և ցամաքային կլիմաների տարբերության պատ-
ճառն այն է, որ ջերմացումը օվկիանոսներում կատարվում է
ջրի մասնիկների տուրբուլենա շարժումների միջոցով և տա-
րածվում է բավականին խոր շերտում, օվկիանոսը կլանում է
ուղիցիայի 99,6 տոկ. և միայն 0,4 տոկ. է հաղորդում օդին,
դրանով էլ բացատրվում է, թե ինչու օվկիանոսների վրա օդի
օրական ջերմաստիճանների ամպլիտուդները մեծ չեն: Մյուս
կողմից օդի մեջ ևս ջերմափոխանակումը կատարվում է տուր-
բուլենա շարժումների միջոցով և ստորին ու վերին շերտերի ջեր-
մաստիճանները ձգտում են հավասարվել: Հողի ջերմացումը
կատարվում է ջերմանազորահանության միջոցով, հետևաբար
խորը թափանցել չի կարող: Ռադիացիայի միայն կեսն է մնում
հողի մեջ՝ նրան ջերմացնելու համար, մյուս կեսը ծախսվում է
օդի ջերմացման համար, իսկ ձյունապատ մակերեսներից մինչև
84 տոկ.: Այստեղից հետևում է, որ երբ հողը շատ ջերմություն է
ստանում, օդը ևս ուժեղ տաքանում է, երբ հողը սառչում է, որը
բավականին արագ է կատարվում, սառչում է նաև օդը: Հողի մա-
կերեսին, այդ պատճառով, օդի ջերմաստիճանի օրական, ինչպես և
տարեկան ամպլիտուդները մեծ են լինում, իսկ ջերմաստիճանների
մաքսիմումն ու մինիմումը անմիջապես հետևում են հողի տաքա-
նալու և սառչելու ծայրահեղ մոմենտներին, մինչդեռ օվկիանո-
սի մակերեսին նրանք զգալիորեն ուշանում են այդ մոմենտ-
ներից: Ծովային երկրներում մոմենտաբ ամիսը սովորաբար
օգոստոսն է, մոմենտաբարձր՝ փետրվարը: Սառնամանիքները այն-
տեղ մեծ չեն լինում և երկար չեն տևում. ձմեռը ծովի ջրը ջեր-
մությունը հազորդում է օդին և նրա միջոցով հարևան ցամա-
քին: Արժև այստեղ նշել, որ մեկ խոր, մեռը ծովի ջուրը 1⁰
սառչելով 3.118 խոր, մեռը օդի ջերմաստիճանը բարձրացնում է
1⁰ ով, հետևաբար ծովափնյա երկրները բացի իրենց անմիջա-

պէս արեւից ստացած ջերմությունից, օգտվում են նաև ծովի, որպէս վառարանի ջերմությունից:

Օդի խոնավութեան, ամպամածութեան, մթնալորտային տեղումների քանակի ու նրանց սեղոնային բաշխման տեսակետից ևս խիստ տարբերություններ կան ծովային և ցամաքային կլիմաների միջև: Յամաքները ներսում հնարաբերական խոնավությունը կրկնակի ու եռակի անգամ պակաս է օվկիանոսային կլիմայի երկրներից, էլ չլսոսելով այն ծայրահեղ դեպքերի մասին, իբր ցամաքում կարող է մտնել 0-ի (Մոնղոլիայում 1 տոկ., Մահարայում 2 տոկ.), իսկ ծովափերին 100 տոկոսի (Օբկինեյան կղզիներում 86 տոկ., Ամազոնկայի գետաբերանում 89 տոկ.): Օբկինեյան կղզիներում արևի երկալու տեղությունը ցերեկվա 26 տոկ. է կազմում. մնացած ժամանակ երկիրքը պատած է ամպերով, մինչդեռ մեր Միջին Ասիական ռեսպուբլիկաներում ցերեկվա ժամերի 90—94 տոկ. ընթացքում երկինքը բոլորովին տնամպ է. երեանում օդոստոս ամսին ամպամածությունը կազմում է հնարավորի 24 տոկոսը:

Մթնալորտային տեղումների քանակը, որպէս կանոն, ծովափերից դեպի ցամաքները խորքը նվազում է, բայց այնտեղ, ուր ծովից փչող քամիների ճանապարհին լեռներ են բարձրանում, ինչպէս Հնդկաստանում, Արևմտյան Անդրկովկասում տեղումների մեծադուրյն քանակությունն ստանում են լեռների հողմահայաց լանջերը: Սև ծովի հյուսիսային ափերին տեղումները պակաս են, ավելանում են միայն Հյուս. Ուկրաինայում և Բելոռուսիայում, կապված Ատլանտյան օվկիանոսից փչող արևմբայան քամիների հետ: Նկատված է նաև, որ սառը ծովերով և սառը ծովային հոսանքներով ողողվող ափերը շատ աննշան քանակութեամբ են տեղումներ ստանում և նույնիսկ անապատային ընդլիճ ունեն, այդպէս են Սառուցյալ օվկիանոսի և ցածր լայնություններում (բացի հասարակածային գոտուց) ցամաքների արևմտյան սառը հոսանքներով ողողվող ափերը: Սառը ջրերի վրա օդը գոլորշիներով աղքատ է և անցնելով ցամաքների վրա, նա ավելի տաքանում է և հեռանում հագեցման աստիճանից:

Բնորոշ տարբերություն դիտվում է նաև տեղումների օրական և տարեկան բաշխման ընթացքի տեսակետից: Յամաքային կլիմայում տեղումների մաքսիմումը թափվում է տարվա և օրվա տաք կեսի ընթացքում, ծովային կլիմայում ընդհակա-

ասկը Բրիտանական կղզիներում, օրինակ, տեղումների մաք-
սիմումը թափվում է ձմռանը, երբ ցիկլոնային ուժերը հաս-
նում է զարգացման գագաթնակետին, Արևմտյան Եվրոսլայյի նեղ
ձովափնյա շերտը նույնպես աչդ տիպին է պատկանում: ՄՍՌՄ
մեծ մասում մաքսիմումն ընկնում է ամռանը, քանի որ
ձմռանը այնտեղ անտիցիկլոնային ուժերն է իշխում,
օդի վայրէջքաց չոր հոսքերով: Տեղումների ձևաապին
մաքսիմումով բացատրվում է կազմում են Ղրիմի հարա-
վային արև և Ռիոնի ավազանի արևելյան մասը, որը
հանդիսանում է միջերկրածովային ուժերի արտահայտու-
թյուն: Տեղումների ամառային և ցերեկային մաքսիմումը ցա-
մաքային կլիմայում բացատրվում է ջերմացման և նրա հետե-
վանքով օդի ուժեղ վերընթաց հոսքերի դոպացմամբ, ինչպես
արևադարձային գոտում արևի շինթային դիրքի ժամանակ:

Մթնոլորտի ճնշման բաշխումը ցամաքի և ծովի վրա մեղ
ժանոթ է արդեն. ինչ վերաբերվում է քամիներին, ապա նրանց
արագությունը, ինչպես և շեղումները, երկրագնդի պտույտի հե-
տեվանքով, ծովի վրա ավելի մեծ են:

Օվկիանոսներում և ծովափնյա վայրերում քամու արա-
գությունը միջին հաշվով մեկ վայրկյանում 4 մետրից ավելի է
(Կրոնշտադտում 5,4 մ., Նոր Երկրի արևելին 7,8 մ., Օդեսա-
յում 6,2 մ.), ցամաքների ներսում խիստ քնկնում է ակեֆի
հետ օդի շփվելու պատճառով (ՄՍՌՄ անտառային գոտում 3,4 մ.,
Ցակուտիայում և Անդրբայկալում 1,3—1,6 մ., Անդրկով-
կասում՝ Թբիլիսոսում 3,2 մ., Նոր-Բայազետում 1,5 մ.):

6. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՄԱՐՁԵՐ

Երկրագնդի կլիմաների բազմազան տիպերի մեջ, ինչքան էլ
նրանք միմյանցից տարբերվելիս լինեն, կարելի է նշել խմբեր,
որոնք թեպետ տարածությամբ միմյանցից հեռու, բայց նման
հատկանիշներով են օժտված. այսպես, օրինակ, Ալպյան լեռնե-
րի կլիմայական պայմանները մոտ են Կովկասի և անգամ Հի-
մալայան լեռների կլիմային. Սահարայի և Կալահարի անապա-
տի պայմանները մոտ են Արաբիային ու Միջին ասիական անա-
պատներին: Ելնելով այդ նմանություններից, փորձեր են կատար-
վել տալու երկրագնդի կլիմաների կլասիֆիկացիան: Հասկանալի է,
որ կլիմայական պայմանների տարբեր արտահայտությունների
համադրատախան հետազոտողների մեջ էլ ձգտում է նկատվել

կլասիֆիկացիայի չափանիշ դարձնել այնպիսի էլեմենտ, որը առավել չափով արտահայտեր կլիմայի առանձնահատկությունները:

Ոմանք որպես չափանիշ են ընդունել օդի ջերմաստիճանը, մյուսները (Չոսկկով)՝ գետերի բնույթը որպես կլիմայի արդյունք, կամ մթնոլորտային տեղումների ակտիվը (Պենկ), մթնոլորտի ցերկուլյացիան (Հեաներ): Վերջին փորձերն արված են Կյոպպլենի և Մարտոննի կողմից, որոնք հիմք են ընդունում ջերմաստիճանները, տեղումները և նրանց տարեկան ընթացքը Նման սկզբունք է ընդունել նաև Լ. Բերգը (աշխ. զոնայակառուցում):

Ստորև բերում ենք, հետևելով Յ. Կրուբերի և Լ. Բերգի ամփոփումներին, երկրագնդի կլիմայական պրովինցիաների համառոտ տեսութունը:

Ըստ ջերմային պայմանների և խոնավության, Կյոպպլենը նշում է կլիմաների 5 խումբ:

A. Եկվատորիալ (կամ տրոպիկ) կլիմաների մարզեր, որտեղ ամառկան միջին ջերմաստիճանները $+18^{\circ}$ -ից ցածր չեն ընդունում են երկրի մակերեսի 36 տոկոսը:

C. Բարեխառն կլիմայի մարզեր, որտեղ ամենացուրտ ամսի միջին ջերմաստիճանները տատանվում են $+18^{\circ}$ և -3° -ի միջև ընդունում են երկրի մակերեսի 27 տոկոսը:

D. Բորեալ կլիմայի մարզեր, որոշակի արտահայտված ցուրտ ձմեռներով և ամեն տարի կրկնվող ձյան ծածկոցով: Ձմեռը, թեկուզ մեկ ամիս, ջերմաստիճանն ընկնում է -3° -ից ցած, իսկ ամառվա ամիսների ջերմաստիճանը $+10^{\circ}$ -ից բարձր է: Արտահայտված է միայն հյուս. կիսագնդում. ընդունում է երկրի մակերեսի 7,2 տոկոսը:

E. Տուներային կլիմայի մարզեր, որտեղ ամենատաք ամառվա ջերմաստիճանը $+10^{\circ}$ -ից ցածր է, այստեղ կարելի է դատել նաև հավերժական սառնամանիքի կլիմայական մարզ, որտեղ տարվա և ոչ մի ամիս 0° -ից բարձր միջին ջերմաստիճան չունի: Այս մարզերը զրավում են երկրի մակերեսի 19 տոկոսը:

Ըստ խոնավության դասվում են նաև B—չոր կլիմաների մարզեր, որտեղ տեղումների քանակը 50 սմ.՝ից պակաս է: Մրանք բաժանվում են 2 ենթախմբի՝ 1) Bs—տափաստանների կլիմաներ, տեղումների քանակը 25-ից 50 սմ. և 2) Bw—անապատային կլիմաներ, որտեղ տեղումները 25 սմ.՝ից պակաս են:

* Մյուս կողմից առաջին 4 խմբում ևս դասվում են առան-

ձին պրովինցիաներ, էկվատորիալ մարզում (A) 2 պրովինցիաներ՝ ԱԷ—հավասարաչափ խոնավ արոպիկահան անտառների կլիմա և ԱԿ— սավանների կլիմա, չոր ձմեռներով և անձրևոտ ամառներով: Բարեխառն կլիմաների մարզում (C) 3 պրովինցիաներ՝ ՇԿ—բարեխառն տաք կլիմաներ, չոր ձմեռներով, ՇՏ—բարեխառն տաք կլիմաներ, չոր ամառներով (միջերկրածովային) և ՇԲ—բարեխառն տաք, հավասարաչափ խոնավ կլիմաներ: Բորեալ կլիմաների մարզերում (D) 2 պրովինցիաներ՝ ԴԲ—ցուրտ և խոնավ ձմեռներով կլիմա և ԴԿ—անամպ և ձյունազուրկ ձմեռներով կլիմա:

Այսպիսով հիմնականում ընդունվում են 12 կլիմայական պրովինցիաներ, որոնց դետալիզացիայի ենթարկված սխեման և քարտեզը տվել է Կյոպպենը:

Էկվատորիալ կամ տրոպիկ (մեգատերմիկ—բարձր ջերմուրքյան) կլիմաներ

Նրկու արևադարձերի միջև և տեղ տեղ նրանց սահմաններից էլ դուրս ձգվում են բարձր ջերմության հսկայական տեպիտոտրիաներ, որոնք չնայած օվկիանոսների լայն տարածման, այնուամենայնիվ բռնում են ցամաքների մեկ երրորդից ավելին: Հասարակածում արևը հորեք 66¹/₂⁰-ից ցած չի լինում, արեվադարձերում ամենացածր դիրքը 43⁰-է: Այդ պատճառով տարին բոլոր այս գոտին ստանում է բարձր ջերմություն, նրա տարեկան ամպլիտուդը շատ փոքր է և իր մեծությամբ զիջում է օրական ամպլիտուդին: Հասարակածի և որևէ արևադարձի միջև ընկած բոլոր լայնություններում արևը զենիթում է լինում երկու անգամ, այդ պատճառով որոշակի նկատվում են ջերմաստիճանի տարեկան երկու մաքսիմումներ, միայն արևադարձերի և նրանց մոտիկ զուգահեռների վրա զենիթային երկու մոմենտները համընկնում են կամ շատ մոտենում միմյանց: Այսպես, հասարակածում արեգակը զենիթային դիրքում է լինում մարտի 21-ին և սեպտ. 23-ին, հյուս. լայնության 2⁰ վրա՝ մարտի 26-ին և սեպտեմբերի 19-ին, 10⁰ վրա՝ ապրիլի 17-ին և օգոստոսի 28-ին, 16⁰ վրա՝ մայիսի 5-ին և օգոստոսի 9-ին, 22⁰ վրա՝ հունիսի 1-ին և հուլիսի 13-ին, 23⁰ վրա՝ հունիսի 11-ին և հուլիսի 4-ին, 23¹/₂⁰ վրա՝ հունիսի 21-ին: Արևի զենիթային դիրքով անցնելը զուգակցվում է երկրի մակերեսից ուժեղ դո-

լորշիացման և օդի վերընթաց հոսանքներն հետ, որոնց հետե-
վանքով թափվում են առատ զենիթային անձրևներ: Սրանք
նույնպես հատարակածի վրա կտան երկու մաքսիմումի պերիոդ-
ներ, բաժանված երկու համեմատաբար չոր պերիոդներով, իսկ
արևադարձերում մեկ մաքսիմում, որից հետո սկսում է ձմռան
համապատասխանող չոր պերիոդը: Այս կլիմայական տիպին
պատկանում են նախ բուն էկվատորիալ երկրներում Կանդոյի
ավազանը և Գվինեյան ծովափի մի մասը Աֆրիկայում, Ամա-
զոնկա գետի ավազանը, Գվինեան և Կենտր. Ամերիկայի հարա-
վային մասը՝ Նոր Աշխարհում. Ասիայում նա ընդգրկում է Մա-
լակկա թերակղզու հարավային մասը և Չոնգյան կղզիները,
Օվկիանիայից նրա մեջ են մտնում այն կղզիները, որոնք հա-
սարակածի շուրջն են համախմբված (Նոր Գվինեա, Կարոլին-
յան, Մարշալյան, Զիլբերտի, Սամոա, Ֆենիքս, Ֆիջի, Նոր Հեբ-
բրդյան և այլն):

Ամբողջ տարին ջերմաստիճանը այստեղ մոտ է 25-ից
26⁰-ի. Ակաստում (Նիգերի վրա) ամենաշոգ ամսի է⁰ 26,6⁰ է, ամե-
նազով ամիսը՝ 24,4⁰, միջին մաքսիմումը հասնում է 32,6⁰, մի-
նիմումը՝ 19,3⁰. Ջերմաստիճանի օրական ամպլիտուդները հաս-
նում են 12—15⁰-ի, բայց խոնավության մեծ չափի պատճառով
այդ տատանումները խիստ զգալի են օրդանիզմի համար, այն-
պես որ գիշերները նույնիսկ ցուրտ կարող են թվալ (Մարտոնն):
Բիլեմ (Պարա) քաղաքում (Բրազիլիա) փետրվարի ջեր-
մաստիճանը 25,2⁰ է, նոյեմբերինը՝ 26,6⁰ (ամպլիտուդը 1,4⁰),
տարեկան՝ 25,9⁰: Ինչպես տեսնում ենք, ջերմաստիճանի միջի-
մումի և մաքսիմումի ուշանալու հատկությամբ սա տիպիկ
ծովային կլիմա է, ինչպես ջերմացման պրոցեսը, նույնպես և
ծախսը դանդաղեցնում են առատ բուսականությունը,
մեծ ամպամածությունն ու խոնավությունը: Ամպա-
մածությունն ու մառախլապատությունը համատարած և
համարյա անընդհատ բնույթ ունեն, հազվադեպ է պատահում,
որ երկինքը մի քանի օր շարունակ անամպ լինի: Կեսօրից հե-
տո, սովորաբար, խիտ ամպեր են կուտակվում, որին հետևում
են ամպրոպն ու հորդ անձրևը, էլեկտրական պարպումներ է
շնորհիվ անձրևաջուրը մեծ քանակությամբ աղոտաթթու է պար-
ունակում, որը նպաստում է հողմահարության և բուսականու-
թյան աճմանը:

Տիդուսների տարեկան քանակը 2.000 մմ. է պակի է (Ակա-

սում 3.650 մմ., Բեկեմում 2.277 մմ.), անձրևոտ օրերի թիվն անցնում է տարեկան 209-ից, շաբաթական 4-ից: Չերմության և խոնավության այսպիսի առատությունը ձեռավորում է էկվատորիալ խոնավ մշտականաչ անառնների լանդշաֆտը բազմաթիվ արմավենիներով և լիաններով պատած այլ ծառերով: Կան շատ էպիֆիտներ (օրխիդեա), Բրազիլիայում կառուցվածառու-Hewea-ն, Ամազոնկայի մե քանի բազուկների ավազանում Victoria regia-ն, կուլտուրական բույսերից սագոյի և կոկոսյան արմավենիները, բանանի, անանասի, մշկընկույզի, պղպղի, կակաոյի և շատ ուրիշների տարածումը մեծ չափերի է հասնում: Բացի էկվատորիալ խոնավ անտառների կլիմայից (ԱԷ), կան նաև սավաննների կլիմա ունեցող (ԱՊ) մարզեր, այսինքն չոր ձմեռների կլիմա: Չոր ձմեռները, սակայն, հատուկ են նաև մուսսոնային մարզերին (ԱՄ), որոնք պատահում են ոչ միայն էկվատորիալ խմբում, այլև բարեխառն,—բորեալ և միջին անգամ տունդրային կլիմայի մարզերում:

ԱՊ կլիմաները կարելի է անվանել ավելի շուտ արևադարձային (արոպիկական), քան էկվատորիալ, քանի որ այդ մարզերում յաջակալում են երկրորդին հատուկ խոնավությունը, տեղումներն ու բուսականության ճոխությունը: Նրանք ընդգրկում են Կոնգոյի ավազանի մարզը պայսաձև գոտիով, Բրազիլիական բաձրավանդակի հյուսիսային մեծ մասը, Գվինանայի ու Վենեսուելայի մի մասը՝ Ամազոնի ավազանից հյուսիս, Ափսարալիայի հյուսիսը, Օվկիանիայի մի շարք կղզիներ (օր. Հավայի):

Տարեկան միջին ջերմաստիճանը 25-ից ցածր է, ամպլիտուդը 5⁰, տեղումները 1.500 մմ.-ից պակաս, չոր պերիոդը 4—6 ամիս անողությամբ, իշխում են պասսատները, որոնց ընդգրկած շերտը նեղանում և լայնանում է կապված արևի զենիթային գերքի հետ շարժվող ճնշման միջնամումի գոտու անկաշարժի հետ: Համեմատական չորության և չոր պերիոդի առկայության հետևանքով անտառներն այստեղ խիստ կրճատվում են, փոխարինվելով նախ արմավենիների պուրակներով, ապա նաև թփուտներով, տիրապետող են դառնում բարձրահասակ խոտերը, ծառային բուսականությունը նեղ միջանցքներ է կազմում գետափերին միայն: Կյուպլենը այս տիպն անվանում է սավանների կլիմա, Մարտոնը նրա մեջ զանազանում է ավելի խոնավ՝ Սուդանի և ավելի չոր՝ Սենեգալի կլիմաներ, որոնք վերջանում են

արդեն անապատների սահմանի մոտ: Ձմեռային չոր պերիոդում ստվանների խոտերը խանձվում են, ծառերը (բառբար) տերևները կորցնում: Ավելի չոր շրջաններում բուսականությունը քսերոֆիտ բնույթ է ստանում: Այս կլիմայում մշակվում են արեվադարձային կուլտուրական բույսերի մեծ մասը՝ բամբակ, բրինձ, շաքարեղեգ, սուրճ, բաթաթ, սորգո, պղպեղ: Կլիմատորիալ կլիմային որոշ չափով նման է արևադարձային երկրների մուսսոնային կլիման: Մա ընդգրկում է Հնդկաստանը, Հնդկաչինը, Աֆրիկայի Գվինեյան և արևելյան ափերը, Ավստրալիայի հյուս. ափերը:

Այս կլիման բնորոշվում է մուսսոնների ազդեցությամբ, որոնք ցամաքի և ծովի ջերմության ու ճնշման տարբերության հետևանքով փչում են ամառը ծովից դեպի ցամաք, իսկ ձմռանը, ընդհակառակը (Մադրասում հունվարին ճնշումը կազմում է 760,7 մմ., հունիսին 753,1 մմ.), առաջինները, հետևաբար, խոնավարեր են, երկրորդները՝ չոր: Ի դեպ, Հնդկաչինի արևելյան ափին, Ինդոնիզորումանդեզյան ափին և Յեյլոն կղզու արևելքում ձմեռային մուսսոններն էլ խոնավաբեր են, քանի որ մինչև այդ վայրերն հասնելը նրանք անցնում են ծովերի վրայով: Հաբավային Ասիայի ուղեփը ևս կարևոր գործոն է հանդիսանում մուսսոնային ազդեցության ձևավորման և տարածման գործում: Հիմալայան լեռները, Հնդկաչինի շղթաները, Ինդոնիզոնաչինեբը, Արաբիայի հարավային եզրը սահմանափակում են ամառային մուսսոնների թափանցման սփերան և գոլորշիների կոնդենսացման լարբատորիաներ են հանդիսանում: Ձմեռային մուսսոնները ձևավորվում են սիբիրյան անտիցիկլոնի մարզից, Կենտր. Ասիայից և ունեն NE ուղղություն, այսինքն համընկնում են հյուս. կիսագնդի պասսատների հետ. ամառային մուսսոնները ենթարկվելով հյուսիս-արևմտյան Հնդկաստանում և Իրանում ստեղծվող մինիմումի ձողղության, իրենց մեջ են ներգրավում նաև Հնդկական օվկիանոսի հարավային կիսագնդի պասսատները, որոնք անցնելով հասարակածը, փչում են դեպի հյուսիս, հետզհետե ստանալով SW ուղղություն:

Հնդկաստանում զանազանվում են մուսսոնային կլիմայի 2 տիպեր.

ա) արևադարձային (արևելի) տիպ, ավելի խոնավ և ջերմաստիճանների փոքր տատանումներով. ընդդեմ է Մալաբարյան ափի, Բենգալիայի և Ասամի համար, որտեղ լեռները (Արևմտ-

յան Հանդեսներ, Հիմալայան լեռներ և Բիրմայի շղթաներ) պատնեշի դեր կատարելով պահպանում են խոնավության և տեղումների ամենամեծ քանակությունը: Այս տիպը կոչվում է նաև բենգալյան: Ամառային մուսսոնները Մալաբարյան ափին են հասնում հունիսի սկզբին, ապա և տարածվում են դեպի հյուսիս. թվում է, ծովից մութ պատնեշ է բարձրանում և հանկարծակի տարերքը մոլեգնում է, հովիտները դղրդում են որոտից: Երկնքից ասես ջրի գետեր են թափվում, միայն հունիս և հուլիս ամիսներում թափվում է տարեկան տեղումների քանակի $\frac{3}{4}$ -ը:

Մահաբալեշվարում (Սրեմտյան Հանդեսների վրա, 1.384 մ. բարձր.) միայն հուլիսին թափվում է 2.680 մմ., Հիմալայների ստորոտին այդ պոթիկումը մի քիչ երկար է տևում: Չերբապունջայում հունիսից մինչև օգոստոս 6 մեարից ավելի (6.393 մմ.) ջուր է թափվում. դեկտեմբերին ամառային մուսսոնը վերջանում է և հաստատվում երաշտը, սկսում են փչել ձմեռային մուսսոնները, որոնք լեռներից լիջնելով տաքանում են և ավելի չորանում, հատկապես չոր պերիոդի վերջում ջերմաստիճանները հասնում են մաքսիմումի (ապրիլ մայիս ամիսներին), մոտավորապես 30⁰ միջինի:

Գաշտերն այրվում են երաշտից, տեղումներ համարյա չեն թափվում (օր. Բոմբեյում վեց ամսվա ընթացքում, դեկտեմբերից մինչև մայիս, թափվում են միայն 5 մմ. տեղումներ): Ահա, թի ինչու ընակչությունն անհամբերությամբ է սպասում ամառային մուսսոնի սկսվելուն և ինչու երբեմն նրանց ուշանալու հետևանքով անբերրեթյուն և սով է առաջանում (օր. 1900 թվին ամառային մուսսոնները մեկ ամսով ուշացան): Տիրապետում է բրինձի կուլտուրան:

բ) Մյուս տիպը, մերձարևադարձային, կամ կենտրոնական հնդկաստանյան տիպն է, բավականին չոր, ջերմաստիճանի զգալի տատանումներով (15⁰-ից բարձր), այստեղ Հնդկաստանի կենտրոնական նահանգներում հանդես են գալիս մինչև իսկ «ձմեռներ». նման տիպ գոյություն ունի նաև Գանգեսի հովտում: Նագպուրում ջերմաստիճանի միջին մաքսիմումը հասնում է 45⁰-ի, միջին մինիմումն ընկնում է մինչև 7,8⁰: Նոյեմբերին և դեկտեմբերին Գանգեսի հովտում փչում է N W մուսսոնը, որը ցրախ ալիքներ է բերում, ձմեռը չոր է: Ամառային մուսսոնն այս մարզի վրա տարածվում է երկու ճյուղերով

դրանցից մեկը Սրեմոյան Հաղևանների ուղղութեամբ ընթանալով դեպի հյուսիս և թեքվելով արևելք, տարածվում է կենտրոնական նահանգների վրա, մյուս ճյուղը զալիս է Բենգալյան ծոցից և թեքվելով արևմուտք, բարձրանում է Գանգեսի հովտով։ Այս ճյուղերի ինտենսիվութեան համեմատ, անձրևները ավելի վաղ են սկսվում մերթ Բենարսում, մերթ Նագպուրում։ Անձրևվային պերիոդի սկսվելով օդի ջերմաստիճանն արագորին իջնում է, միջին հուլիսյան⁶ 10⁰-ով ցածր է մայիսյան միջինից։ Անձրևներն սկսվում են ոչ այնպես հանկարծակի, ինչպես Բենգալյան մարզում, բայց քիչ ավելի երկար են տևում. չոր ձմեռային ժամանակաշրջանը ընդհատվում է մի քանի հորդ անձրևովներով, բայց ընդհանրապես տեղումներն այստեղ պակաս են (Նագպուր 1.140 մմ.) և գյուղատնտեսական կուլտուրաների մասնագիտացումն այլ է (եգիպտացորեն, հացահատիկներ, բամբակ, հաշիշի կակաչ)։

Մուսսոնային կլիմայի նշված երկու տիպերն էլ ունեն իրենց այլատեսակները, օրինակ րենգալյան տիպի մի այլատեսակն է Կորոմանդելյան օփի կլիման, որտեղ ամառային մուսսոնը միայն չնչին տեղումներ է բերում, իսկ ձմեռայինը՝ մեծ քանակութեամբ։ Մադրասում սեպտեմբերից դեկտեմբեր թափվում են տարեկան տեղումների²/₃-ը։ Երկրորդ տիպի արևմտյան այլատեսակն է Փենջաբի կլիման, որ ընդունվում է տեղումների փոքր քանակութեամբ (Փեշավերում 340 մմ.), նրանց տարվա ընթացքում համեմատաբար համաչափ բաշխմամբ, ջերմաստիճանների մեծ տատանումներով (Լագորում հունիսը 34,3⁰, հունվարը 12,1⁰, միջին մինիմումը 0⁰-ից ցածր) և մինչև իսկ անապատային լանդշաֆտի տարածմամբ (Թար անապատ)։

Հնդկաչինում նույնպես մուսսոնային կլիման է իշխում, միայն արևելքում, Աննամում նկատվում է ձմեռային անձրևներ, ինչպես Կորոմանդելյան օփին։ Չինաստանում անձրևներ տալիս են ինչպես ամառային, այնպես էլ ձմեռային մուսսոնները, և խոնավությունը տարվա ընթացքում բավականին հավասարաչափ է բաշխված, չնայած կլիմայի կոնտինենտալութեան։ Ինդոնեզիան, ինչպես և Ալստրալիայի հյուսիս-արևելյան և արևմելյան օփերը նույնպես ենթակա են մուսսոնային քամիների ազդեցութեան, բնորոշ է, սակայն, որ Զոնդյան կղզիները, Բորնեոն և անգամ Նոր Գվինեան չոր ժամանակաշրջան չունեն, իսկ ճնշման և ջերմաստիճանների աննշան տատանումները, մեծ

քանակութեամբ տեղումները, և փարթամ բուսականութիւնը
թուշը են տալիս այս մարզը վերագրել հասարակածային ԱԲ
կլիմային:

Անապատային կլիմաներ (արևադարձային տիպ)

Ախտ չոր (կամ արիդ) կլիմա ունեցող վայրերը, որոնք երկրա-
գնդի վրա հսկայական տարածութիւններ են բռնում, ձգված են
արոպիկական բարեխառն և բորեալ գոտիներում: Նրանք իրենց
հարևան կլիմայական մարզերի չորացած տեսակն են հանդիսա-
նում և առաջացել են նախկինում տիրապետած կլիմայական
պայմանների դեգրադացիայի հետևանքով: Սահարան սկսվում է
սովանների կլիմայի հյուսիսային սահմանից, Արալո-հասպյան
անապատները մեր չոր տափաստաններին են հաջորդում և հա-
րավում փոխարկվում են նույնպիսի տափաստաններով, որոնք
ընդգրկում են Միջին ասիական նախալեռների գոտին: Բայց
թե առաջինը և թե երկրորդը կրում են անցյալի ավելի խոնավ
կլիմայի հետքեր՝ խորը գետահովիտները, բարեխառն գոտու օր-
գանակուն մնացորդները:

Ամենաընդարձակ անապատները տարածված են երկու կի-
սագնդում էլ պասսատների շերտում, այսինքն մերձարևադար-
ձային բարոմետրիկ մաքսիմումների գոտիներում (հյուս. 1-
30—35⁰ և հար. լայն. 28—30⁰), ինչպես և սրանց ու հասարակածա-
յին միջինումի գոտու միջև: Սահարա անապատն ընկած է
հյուս. լ. 15—30⁰, նույն լայնութիւններում են նաև Արարիա-
յի (Նեֆուզ, Գահնա), Իրանի (Առթ), Հնդկաստանի (Թար), Հյուս.
Ամերիկայի (Մոնտիկ, Մեծ Ավադանի), իսկ հարավային կիսագնդում
Աֆրիկայի (Կալահարի), Հար. Ամերիկայի (Ադակամա) և Ալատ-
բալթայի (կենտր. և արևմտյան մասերում) անապատները: Ա-
սիայում անապատներն ու անապատային տափաստանները
մինչև հյուս. լայն. 50⁰ են հասնում, որը կասկած է թէ սուր-
տրոպիկ մաքսիմումի առանցքի դեպի հյուսիս շեղվելու և թե
կենտրոնական Ասիայի լեռնազրահան յուրահատուկ կառույ-
վածքի հետ: Ընդարձակ սարահարթերը ամեն կողմից եղբրված
են բարձր լեռներով, որոնք արգելակում են դրսից խոնավաբեր
օդային զանգվածների մուտքը, այդպիսիք են Արևմտյան-
Թուրքեստանի և Գորի անապատները:

Անապատների առաջացումը բացատրվում է սուրտրոպիկ մաք-

սխմումի դոտիններում օդի վայրընթաց հոսանքներով և պասսատներով, որոնք համեմատաբար ցուրտ վայրերից փչում են դեպի տաք վայրեր, որի հետևանքով օդի մեջ հղած գոլորշիները հեռանում են հագեցման կետից և կանոնում հանդիպած վայրերի խոնավությունը: Իսկ վերաբերվում է մեր Թուրանի դաշտավայրի անապատներին, ապա նրանք էլ հարավից եղերված են բարձր լեռներով, իսկ դեպի հյուսիս բաց են և տարին բազմաթիվ անգամ Մառուցյալ օվկիանոսից փչող քամիների ազդեցութեամբ, որոնք պասսատների հատկութունն ունեն: Արևադարձային անապատների մեջ էլ կա ավելի օվկիանոսային տիպ (Կալահարիի և Սահարայի արևմտյան առափնյա գոտիները, Ադալաման, Կալիֆորնիա թերակղզու արևելքը):

Այսպիսով անապատ առաջացնող գլխավոր պատճառներն են. 1) օվկիանոսային ազդեցութեամբ բացակայությունը (ցամաքների կենտրոնում գտնվելու, կամ լեռնային խութերով շրջապատված լինելու հետևանքով) կամ այդ ազդեցութեամբ չհագեցումը (պասսատների կողմից), 2) գերիշխող անտիցիկլոնային ռեժիմը օդի վայրընթաց հոսանքներով հասգերձ (Սաիա, Յվատրալիա), որը հանգես է դալին հատկապես սուբարկտիկ բարոմետրիկ մաքսիմումների ձևով և անգամ օվկիանոսների վրա կրճատում տեղումների քանակը:

Սահարան փրված է հյուսիսից հարավ 1.500 կմ., արևմուտքից արևելք՝ 5.000 կմ.: Նա տաք գոտու ամենալայնարձակ անապատըն է, նրա օդի հարաբերական խոնավությունը աննշան է (20 տոկոս), երբեմն ընկնում է մինչև 0⁰-ի, երբ մարդկանց շուրթերը ճաքձքում, հզուկները պոկվում են, հատկապես հարավից փչող քամիների ժամանակ (Նգիպտոսում խամսինի, Ալժիրի հարավում՝ սիրոկկո կամ սիմոնի), Կահիրեում տեղումների տարեկան քանակությունը 32 մմ. է, Ալժիրի հարավում (Վարզլա) տեղումների տարեկան քանակը 107 մմ., անձրևային օրերը տարվա մեջ 13, Չերմաստիճանի օրական տատանումները շատ մեծ են. Կահիրեում հաճախ սառնամանիքներ են լինում, բայց օգոստոսին նկատվել են խիստ բարձր Չերմաստիճաններ (47⁰), ամենացուրտ ամսի է՝ 12,4⁰ է, միջին հուլիսյանը՝ 28,5⁰: Ալժիրի հարավում հունվարը 9,3⁰, հուլիսը՝ 32,2⁰, միջին միջնամյակը՝ —1,8⁰: Անգամ Ինսալայում (N 27⁰23') նկատված է միջնամյակը —1,4⁰, որը արդյունք է հաճախակի կրկինըվող ոչ մեծ սառնամանիքների:

Չերմաստիճանները ամպլիտուդները դեպի հարավ ավելիանում են: Հազվագյուտ անձրևները միշտ հորդառատ են լինում և հեղեղներ առաջացնում, որոնք քշում տանում են հոսեր և անգամ մարդկանց: Քամիները մեծ ուժի են հասնում և բարձրացնում ավազի սյուներ և ամպեր, որոնք կուրացնում և խեղդում են մարդկանց ու կենդանիներին, ահ ու սարսափ ազդում քաղաքացիների վրա:

Անապատների օվկիանոսային տիպը, որի ամենաբնորոշ ներկայացուցիչն է «Գարուայի» կլիման (Պերուի և Չիլիի արևելքը), Չերմաստիճանի մեծ ամպլիտուդներ չունի, օդի խոնավութունը (80—57 տոկոս) ավելի է, բայց երբեք հազեցմանչի հասնում և տեղումների փոխարեն միայն մառախուղ է գոյացնում, որից հողի մակերեսին ցոլ է գոյանում, տեղացիները դրան կոչում են գարուա: Թովափնյա շերտում, մինչև 1.500 մետր բարձրության վրա անձրևներ պատահում են երկու-երեք տարին մի անգամ, բայց հիշյալ բարձրությունն ունեցող վայրերը համարյա միշտ մառախլապատ են լինում: Լիմա քաղաքում (Պերու) տարեկան թափվում են 46 մմ. տեղումներ, ամենատաք ամսի Չերմաստիճանը (փետրվար) 23⁰ է, ամենացուրտը (օգոստոս)՝ 15,9⁰. սա համեմատաբար ցածր Չերմաստիճան է, եթե նկատի ունենանք, որ քաղաքը հասարակածից միայն 12⁰ է հեռու և բարձրությունն էլ մեծ չէ (158 մետր): Էլ ավելի ցածր Չերմաստիճան ունի (աշխարհագրական լայնության համար նորմալ 1⁰-ի համեմատությամբ) հարավ-արևմտյան Աֆրիկայի արևը՝ Դամարի երկիրը. այստեղ Մվակոպմունդ քաղաքում (22⁰42' հար. լայն.) ամենատաք ամսով՝ ապրիլի Չերմաստիճանը 17,4⁰ է, ամենացուրտ (օգոստոս) ամիսինը 13,6⁰, տարեկան ամպլիտուդը՝ 3,8⁰. փոքր են նաև օրական ամպլիտուդները. այստեղ շոգ ցերեկվան դով ու նույնիսկ ցուրտ գիշեր չի հաջորդում, ինչպես Մահարայում, խոնավության հետեանքով շոգը խեղդող տոթի է փոխվում: Տեղումների տարեկան քանակությունը 20 մմ. է: Յ.յա արպի կլիմայի գոյությունը կազմած է նըշված մարզերի գիրքի հետ. նրանք զանվում են օվկիանոսային սառը հոսանքների (Պերուանական և Բենգոլիյան) և նրանց վրայով անցնող պասսատների ազդեցության տակ. սպասանները սառը ջրից ստանում են միայն նրա ցածր Չերմաստիճանները, իսկ խոնավությունը աննշան չափով, քանի որ սառը ջուրը չի գոլորշիանում: Տաք ցամաքի վրա այդպիսի օդը հեռանում է

հաղեցման աստիճանից և ընդունակ է միայն զոյացնել մա-
ռախուղ, հատկապես ձմռանը:

Բարեխառն գոտու անապատային կլիմա
(արալյան տիպ)

Այս տիպի կլիմա ունեն թուրանի դաշտավայրը, Արևելյան
Թուրքեստանը, Մոնղոլիան, Տիբեթը, Իրանի և Փոքր Ասիայի
կենտրոնական սարահարթերը, որոնք շրջապատված են լեռների
շղթաներով:

Տեղումները բոլորովին չեն բացակայում և դարձանը կամ անձ-
րելից հետո ավելի խոնավ տեղերում հողը ծածկվում է անսա-
խտով: Բոլորովին անկենդան անապատներն այստեղ միայն
առանձին կղզիներ են կազմում, իսկ մնացած տարածություն-
ները տափաստաններ են, որոնք ամառը խանձվում են: Ձնը-
մաստիճանի տարեկան ամպլիտուդները բավականին մեծ են.
ամառը հաճախ Սահարայի նման շնրմություն է հաստատվում,
իսկ ձմեռը դաժան սառնամանիքներ են լինում: Նրանց մեծ
մասում դրա պատճառն է սարահարթերի մեծ բարձրությունը:
Թերմիզում (Թուրան) հուլիսյան միջինը 32° է, հունվարյան
միջինը՝ -3° , նկատվել են մինչև -20° -ի հասնող սառնամանիք-
ներ (Տաշքենտում մինչև $-29,5^{\circ}$, Սոված տափաստանում անդամ
 -34°), Յայղամում (2.660 մ. բարձր.) տարեկան միջինը միայն
 $3,7^{\circ}$ է, հուլիսյանը՝ $17,6^{\circ}$, հունվարյանը՝ $-8,7^{\circ}$, բայց մաքսի-
մումները հասնում են 33° -ի, մինիմումները՝ -29° -ի, տեղում-
ները՝ 110 մմ. հունիսյան մաքսիմումով (20 մմ.): Թեհրանում
(1.160 մ. բարձր.) տարեկանը 16,5⁰, հուլիսյան միջինը 29,4⁰,
հունվարյանը 0,9⁰, տեղումները 250 մմ. է, մաքսիմումը (50 մմ.)
մարտին:

Ամպամածությունն այս անապատներում Սահարայից բարձր է,
հարավում հասնում է 50 տոկոսի, հայտնի են նաև ուժեղ քա-
մինները, որոնք ավազի ամպեր են բարձրացնում, իսկ
հյուսիսում պատահում են նաև ձյունախառն
բուքեր, ինչպես Միրբիրում: Նման կլիմայական պատկեր
ենք նկատում, քիչ ավելի մեղմացած ձևով, ԱՄՆ-ի Մեծ
Ալպազանում, Ատակամայում և անգամ Պատագոնիայում:
Ամենուրեք, հատկապես բարձր սարահարթերում, մեծ են ջեր-
մաստիճանի օրական ամպլիտուդները (Տիբեթում 25—26⁰), ո-
րոնք նպաստում են քաղաքների մեխանիկական ինտենսիվ հոգմ-
նահարության:

Բարեխառն կլիմաներ, առանց ճմեռների
(մերձարևադարձային)

Այս տիպին պատկանում են միջերկրածովային և չինական կլիմաները, ինչպես և Հար. Ճապոնիայի. Արևմտյան Անդրկովկասի, ԱՄՆ-ի արևելյան մասում հարավային նահանգները, Հար. Ամերիկայում Լապլատայի ավազանի և Աֆրիկայի ծայր հարավի կլիմաները:

Տարեկան ջերմաստիճանները ամենուրեք 20⁰-ից պակաս են, 10⁰-ից ցածր ջերմաստիճան ունեցող ամիսների թիվը 4-ից ավելի չէ. աշխարհագրական դիրքի տեսակետից այս գոտին ընկնում է 30—40⁰ զուգահեռների միջև (մոտավորապես): Ձմռանն այս շերտով օդային զանգվածները շարժվում են դեպի արևելք, ամառը այստեղ հաստատվում է բարձր ճնշման մերձարևադարձային մաքսիմումը իրեն հատուկ չորությամբ: Այդ հատկանիշները առավել արտահայտված են միջերկրածովային կլիմայի տիրապետության մարզերում, որոնց բնորոշ հատկութունն է չոր ժամանակաշրջանի գոյութունն ամառվա ընթացքում: Ամենից առաջ, այդպիսի կլիմա գոյութուն ունի Միջերկրական ծովի ավազանում, որտեղից և նա ստացել է իր անունը (Պիրենեյան թերակղզի, Հար. Ֆրանսիա, Ապենինյան և Բալկանյան թերակղզիներ, Ղրիմի հարավային ափը, Փոքր Ասիայի ափերը, Սիրիա, Պաղեստին, Աֆրիկայի հյուսիսային ափերը), ըստ որում արևմուտքում այդ կլիմայի բնույթն ավելի օվկիանոսային է (Փոբթուգալիա), իսկ արևելքում ավելի կոնտինենտալ (Պաղեստին):

Ամառն այս մարզը ընկնում է պասսատների ազդեցության տակ, իսկ ձմեռը այստեղով անցնում են ցիկլոնները, բերելով խոնավութուն և փոփոխական եղանակ. այդ պատճառով ձմեռն այստեղ անձրևային է, ամառը չոր: Չոր պերիոդի տևողութունն աճում է արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ ուղղությամբ. այսպես, օրինակ, հյուս. Լ. 38⁰-ով արևմուտքից արևելք շարժվելիս նկատում ենք միջնուրտային տեղումներ Քանակի հետևյալ փոփոխությունները. Լիսաբոնում 760 մմ. Պալիրմոյում (Սիցիլիա) 740 մմ., Աթենքում 391 մմ., Ջմյուռնիայում նորից աճում է հասնելով 650 մմ.: Ջերմային ուժի-

մի և տեղումների տարեկան ընթացքի մասին պատկերացում կարելի է ստանալ հետևյալ աղյուսակից:

	Աշխ լայնու- թյուն	Ամենատաք ամսվա t°	Ամենացուրտ ամսվա t°	Տարեկան միջ. t°	Տեղ մաքս. և մինիմումը մմ.
Լիսսաբոն	38° 48'	21,7	10,2	15,5	մաքս. 120 մին. 5
Պալերմո	39° 00	24,9	10,3	17,0	» 130 » 8
Մթենք	38° 00	26,5	8,8	17,2	» 70 » 6
Զմյուռնիա	38° 24'	26,8	7,6	17 0	» 130 » 0

Այսպիսով ամենատաք ամսվա ջերմաստիճանը դեպի արե-վելք մեծանում է, ենթարկվելով ասիական ուժեղ աաքացող զանգ-վածի ազդեցության. ձմեռային ջերմաստիճանները դեպի արե-վելք իջնում են, հետևաբար մեծանում է ամպլիտուդը (Լիսսա-բոնում 11,5°, Զմյուռնիայում 19,2°): Ամենարարձր միջին մաքսիմումները նկատված են Պալերմոյում (45,5°), միջին մի-նիմումը ամենացածրն է Մարսելում (-6,1°):

Այսպիսով միջերկրածովային կլիմայի հիմնական հատկա-նիշը չոր ամառներն ու անձրեաշատ ձմեռներն են: Այդ երե-վույթի մեխանիկան բացատրվում է սուբտրոպիկ մաքսիմալ ճնշման գոտու տեղաշարժերով՝ ամառը դեպի հյուսիս, ձմեռը հարավ: Ամառն այդ գոտին հաստատվում է Միջերկրական ծո-վից հյուսիս. ցամաքի վրա այդ շերտից դեպի հարավ փչում են պատռասներ, որոնք, ինչպես միշտ, չոր քամիներ են: Ձմռանը, երբ մաքսիմումի գոտին տեղափոխվում է հարավ և հաստատ-վում է Հյուս. Աֆրիկայում, դեպի հյուսիս են փչում հարավ-արևմտյան քամիները, որոնք անցնելով ծովի վրայով լեռնաժա-նում են և մեծ քանակությամբ տեղումներ թափում, կոնդեն-սացիայի ենթարկվելով լեռների վրա: Բացի հիշյալ քամիներից, կան նաև տեղական բնույթ ունեցողներ, որոնք առաջանում են ուղեֆի առանձնահատկությունների, մաքսիմումների և դեպրե-սիաների շնորհիվ: Այսպես, օրինակ, ձմռանը Ֆրանսիայի հա-րավում՝ Պրովանսում փչում է միսարալ կոչվող քամին, որը կենտրոնական ֆրանսիական Զանդվածի ձյունածածկ սառը մա-

կերևույթից ձգտում է դեպի Լիոնի ծոցի վրա գոյություն ունեցող ճնշման դեպրեսիան. ցած թափվելով մեծ բարձրությունից, քամին մեծ ուժ է ստանում և սեղմվելով չորանում ու տաքանում է, բայց այս տաքությունն անբավարար է առած օդի ջերմությունը բարձրացնելու համար: Բարևանյան թերակղզու հյուսիս-արևմուտքում՝ Իստրիայում և Դալմացիայում եւս փչում է նման քամի, որը կոչվում է բարա: Մյուս կողմից, ամառը, երբ մաքսիմում է հաստատվում Հյուսիս Ֆրիկայում և տեղական դեպրեսիաներ են գոյանում Միջերկրական ծովի արեւմտյան ավազանում, դեպի հյուսիս փչում են ծայր աստիճան տաք և չոր քամիներ, որոնք օդային զանգվածներ են բերում Սահարայից. նրանք Ատլասի լեռներից իջնելով, նորից տաքանում և ավելի չորանում են և առանձին ուժով զգացվում են Ալժիրում և Սիցիլիայում, որտեղ նրանց անվանում են սիրպիլա. Իտալիա և Դալմացիա սերտկիսն հասնում է խոնավացած, մինչդեռ Սիցիլիայում նա տաք է և չոր. եղել են դեպքեր, երբ նացերեկվա ջերմաստիճանը բարձրացրել է մինչև 49,6⁰-ի, իսկ հարաբերական խոնավությունն իջեցրել 10 տոկոսից էլ ցած (Պալերմո):

Լանդեզոսում (Հար. Ձրանսիա, Պրովանսից արևմուտք) տեղական չոր և տաք քամին կոչվում է օբսևն:

Պրովանսի տիպիկ միջերկրածովային կլիման Մարտոնը նկարագրում է հետևյալ կերպ. Մարտիում հունվարի միջին ջերմաստիճանը +6,3⁰ է, հուլիսյանը՝ 22,3⁰, բայց ծայրահեղ միջինները հասնում են —6⁰ և +33⁰-ի: Հետևաբար այստեղ նկատվում է իսկական ձմեռ ցրտի հաճախակի պոթիկումներով: Չորմաստիճանն իջեցնում է միստրալը, որն ամենից հաճախ հանդես է գալիս փոխանցիկ եզանակներին, դարնանն ու աշնանը: Ապրիլն ու հոկտեմբերը ամենից անձրևոտ ամիսներն են (49 և 89 մմ.):

Դարնանը երկինքը պատած է լինում ամպերով, որոնք հորդ անձրևներ են տալիս, սրանք հաճախ այնպիսի ուժգնության են հասնում, որ ակոսում են դաշտերը և հեղեղում քաղաքի փողոցները: Անձրևային օրերի թիվը մեծ չէ (Մարտիում 97, Նիցոցայում 66), բայց տեղումների տարեկան քանակը բարձր է, իսկ մի օրվա տեղումները հաճախ հավասարվում են Փարիզի ամսական տեղումներին, միայն հունիսից սկսած անձրևը հազվադեպ էրևում է և դառնում և ամբողջ շաբաթներ, նույնիսկ ամիսներ

իշխում է կապույտ երկիրքը: Ամպամածությունը, որը տարեկան 40 տոկոս է կաղմում, օգոստոսին ընկնում է 23 տոկոսի: Հունիս, հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում թափվում է տարեկան տեղումների ընդամենը $\frac{1}{3}$ -ը: Հուլիսը 16 մմ. տեղումներով և 23⁰ միջին ջերմությամբ իսկական չորային ամիս է հանդիսանում: Հաճախ միջին վեց շաբաթ երկիրքը մնում է կապույտ, առանց մի հատիկ ամպի: Կամ հավաքվում են թեթև, հեշտությամբ ցրվող ամպեր: Օդը հանդիստ է, միջին ժամի 10—11-ը (առաջտոյան) անտանիկ ջերմություն է դոյանում, կեսօրից սկսած փչում է ծովային բրիզը, թարմություն բերելով իր հետ: Երկրի ներքին մասերում փոքր գետակները ցամաքում են, գարնանը հիտոնայի ծաղկած բուսականությունը խանձվում է, մնում են դաճած, փշոտ կերմեսի կաղնու թփուտները: Սոճու և խցանի կաղնու անառններում հաճախ հրդեհներ են պատահում: Սեպտեմբերին և հատկապես հոկտեմբերին սկսվում են ամպրոպները և անցնում են բարոմետրիկ գեղրեսիաներ (ցիկլոններ) մեկը մյուսի հետևից, որոնց հաջորդում են ցրտի ալիքներ և անձրևներ: Մարտիկում ջերմաստիճանը ընկնում է յուրաքանչյուր ամիս նախորդի հետ համեմատած 5⁰-ով ցած: Մոտենում է ձմեռը:

Միջերկրածովային կլիմայի տարածմանը խանգարում են լեռները, որոնք արգելք են հանդիսանում հիմնական օդային գոնգոլածների ճանապարհին, այնպես որ Բալկանյան թերակղզում, թերակղզային Իտալիայում, Իսպանիայում և Հյուս. Աֆրիկայում այդ կլիման տարածված է ծովափնյա նեղ շերտերում միայն: Իսպանիայում զգացվում է ինքնուրույն մուսոնային ուժեղ մի անկայությունը, Միրիայում և Փոքր Ասիայում՝ անցումն դեպի անապատային կլիմաները, որոնք իշխում են Միջագետքում և Իրանի լեռնային սարահարթերում: Մյուս կողմից աչքի են ընկնում բուն միջերկրածովային կլիմայի երկու տարատեսակներ. 1) վոլտուրալական կամ օվկիանոսային տիպ, փոքր տարեկան ամպլիտուդներով, աշնան և ձմեռային անձրևներով, տեղումներով աչքատ, բայց օդի բավականին խոնավություն ունեցող ամառներով: 2) հուսական կամ կոնտինենտալ տիպ, ջերմաստիճանները մեծ ամպլիտուդներով, ձմեռային և գարնանային անձրևներով և բոլորովին չոր ամառներով: Առաջին տիպը տարածված է Փորթուգալիայի, Մարոկկոյի, Ալժիրի և Թունիսի ափերին, ինչպես նաև օվկիանոսային կղզիներում, երկրորդ տիպը՝

Հունաստանում, Էդեյան ծովի արևմտյան ու արևելյան ափերին: Տիպիկ Միջերկրածովային կլիմայի հանդիպում ենք նաև Կալիֆորնիայում, Չիլիում, որտեղ սակայն լեռները սահմանափակում են նրա տարածումը նեղ շերտով: Բնորոշ է, որ աշնանը, երբ Մեհուա նեղուցի արևմտյան լանջին (ՄՄՆ, Կալիֆորնիա) ամպամածությունը և տեղումները մաքսիմումի են հասնում, արևելյան լանջում երկինքը ըստրովին պարզ է:

Ավելի օվկիանոսային կլիմա նկատվում է Հարավ-Աֆրիկյան Միության հարավային ափին (Կապլենդ): Կեպտոունի և շրջանի համար բնորոշ են երկարատև մառախուղները, տարեկան ամպլիտուդն ընդամենը 3,4⁰ է, նատալում հանդես է գալիս չինական տիպը, չոր ժամանակաշրջանի բացակայությամբ: Այստեղայնում միջերկրածովային կլիմա ունեն հարավ-արևմտյան հատվածը (ամառը բևեռային քամիներ, չորություն), արևելյան ափը մինչև Սիդնեյ և հարավային ափը Մելբուրնից մինչև Ադելաիդա: Այստեղ նա ավելի խորն է թափանցում ցամաքի ներսը և Դարլինգի հարթություններում աստիճանաբար աճող չորությունը հիշեցնում է սիրիական կլիման:

Միջերկրածովային բուսականությունը հարմարված է չոր ամառվան (կոշտ տերևներ, երկար արմատներ և այլն):

Չինական կլիման, որին Բերգը անվանում է մերձարևադարձային դոտու անսառների կլիմա, միջերկրածովայինից տարբերվում է նրանով, որ չոր պերիոդ չունի: Այսպիսի կլիմա հատուկ է Հարավային Չինաստանին, Հարավային Ճապոնիային, սրանից հյուսիս՝ Մանջուրիայում, Կորեայում և Մերձամուրյան երկրում՝ ձմեռները ավելի դաժան չոր են դառնում: Նման կլիմա ունեն նաև ԱՄՆ-ի հարավ-արևելյան նահանգները, Հարավ-Ամերիկայում՝ Պարանա և Պարագվայ գետերի ափազանները, Արևմտյան Անդերկովկասը, Հյուսիսային Հնդկաստանը: Մուսսոնների շնորհիվ այս վայրերում ամառը տեղումներն ավելի շատ են, բայց և ձմռանը անցնում են ցիկլոններ, որոնք նույնպես տեղումներ են բերում: այսպիսով ամբողջ տարին այստեղ բավարար խոնավություն կա:

Բուն Չինաստանում (Շանհայ) ամառը թափվում է տեղումների տարեկան քանակի (1109 մմ.) 40 տոկոսը, ձմեռը 20 տոկոսը, ամենաչոր ամսին (դեկտեմբեր) տեղումները կազմում են 24 մմ., հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին անձրևային օրերի թիվը 36 է, հունվար, փետրվար և մարտ ամիսներին՝ 33:

Ձմռանը Չինական ծովերի վրա առաջանում են ճնշման միխի-
մաւի կենտրոններ, որոնք շարժվում են դեպի հյուսիս-արե-
վելք, իսկ նրանց հետևից շարժվում է անձրևների շերտը՝
Յմառը նույն ծովերից դեպի ցամաք են փչում խոնավաբեր
մուսսոնները: Հուլիսյան ջերմաստիճանները բավականաչափ
բարձր են (Շանհայ 28,6⁰, Հանկոու 28,6⁰), հունվարյանը՝ ցածր
(3⁰ և 3,8⁰), բայց էլ ավելի ընկնում են ջերմաստիճանները
ցամաքային մուսսոնների հետևանքով, ձմեռները դաժան բնույթի
են ստանում:

Շանհայում միջին միխիմումը — 7,4⁰ է. այսպիսով, չնա-
յած չոր ժամանակաշրջանի բացակայութեանը, չինական կլի-
ման աչքի է ընկնում կոնտինենտալութեամբ (անդամ ծովագիւն),
որն արտահայտվում է ջերմաստիճանների մեծ ամպլիտուդներով:
Չինական կլիմայի ֆնացած մարզերի մասին գաղափար կարե-
լի է ստանալ հետևյալ տվյալներից. Սիզնիյում (Ավստրալիա)
տարեկան միջին ջերմաստիճանը 17,2⁰ է, ամենատաք ամսի՝
հունվարյան միջինը 21,9⁰ է, ամենացուրտ՝ հուլիսյանը 11,3⁰ է,
տեղումների տարեկան քանակութեանը 1.265 մմ. է, մաքսիմու-
մը՝ ապրիլին (145 մմ.), միխիմումը՝ օգոստոսին (72 մմ.):
Նոր Օւլեանում, ԱՄՆ-ի հարավում, չնայած ձմռանը հյուսիսա-
յին քամիների առկայութեան, նկատվում է մշտապես խոնավ
կլիմա. տեղումների տարեկան քանակութեանը 1.532 մմ., մաք-
սիմումը՝ հունիսին 170 մմ., միխիմումը՝ հոկտեմբերին 84 մմ.,
ավելի բարձր տարեկան միջին ջերմաստիճան (20,6⁰), բայց
հուլիսյան (27,4⁰) ու հունվարյան (11,7⁰) ջերմաստիճանները
ավելի մեծ տարբերութեան նատալի (Հար. Աֆրիկա) և Ար-
գենտինայի կլիմայի համար բնորոշ են ավելի փոքր քանակու-
թեամբ մթնոլորտային տեղումներ. Իստ-Լոնդոնում թափվում
են 692 մմ., իսկ Բուենոս-Այրեսում 867 մմ., երկու մարզում էլ
մաքսիմումն ընկնում է մարտ ամսին (93—94 մմ.), միխիմումը
հուլիսին (37 և 43 մմ.), այսինքն ամենացուրտ ամսին (ջերմաս-
տիճանները Իստ-Լոնդոնում 14,5⁰, Բուենոս Այրեսում 10,1⁰), Տա-
րեկան ջերմաստիճանները (17,9⁰ և 16,6⁰), ինչպես ամառային ջեր-
մաստիճանները (20,9⁰ և 23,1⁰), մեծ տարբերութեան չունեն, բայց
Նատալում ջերմութեան տարեկան մաքսիմումը հաստատվում
է փետրվարին, այսինքն Բուենոս-Այրեսից մեկ ամսով ուշ
բացի այդ, առաջինում ամառվա ջերմաստիճանը պակաս է, իսկ
ձմեռվանը՝ ավելի է երկրորդից, այս հատկանիշներն, իհարկե,
ցույց են տալիս, որ Նատալում գործ ունենք չինական տիպի

ալիլի օվկիանոսային տարատեսակի հետ, որը սակայն չի արտահայտվում նաև տեղումների ավելացումով, քամիների գերակշռող հյուսիս-արևմտյան ուղղության պատճառով, որոնք ցամաքային բնույթ ունեն:

Արևմտյան Անդրկովկասի կլիման նույնպես (հատկապես սևծովյան ափի հարավային մասի) չինական տիպի է, աչքի է ընկնում ՍՍՌՄ-ի սահմաններում տեղումների ամենամեծ քանակությամբ (Բաթումի 2.500 մմ.), հունվարյան ամենաբարձր ջերմաստիճանով (մոտ $+7,0^{\circ}$, Բաթումի) և ամենափոքր ամպլիտուդներով (16°), բայց Սև ծովի ափերով արկտիկական ցուրտ օդի երբեմնակի ներխուժումների հետևանքով ձմռանը ժամանակ առ ժամանակ ջերմաստիճանների խիստ անկում (Սոչիում մինչև $-8,6^{\circ}$) և սառնամանիքներ են պատահում, որոնք մեծ վնաս են հասցնում այստեղ լայնորեն տարածված մերձարևադարձային կուլտուրաներին: Հուլիսյան միջին $^{\circ}$ հասնում է $23-24^{\circ}$ -ի, տեղումների միջինում է մայիսին, մաքսիմումը՝ Ռիոն գետի ստորին հոսանքի ավազանում՝ օգոստոսին, Սոչիում գեկտեմբերին և այլն: Քամիները մուսսոնային բնույթ ունեն: Փչում են ամառը ծովից ցամաք. ձմռանն ընդհակառակը, որի հետևանքով ամռանը օդի հարաբերական խոնավությունն ավելի բարձր է:

Նման կլիմա ունի նաև Լենքորանի դաշտավայրը, այն տարբերությամբ միայն, որ տեղումներն այստեղ քիչ պակաս են (1.200 մմ.) և ջերմաստիճանի տարեկան ամպլիտուդներն ավելի (Լենքորանում հուլիսը $25,6^{\circ}$, հունվարը $2,8^{\circ}$ է), քան Արևմտյան Անդրկովկասում:

Չինական կլիմայի մարզերում, շնորհիվ առատ տեղումների և տաք ձմեռների, բուսականությունը արևադարձայինի կնիք է կրում, նույն փարթամ անտառներն են լիաններով (բաղեղներով) փաթաթված ծառերով, չնայած տեսակային կազմով տարբերվում են արևադարձային անտառներից: Արևմտյան Անդրկովկասում աճում են արևադարձային անտառների ներկայացուցիչները՝ արմավենին, բամբուկը, բանանը, տարածված են թեյի, ցիտրուսային կուլտուրաների, տունգայի տնկարանները, խաղողի և այլ մրգերի այգիները:

Արևմտյան Եվրոպայում անդրարոպիկական բարոմետրիկ մաքսիմումից հյուսիս (հաշված նրա ամառային շերտից) մինչև 60-րդ զուգահեռը իշխում է մեղմ ձմեռներով և առատ մթնոլորտային տեղումներով բնորոշ կլիմայական տիպ, որը կոչվում է արևմտակարգական կամ կաղնու կլիմա (ըստ էյոպպենի Cf): Ամբողջ տարին այդ մարզը գտնվում է դեպի արևմտիք ուղղված օդային հոսանքների ազդեցության տակ, որոնք հարուստ են ցածր ճնշման կենտրոններով: Այդ պատճառով ծովափից ոչ հեռու գտնվող վայրերը բնորոշվում են մթնոլորտի առավել անհասնդիստ վիճակով, որը դեպի արևելք հեռացնան կայունանում է: Այստեղից՝ զանազանում են երկու ենթատիպեր՝ արևմտյան օվկիանոսային և կենտրոնական Եվրոպայի ավելի կոնտինենտալ կլիմայի: առաջինը բնորոշվում է ոչ մեծ ամպլիտուդներով (մինչև 15°) և առատ տեղումների համաչափ բաշխվածությամբ (տարվա ընթացքում), երկրորդը ավելի մեծ ամպլիտուդներով (մինչև 25°) և տեղումների նկատելի ամառային մաքսիմումներով: Առաջինը Մարտոնը անվանում է բրետոնի տիպ, երկրորդը լեհական տիպ: Բնորոշ ծառը այս մարզում կաղնին է, իսկ արևմուտքի առավել խոնավ կլիմայի համար հաճարին: Արևելքում առատորեն սաղարթավոր անտառների մեջ սփռված փշատերևները (եղևնի, սոճի) արևմուտքում հեղափոխան տեղի են տալիս և անհետանում:

Չերմաստիճանների տեսակետից այս մարզը բնորոշվում է ամենացուրտ ամսի — 3⁰-ից մինչև 18⁰-ով, ամենատաք ամսի Չերմաստիճանը 10⁰-ից բարձր է, 22⁰-ից ցածր: Ավելի կոնկրետ բնորոշելու համար վերցնենք Իռլանդիայի, Մեծ Բրիտանիայի և Բրետոնի կլիմայական պայմանները: Իռլանդիայում տարեկան միջին Չերմաստիճանները տատանվում են 8,8⁰-ի (Դուբլին, հյուս. լ. 53⁰20') և 10,5⁰-ի (Վալենցիա, 51⁰55') միջև, ամենատաք ամսվա Չերմաստիճանների միջինը՝ 15,2⁰ (Վալենցիա) և 14,4⁰-ի (Դուբլին) միջև, ամենացուրտ ամսվանը, համապատասխանորեն 7,1⁰ և 4,6⁰-ի միջև, միջին մաքսիմումը հասնում է 27,2⁰-ի՝ Վալենցիայում, 26,0⁰-ի՝ Դուբլինում, միջին մինիմումը — 6,7⁰-ի և — 9,0⁰-ի:

Տեղումների քանակը Վալենցիայում տարեկան 1.422 մմ է, Դուբլինում 700 մմ., ծայր հարավ-արևմուտքում մինչև 2.000 մմ., թափվում են գլխավորապես անձրևներ, ձյունը հազվադեպ է, հաճախակի մառախուղներ են լինում: Մեծ Բրիտանիա կղզին

ունի հունվարին 3⁰-ից 6⁰, հուլիսին 13-ից 17⁰ (Գրինիչ), տարեկան՝ 8-ից 11⁰. հունվարյան և տարեկան ջերմաստիճանները դեպի արևելք նվազում են, հուլիսյանն ավելանում է: Հունվարյան 4,5⁰ իզոթերմն ընթանում է հյուսիսից հարավ Արևմտյան Շոտլանդիայի և Ուելսի արևելյան մասի եզրով. հյուսիսի և հարավի միջև ջերմաստիճանների տարբերությունն աննշան է, բայց արևմուտքից արևելք տարբերությունները բավականին մեծ են, արևմուտքում սառնամանիքներ չեն լինում, մարգագետինները կանաչին են տալիս նաև ձմռանը, հարավ-արևմուտքում ձյունը մեկ օրվանից ավելի չի մնում. արևելքում կլիման կոնտինենտալության հատկանիշներ է ձեռք բերում, բայց այստեղ էլ խիստ ցրտերը պատահում են որպես բացառություն (1813—14 թ. Թեմդան ծածկվեց սառույցով, 1928 թ. թափվեց առատ ձյուն), Գրինիչում ձյունոտ օրերը 14 են, կլիմայի տեսքում 21 օր տարվա մեջ: Չմեռը բույսեր են լինում, ցածր համատարած ամպերով ծածկված երկնքից երկարատև անձրևներ են թափվում: Ամառը զով և անձրևային է, արևը հազվագյուտ է երևում. շաքաթվա մեջ 5-ից (հյուս. արևմուտք) մինչև 3 օր (հարավ-արևելքում) անձրևային օրեր են: Հուլիսին ջերմաստիճանների տարբերությունը հյուսիսի և հարավի միջև ավելի զգալի է (Արա. Հերբիգներում 12,8⁰, Լոնդոնում 17,0⁰): Մթնոլորտային տեղումներն առատ են, շնորհիվ հաճախակի անցնող ցիկլոնների, որոնց սովորական ճանապարհը անցնում է Բրիտանական կղզիներով: Ամենամեծ քանակությունը թափվում է հյուս. արևմուտքում (Բեննեվիկ 3.830 մմ.), ուր լեռները պահում են խոնավաբեր օդային դանդվածներն իրենց արևմտյան լանջերին: Հենց այս մասն էլ Մեծ Բրիտանիայի ամենամեղմ կլիմայի վայրն է, շնորհիվ գոլֆշտրոմի անմիջական ազդեցության. տարեկան ամպլիտուդը հասնում է 7,4⁰-ի զրան հակառակ հարավ-արևելյան Անգլիան մոտենում է ցամաքային կլիմային, տեղումները պակաս են (600—700 մմ.), ամպլիտուդը բարձր է (13,3⁰, Գրինիչ):

Բրիտանիայի կլիմայական բնորոշ առանձնահատկությունը մառախլաօդառությունն է, որ հաճախ խանգարում է նավագնացությունը, հայտնի են Լոնդոնի մառախուղները (միջին հաշվով տարեկան 34 օր):

Բրետանում ևս նման պայմաններ են, տարեկան ամպլիտուդը 10⁰, հունվարյան միջինը նման է Միջերկրականի հյուս-

ախային ափի Չերմաստիճանին (6,3⁰), հուլիսյան միջինը 18⁰-ի չի հասնում: Ծայրահեղ միջինները +25⁰ և -1,5⁰, խոնավու-թյունը միշտ բարձր է, չկա այնպիսի ամիս, որի ընթացքում գոնև մի շաբաթ անձրևներ չթափվեն, բայց մաքսիմումն ընկնում է աշնանն ու ձմռանը, երբ ցիկլոնների շարժումը ավելի հաճախակի է: Հորդ անձրևներ չկան, ինչպես միջերկրածովային կլիմայում, այլ շարաթներ տևող մառը անձրև, որ խոնափ և տաք օդում ներծծվում և ամենուրեք ստեղծում է գոլորշիներով լի բազմիքի տպավորություն: Գերիշխում են արեմտյան քամիները, որոնք ծովափին թեքում են ծառերը, բայց ուղեփով պաշտպանված տեղիքում ծառերի աճը դարմանալի արագությամբ է կատարվում, տերևները գեղջում ու թափվում են սկսած հոկտեմբերից, բայց կաղնիները հաճախ պարունը դիմավորում են նախորդ տարվա տերևներով:

Այսպիսով, Շոտլանդիայից ու Իռլանդիայից մինչև Իսպանիա և Հյուսիսային Փորթուգալիա միանման կլիմայական պայմաններ են իշխում, որոնք հարավում ավելի տաք են, հյուսիսում ավելի դո՛ղ, բայց նշ իսկական ամառ ունեն, նշ իսկական ձմեռ:

Կլիմայի լեռնակամ ափային հատուկ է ավելի կոնտինենտալություն. ատլանտյան ցիկլոնները հողվադեպ են համուռ աշտեղ ձմռանը, դրա համար անհրաժեշտ է, որ նրանց ճանապարհն ընկնի Հյուսիսային և Բալթիկ ծովերով, մի բան, որ այդ եղանակին շատ քիչ է պատահում, այդ պատճառով էլ Բրետանի ամսյամածության և հաբատե անձրևների փոխարեն Վարշավայում ձյունածածկ տարածությունների վրա պարզ երկնքից փայլում է արևը, չրարձրացնելով, սակայն, Չերմությունը 0⁰-ից վեր: Հաճախ աշտեղ սիրիլոյան անտիցիկլոնի լեզվակից թափանցում է սառն օդ և ավելի ցրտեցնում, ձմռան երեք ամիսներին Վարշավայի Չերմաստիճանը 0⁰-ից ցածր է (դեկտեմբերին -1,7⁰, հունվարին -3,5⁰, փետրվարին -2,5⁰), միջին մի-նիմումը հասնում է -21,3⁰-ի, ձյան ծածկի տևողությունը 80 օր է: Ամառը վաղ է սկսվում, տաք է (հուլիսյան միջինը 18,2⁰), միջին մաքսիմումը 32,0⁰: Տեղումների քանակը պակաս է (Վարշավայում 554 մմ.), մաքսիմումն արդեն տեղափոխվում է ամռան ամիսներին. մայիս և հուլիս ամիսներին երկու անգամ ավելի տեղումներ են թափվում, քան հունվարին ու փետրվարին. ամառվա երեք ամիսներին (VI, VII, VIII) թափվում են 211 մմ.,

խիկ ձմեռվա ամիսներին (XII, I, II,) 90 մմ. տեղումներ: Պատ-
ճառը բարձրորակի գեպրեսիաների հաճախակի շարժումն է Հյուս-
սիսային և Բալթիկ ծովերի վրայով (գարնանը), որոնց ազդե-
ցությունը տարածվում է նաև Լեհական դաշտավայրի վրա:
Ամառը այդ գեպրեսիաներն անցնում են նաև Կենտրոնական
Եվրոպայի վրայով, ընդգրկելով նաև Լեհաստանը, տեղի են ու-
նենում ամպրոպներ, թափվում են հորդ անձրևներ: Աշունը
զգացվում է սեպտեմբեր ամսից, իսկ նոյեմբերին արդեն ձյոճն
է գալիս, որը սակայն հաճախ հալչում է, երբ նոր ցիկլոններ
են գալիս: Դեկտեմբերին ձյունն ամբողջովին ծածկում է դաշ-
տերը:

Կլիմայական այս երկու տիպերը՝ բրետոնյան և լեհական, ու-
րուշակի սահման չունեն, նրանց միջև կան անցման շրջաններ,
օրինակ Փարիզի կլիման ցամաքային է բրետոնացու համար,
իսկ լեհի համար նա կարող է օվկիանոսային թվալ, միջանցիկ
կլիման խիստ որոշակի գծեր չունի, մերթ տիրապետում են օվ-
կիանոսային կլիմայի, մերթ ցամաքային կլիմայի էլեմենտները:
Ոչ մի ամիս այստեղ 0⁰-ից ցածր միջին ջերմաստիճան չի լինում,
բայց միջին մինիմումը հասնում է — 11,3⁰-ի, ամենատաք ամսի
ջերմաստիճանն է 18,0⁰ (հուլիս), միջին մաքսիմումը 33,8⁰ է: Տե-
ղումների տարեկան քանակությունը 527 մմ. է, մաքսիմումի երկու
մոմենտ է նկատվում՝ հունիսին (55 մմ.) և հոկտեմբերին (54 մմ.),
մինիմումը փետրվարին (28 մմ.): Արևելյան Ֆրանսիայում և
Դերմանիայում ևս նման սլայմաններ կան, սակայն կոնտի-
նենտալությունն ուժեղանում է մանավանդ լեռներով շրջա-
պատված գոգավորություններում, էլզասի հարթությունը, Թյու-
րինգիայի ավազանը, Չեխիան նույնքան ցամաքային կլիմա
ունեն, որքան և նրանցից 500 կմ. արևելք ընկած բաց հար-
թությունները: Գոգավորության մեջ ընկած Պրագան, օրինակ,
ավելի ցուրտ ձմեռ ունի (հունվարին — 1,5⁰), քան 2,5⁰ ավելի
հյուսիս ընկած Բեռլինը (I—0,2⁰):

Ալպյան, Գարպատյան և Բալկանյան լեռներով շրջապատ-
ված ստորին և միջին Դանուբյան հարթությունները ավելի
կոնտինենտալ գծեր ունեն, ձմեռն ավելի կարճ է, դարձնելով խո-
նավ, աշունն ու ամառը չոր են: Բուխարեստի համար բնորոշ
են քիչ ավելի ուշ սկսվող, բայց նույնչափ խիստ ձմեռները, տե-
ղումները 583 մմ. են ամառային մաքսիմումով, հուլիսյան ջեր-
մաստիճանը հասնում է 23,0⁰-ի, ավելի բարձր, քան Վարշավայում
և նույնիսկ Բուգապեշտում (21,3⁰), միջին մաքսիմումը մտա 35,0⁰

է, բուսական ծածկում կաղնին նվազում է, Արևելյան Վալա-
խիայում տիրապետում են մարդագետնային տափառտանները՝
Նման պայմաններ կան նաև Լոմբարդական գաղափայրում և
Սկիփտանիայում: Արևելքում Ուկրաինայի կլիման իր խիստ
ձմեռներով (Կիևում հունվարյան միջինը — 6,2⁰ է) արգեն փո-
խանցիկ ենթատիպ է դեպի տափաստանների կլիման:

Մանջուրական և ֆալոնական տիպի կլիմաներ

Բարեխառն կլիմաները եվրոպայում մեծ ընդհատումից
հետո նորից հանդես են գալիս Սաղազ օվկիանոսի ափերին՝
Մանջուրիայում, Հյուսիսային Չինաստանում և Ճապոնիայում,
բայց արդեն նրանց ձևավորման մեջ հիմնական դերը պատկա-
նում է մուսսոններին: Չմռան ամիսներին սիրիոյան անախ-
ցիկլոնի առկայութունը իջեցնում է այս վայրերի ջերմաստի-
ճանը, (Բեյալինում հունվարյան միջինը — 4,7⁰ է) և պակասեց-
նում մթնոլորտային տեղումների քանակը, բայց ամառային
մուսսոնների շնորհիվ նրանք դեռ բավականին բարձր են (Բեյ-
ալին՝ 624 մմ., որից 462 մմ. թափվում են հունիս, հուլիս և օ-
գոստոս ամիսների ընթացքում), հուլիսյան ջերմաստիճանը
հասնում է 26⁰-ի: Չմեռային մուսսոնները բավականին դժման
պայմաններ են ստեղծում նաև Ճապոնիայում, չնայած վերջինս
արևելքից ողողվում է Կուրո-սիվո տաք հոսանքով. բնորոշ է,
որ այստեղ չոր պերիոդը խիստ կրճատվում է, իսկ արևմտյան
ափերին բոլորովին վերանում, որովհետև ձմեռային մուսսոնը
նույնպես առատ խոնավութուն է բերում անցնելով Ճապոնա-
կան ծովի վրայից. այսպես, Տոկիոյում, որը Հոնսյու կղզու ա-
րևելյան մասում է գտնվում, տեղումների տարեկան քանակը
կազմում է 1476 մմ., իսկ արևմտյան ափին, Կանադավայում՝
2516 մմ., մաքսիմումը նույնիսկ ձմռանն է ընկնում, դեկտեմ-
բեր ամսին (373 մմ.): Լեռներն ամբողջովին պատում են ձյան
հաստ շերտով, որը մնում է մինչև ամառվա սկիզբը:

Ջերմային աեծիմի մասին պատկերացում են սալիս հե-
տևյալ թվերը.

	Աշխ. լայնու- թյունը	Տարեկան միջին t°	Ամենատաք ամսվա միջին t°	Ամենացուրտ ամսվա միջ. t°	Միջին ձաքսի- մուսը	Միջին միսիմու- սը
Տոկիտ	35°41	13,8	25,4 VIII	2,9 I	36,6°	-9,1°
Կանազա- վա	36°33	13,1	25,5 VIII	2,1 II	38,5°	-9,7°

Այսպիսով Ճաստնիայի արևմտյան ափի կլիմայական ու-
ժիմը տեղումների տարեկան բաշխման տեսակետից օվկիանոսա-
յին է, իսկ Չերմ ության տարեկան ընթացքի տեսակետից՝ կոն-
տինենտալ:

Հյուսիս-ամերիկյան մարզ

Բարեխառն գոտու սաղարթավոր անտառների կլիման Հյուս-
սիսային Ամերիկայում տարածված է երկու ենթամարզերով,
առաջինը գտնվում է ցամաքի հյուսիս-արևմուտքում, ծովափ-
նյա մի նեղ շերտում, հյուս. լայն 49° և 58° միջև, երկրորդը տա-
րածված է արևելքում, արևմտ. երկայնության 100° և Ատլանտ-
յանի ափի միջև. հյուսիսից և հարավից նրա սահմանները կազմում
են մոտավորապես հյուս. լայն. 30° և 50° զուգահեռները:

Հյուսիս-արևմուտքում Վաշինգտոն նահանգի և Բրիտանական
Կոլումբիայի խաղաղօվկիանոսյան շրջաններում հանդիպում
ենք ավելի օվկիանոսային բրետոնյան տիպի կլիմային: Գոլջը-
տրոմին այստեղ փոխարինում է Կուրոսիվոն, որը ողողում
է այս ափերը, բայց չունի առաջինի էներգիան, հետևաբար,
այստեղ ձմեռներն այնքան մեղմ չեն, ինչպես Բրետոնում (մի-
ջին հունվարյանը հասնում է 0°-ից—4°-ի), ամառներն ավելի զով
են, Չերմաստիճանի մաքսիմումն ընկնում է օգոստոսին (13-ից
14°):

Միտկա քաղաքում (հյուս. լայն. 56°03') տարեկան միջին
Չերմաստիճանը 6,6° է, նրանից մեկ աստիճան հյուսիս գտնվող
Փյունոյինը 5,7°), ամենատաք ամսվա Չերմաստիճանները հա-
մադատասխանաբար 13,2° և 14,0° են, հունվարյանը 0,1° և —2,7°

մթնադրոտաքին տեղումները խիստ առատ են (2180 և 2050 մմ.), մաքսիմումներն ընկնում են աշնան (մինչև 300 մմ., հոկտեմբերին) և ձմեռային ամիսներին:

Ինչ վերաբերում է երկրորդ ենթամարզին, ապա պետք է ասել, որ այստեղ մեծ դեր է խաղում կորդիլիերների և Ապպալաչների համարյա մերիդիոնալ ուղղությունը, որի հետևանքով նրանց միջև ընկած տարածության վրա ազատորեն փոխանակվում են տարբեր լայնությունների օդային զանգվածները և ստեղծում ջերմաստիճանների հաճախակի ոչ պարբերական փոփոխություններ: Համեմատած Եվրոպայի միևնույն լայնության վրա դրանվող վայրերի հետ, Հյուս. Ամերիկայում օրական միջին ջերմաստիճանների փոփոխականությունը երեք անգամ ավելի է:

Չմեռը Սառուցյալ օվկիանոսի և Մրկտիկական Արշիպելագի սառն օդային զանգվածները Մանիտորայի պրովինցիայում (միջին կանադա) ստեղծում են անտիցիկլոն, որտեղից քամիներ են փչում դեպի Մեքսիկական ծոցն ու Ատլանտյան օվկիանոսը, իսկ ցամաքի Ատլանտյան ծովափը ցրտեցվում է Լաբրադորյան սառը հոսանքի շնորհիվ: Այսպիսով միևնույն լայնության վրա Ամերիկյան տերիտորիաները ավելի ցածր ձմեռային ջերմաստիճաններ ունեն, քան Եվրոպայինը, որը երևում է ստորև բերված ավյալներից.

	Աշխ. լայն.	Տարեկան միջին t°	Հուլիսյան t°	Հունվարյան t°	Տեղումների քանակը
Նյու-Յորք	հս. լ. 40°43	11,0	22,8	-0,8	1090 մմ.
Նեապոլ	40°52	15,8	24,2	8,2	850 մմ.

Հուլիսյան և տարեկան ջերմաստիճանների համեմատությունը ցույց է տալիս, որ Նյու-Յորքի ջերմաստիճանների նվազեցնող գործոնի ազդեցությունը մշտական է և չի սահմանափակվում ձմեռվա եղանակով: Մյուս կողմից, հարավից թափանցում է Մեքսիկական ծոցի, որպես ջերմության և խոնավության աղբյուրի, ազդեցությունը, որը տարածվում է դեպի հյուսիս և հյուսիս-արևելք Միսիսիպիի և Օհայոյի ողջ կենտրո-

նական ավազանի վրա: Այնտեղից կատարվում են օդային-
 գանգվածների մեծ տեղաշարժեր և Չերմաստիճանների ելևէջներ:
 Սեն-Լուի քաղաքում, որտեղ ամենացուրտ ամսի միջինը $-0,6^{\circ}$
 է, միջին մինիմումը -18° , միջին մաքսիմումը հասնում է
 36° -ի: Բացի այդ, Մեքսիկական ծոցից շարժվող դեպրեսիաների
 հետեանքով անձրևներ են առաջանում, որոնք հատկապես առատ
 են դարնանը և ամառվա սկզբին. տարեկան 950 մմ-ից (Սեն-Լուի):
 հունիսին և հուլիսին թափվում են 246 մմ. տաք պերիոդի
 վերջը համեմատաբար չոր է, հատկապես քիչ են անձրևոտ օրերը,
 մի քանի շաբաթ անընդհատ լինում են չոր եղանակներ: Ձմռա-
 նը տեղումները թափվում են որպես ձյուն, որի ծածկը դեպի
 հարավ նվազում է և կրում ոչ պարբերական բնույթ: Միսսիս-
 պիի ավազանում ձմեռը սովորի տաք է, քան ատլանտյան ծո-
 վափին (Սեն-Լուի, հունվ. միջինը $-0,6^{\circ}$), բայց ավելի ցուրտ,
 քան Եվրոպայի համապատասխան լայնություններում, Չիկա-
 գոյում, Հոտմի զուգահեռի վրա, հունվարյան միջինը $-4,6^{\circ}$ է
 (Հոտմում $6,6^{\circ}$): Մեծ տարածության վրա տեղի են ունենում
 կլիմայական պայմանների փոփոխություններ, կանազայի հա-
 րավում և ԱՄՆ-ի ատլանտյան նահանգներում գոյություն ունի
 կլիմայի լեհական տիպ, Մանիտոբայի անտիցիկլոնն այստեղ
 պայմանավորում է պարզ և ցուրտ եղանակ, ձյան ծածկոցով:
 Ծովի մոտիկությունը, ինչպես պարզեցինք, բացասական նշա-
 նակություն ունի. միաժամանակ անտիցիկլոնալին սառած օդը
 տարածվում է մինչև Նյու-Յորք: Ամառը հարավից եկող ցիկ-
 լոնների շնորհիվ անձրևներ թափվում են, և խոնավությունը
 բավականին բարձր Չերմաստիճանի պայմաններում (Պիտսբուր-
 գում հուլիսյան միջինը $23,1^{\circ}$ է) խիստ անզուբեկական մթնոլորտ
 է ստեղծում, որով և տարբերվում է առիպի լեհական կլիմայից:

Այլ մարզեր

Հարավային կիսագնդում բարեխառն կլիմայի մարզերը
 քիչ տարածում ունեն, քանի որ ցամաքները այնտեղ մեծ չեն
 և վերջանում են զլխավորապես մերձարևադարձային լայ-
 նություններում. Աֆրիկան հասնում է մինչև հար. լ. $34^{\circ} 51'$,
 Ավստրալիան Տասմանիայի հետ $43^{\circ} 40'$ և միայն Հարավային
 Ամերիկան, այն էլ խիստ նեղ հատվածով, հասնում է մինչև հար.
 լ. 56° : Հար. Ամերիկայում բարեխառն գոտու անտառային կլի-
 ման նշված է Չիլիի հարավային մասում և Հրո երկրում: Չի-

լիում այդ ենթամարզը Բրետանի կլիմայի անալոզն է, իշխում են նույն դով ամառները (Պուերտո-Մոնտի, հունվարյան միջինը $14,3^{\circ}$), մեղմ (հուլիսյանը $7,7^{\circ}$) ու անձրևոտ ձմեռները, 2190 մ.մ. մթն. սեզոններից մոտ 300 մ.մ. թափվում է միայն հուլիսին:

Հրո Երկրի կլիման աչքի է ընկնում արտակարգ ամպամածությամբ և խոնավությամբ, տեղումներով օրերի թիվը տարին 300 -ից անցնում է, տեղումների քանակը՝ 1500 — 2000 մ.մ., ամռանը ջերմաստիճանը 5 — 10° -ից ավելի չի բարձրանում, իսկ ձմռանը՝ 2 — 5° -ից մեծ սառնամանիքներ չինում են հազվագյուտ դեպքերում: Տեղումների քառորդ մասը թափվում են որպես ձյուն և հառիկ: Թե Չիլիի հարավային մասում և թե Հրո Երկրում բնորոշ են խիտ սաղարթավոր անտառները, որոնց մեջ սփռված են շատ մշտադալար ծառեր, պարադիա բույսեր:

Բարեխառն գոտու մեջ են մտնում նաև Ավստրալիայի հարավային մասը, Տասմանիան և Նոր Զելանդիան: Ավստրալիայի արևելյան և հարավային ափերը, ինչպես տեսանք, ունին միջերկրածովային և չինական կլիմաներին հատուկ գծեր, այնպես որ բարեխառն գոտու սաղարթավոր անտառների կլիման հատուկ է միայն Ավստրալիայի ծայր հարավ-արևելքին և հիշյալ կղզիներին: Նոր Զելանդիայում տարեկան միջին ջերմաստիճանները գտնվում են $15,0^{\circ}$ (հյուսիսում) և $6,6^{\circ}$ (հարավում) միջև, ամենատաք ամիսների (հունվար և փետրվար) ջերմաստիճանները $19,2^{\circ}$ և $9,7^{\circ}$ են, ամենացուրտ ամիսները (հուլիս, օգոստոս) $11,3^{\circ}$ և $3,7^{\circ}$ -ի միջև: Միջին մի քանի տեղումներն աննշան են (հյուսիսում $3,0^{\circ}$, հարավում մինչև $-7,0^{\circ}$). միջին մաքսիմումները բավականին մեծ են (30 — 31° -ից հյուս, մինչև $18^{\circ},0$ հարավում), տարեկան ամպլիտուդները 8 — 9° -ից չեն անցնում: Նման ցուցանիշներ ունի նաև Մելբուրնի շրջանը հարավ-արևելյան Ավստրալիայում և անդամ Տասմանիան (Հորարտում տարեկան միջինը $12,4^{\circ}$ է, փետրվարինը $16,8^{\circ}$, հուլիսինը $7,6^{\circ}$): Այս միջինները, սակայն, չեն արտահայտում ջերմաստիճանների այն թնփշքները, որոնք առաջանում են շատ հաճախ Ավստրալիայի արևմուտքից արևելք անցնող անտիցիկլոնների և նրանց միջև հարավից սեպտեմբերից դեկտեմբերի միջինը ավելի հարավից սեպտեմբերից դեկտեմբերի միջինը չոր ու տաք ջամիները ջերմության միջին մաքսիմումը բարձրացնում են մինչև 44° -ի՝ Հարավային քամիները տարածում են ցրտի ալիքներ, որոնց

ուղեկցում են անձրևներին, կարկաթի տեղումներ: Տեղումները քաղաքին առատ են, մինչև 3000 մմ., որոնք տարվա ընթացքում համաչափ են բաշխված, համեմատաբար առատ են ձմռանը:

Բարեխառն (բորեալ) գոտու փշատերև անտառների (տայգայի) կլիման

Նվրասիայի և Հյուս. Ամերիկայի ցամաքներում այս կլիմայի, ինչպես և նրան համապատասխանող տայգայի գոտու հյուսիսային սահմանը հանդիսանում է հուլիսյան 10° -ի իզոթերմը, իսկ հարավային սահմանը նույն ամսվա 30° իզոթերմը, հետևապես հուլիսին այստեղ ջերմաստիճանը 10° -ից պակաս և 20° -ից ավելի է: Ձմեռները դաժան են, հատկապես Սիբիրում և Հյուս. Ամերիկայում: Հարավային կիսագնդում կլիմայի այս տիպը բացակայում է:

Նվրոպայում ավելի օվկիանոսային բնույթ ունի նարվեգիայի կլիման. ցիկլոնները Սկանդինավյան լեռների արևմտյան լանջերով ուղևորվում են դեպի հյուսիս, սահմանափակելով Ատլանտյան օվկիանոսի ազդեցությունը ծովափնյա նեղ շերտով, ձմեռները մեղմ են համեմատած նույն լայնություն վրա այլ վայրերի ձմռան հետ:

Տրոնհեյմում, որը չորս ամիս 0° -ից ցածր ջերմաստիճան ունի, ամենացուրտ ամսի՝ փետրվարի միջինը — $2,9^{\circ}$ է, զարուհն ուշանում է, ապրիլի ջերմաստիճանը $7,7^{\circ}$ է, ամառը չափազանց զով, հուլիսյան միջինը $14^{\circ}, 0$. տեղումներն առատ են (1000 մմ.) և հավասարաչափ բաշխված ամբողջ տարվա ընթացքում. առանձնապես խոնավ է աշունը, երբ ցիկլոնները մեծ չափերի են հասնում: Սկանդինավյան լեռներից արևելք՝ Շվեդիայում ձմեռներն ավելի խիստ են. Ուպսալայում հունվարյան միջինը — $4,7^{\circ}$ է:

Մրանցից ավելի կոնտինենտալ բնույթ ունի իսաոն անտառների գոտու կլիման, որը Նվրոպայում ընկնում է մոտավորապես Լենինգրադ-Կիև-Կազան հոանկյունու միջև, որի համար ավելի տիպիկ է Մոսկվայի կլիման: Տարեկան ամառվա տեղումն այստեղ մեծ է, համարյա 30° , ամենացուրտ ամսվա՝ հունվարի ջերմությունը — $10,8^{\circ}$ է, ամենատաք ամսվան՝ հուլիսինը $22,3^{\circ}$ (տարեկանը $3,7^{\circ}$), տարեկան 175 օր ջերմաստիճանը ցածր է

Օժից, ուշ գարնանը, հաճախ նուշխիակ ամ առվա սկզբին, ինչ պես նաև վաղ աշնանը սառնամանիքները բավականին սովորական են, այսպես կոչված «ցրաի վերադարձի» հետևանքով: Մասնամանիքներից ապահով են միայն հուլիս և օգոստոս ամիսները: Ջյան ծածկը բավականին հաստ է (60 սմ.) և հալչում-վերանում է միջին հաշվով ապրիլի 19-ին. քանի որ ձյան հալչելը ջերմության մեծ ծախք է պահանջում, ապա գարունը ավիլի ցուրտ է լինում՝ աշնան համեմատությամբ, այսինքն օվկիանոսային կլիմայի հատկութունն ունի: Ամառվա շոգ օրերին սովերում ջերմությունը հասնում է 20—23°-ի, պատահում են մինչև 38 շոգեր: Դիշերները դով են, հուլիսին երբեմն գիշերը ջերմաստիճանն ընկնում է մինչև —1°:

Առաջին ձյունը թափվում է հոկտեմբերի կեսերին, նոյեմբերի կեսերին գոյանում է ձյան համատարած ծածկոց, որի տևողությունը 140 օր է:

Լենինգրադի կլիման ավելի մեղմ է Ֆիննական ծոցի ազդեցության շնորհիվ: Չնայած մոսկվայից 4° հյուսիս գտնվելուն, Լենինգրադում ձմեռը 3-ով ավելի տաք է, Մոսկվա գետը սառում է նոյեմբերի 8-ին, Նեվան 18 օր նրանից ուշ:

Մոսկվայում տեղումները 538 մմ.-ի են հասնում (մաքսիմումն ամառնը), իսկ խառն անտառների դոտում ամենաշատ տեղումներ ստացող վայրը Բելոուսիան է, Պրիպյատ և Բերեզինա գետերի ավազանները (680—695 մմ.):

Սրբեկավրոպական հարթության հյուսիսային մասը և Սրեմըռայան Սիբիրը, ընդհուպ մինչև Ենիսեյ, ունեն նման կլիմայական պայմաններ—ամառները այստեղ շոգ են, ցուրտ ու երկարատև ձմեռներով, տարեկան մեծ ամպլիտուդներով, տեղումներն աննշան են, նկատելի ամառային մաքսիմումով: Դեպի արևելք կոնտինենտալության հատկանիշներն ուժեղանում են: ՍՍՌՄ եվրոպական մասում ջերմաստիճանի տարեկան ամպլիտուդները փոփոխվում են 25°-ից հասնելով մինչև 35°-ի, տեղումները՝ 550-ից 350 մմ.-ի. Արևմտյան Սիբիրում տարեկան ամպլիտուդները փոփոխվում են 35—45°-ի, տեղումները 400—300 մմ.-ի: Տարեկան միջին ջերմաստիճանները Արևմտյան Սիբիրում ավելի ցածր են, հյուսիսում՝ —12°, հարավում՝ +4°, տերիտորիայի մեծ մասը, հակառակ Սրբեկյան եվրոպայի, ունի բացասական տարեկան ջերմաստիճաններ. Տորոլսկ քաղաքի հունվարյան ջեր-

մաստիճանը — 19,30 է, հուլիսյանը՝ 17,80, ամբողջ տերիտորիա-
յի վրա հունվարյան ջերմաստիճանները տատանվում են — 16° և
— 32° միջև (հյուսիսում): Պատահում են և սառնամանիքներ
— 40°-ից ցածր:

Տաշքաների գոտին դանվում է մայր ցամաքային բարոմետրիկ
մեծ առանցքից հյուսիս և ենթակա է հարավ-արևմտյան և արև-
մուտյան քամիների ազդեցութանը, որոնք բավականին խոնա-
վություն են բերում. ձյան ծածկը այտուղ հասնում է 50—70 սմ.,
Հյուսիսային Ալթայում անգամ 90 սմ.-ի, տեղումների մաքսի-
մումն ընկնում է ամռան ամիսներին. օրինակ, Տորգոսկում թափ-
վող 417 մմ. տեղումներից ձմռանը թափվում է 55 մմ., գար-
նանը 70 մմ., ամառը 214 մմ., աշնանը 107 մմ.: Ամռան ա-
միսներին, երբ բարոմետրիկ առանցքը թույլ է արտահայտված
լինում, քամիներ են փչում նաև հյուսիսային ուղեքերից, Սա-
ռուցյալ փլիհանոսից: Ջերմային տատանումները բավականին
մեծ են, աշնպես որ մի ամսում կարող են հասնել 40°-ի:
Կլիմայի այս ախպը կոչվում է արևմտաթիբեթական: Նման
ախպին է պատկանում նաև կանադական կլիման, որն ընդգր-
կում է Կանադայի մեծ մասը, բացառությամբ առլանտյան ա-
փերի և արևմտյան լեռնաստանների: Նրան նույնպես հատուկ
է կոնախնեհատակեծիմը՝ մեծ ամպխտուղները, նվազ տեղումնե-
րը, ենիսեյ գետից մինչև Ստանոլյան լեռները տարածվում է արե-
վելաթիբեթական կլիմայական մտղղը. սա, ինչպես նշվել է, ձմա-
նը կաշուն, ուժեղ անախցիկոնի կենտրոն է, որտեղ ցրտի համաշ-
խարհային բևեռն է դանվում: Տարեկան ամպխտուղները խիտ մեծ
են (Ներչինսկում մինչև 48°, Յակուտսկում 62,3°, Վերխոյանսկում
մոտ 70°), ձմռանը դաժան սառնամանիքներ են լինում՝ — 40—
50°-ից էլ ցած, երկիրը պարզ է, անամպ, քամիներ համարյա
չկան, ամառը կարճ է, բոյց բավականին չող:

Իրիուտսկում բացարձակ մաքսիմումը հասնում է 36,1°-ի,
բացարձակ մինիմումը՝ — 50,5° (ամպխտուղը 86,6°), ամառվա
Ջերմաստիճանը աշխարհագրական լայնության (52°) համեմատ
շատ ցածր է, որ բացատրվում է Բայկալ լճի ազդեցությամբ:
Տեղումների քանակը տարեկան 435 մմ. է, օրի 56 սոկոսը
թափվում է ամռան ամիսներին, ձմռանն ամիսից քիչ, ընդա-
մենը 8 սոկոս, որով պայմանավորված է ձմեռների համարյա
անձյուն ախպը. էլ ավելի պակաս են տեղումները հյուսիսում
(Վերխոյանսկ, 128 մմ.), որտեղ և նշվել են Ջերմաստիճանների

ամենամեծ ծայրահեղութիւնները (Վերխոյանսկում բացարձակ մինիմումը—69,8⁰, բացարձակ մաքսիմումը՝ 33,7⁰), ամպլիտուդը 103,5⁰ է՝ ամենաբարձրը երկրագնդի վրա): Ծնորհիվ ամառվա ըստականաչափ բարձր ջերմաստիճանների, Վերխոյանսկի գոգավորութիւնում, բեկոային շրջանից հյուսիս տարածված է տայգայի բուսականութիւնը: Ամպամածութիւնը, համեմատած Իրկուտսկի հետ, այստեղ ավելի պակաս է (Իրկուտսկում 59 տոկոս, Վերխոյանսկում 51 տոկոս), հատկապէս ձմռանը. ձյան ծածկն Սրեկայան Սիբիրում բարակ է. ամենախորը ձյունածածկը Յակուտիայում նկատվում է մարտ ամսին. Յակուտսկում նա կազմում է 37 սմ., Վերխոյանսկում 27 սմ., Սրեկանիկոլիմսկում 47 սմ., Իրկուտսկում նա ընդամենը 22 սմ. է. էլ ավելի քիչ է Անգրքայկայայան երկրում:

Լեռնա գետի միջին հոսանքի ավազանում, որի կլիման տիպական է ամբողջ արեւելա-սիբիրական մարզի համար, տեսնում ենք նաև ուրույն գծեր. ամառն այստեղ ավելի չոր է, ամպամածութիւնը պակաս, քան այլ վայրերում: Հուլիսյան միջինը կազմում է 19,6⁰, աշխարհում ոչ մի տեղ այդ լայնութիւն վրա (Յակուտսկ հս լ. 62⁰) այդքան բարձր ջերմաստիճան չկա: Այստեղ հիանալի մտնում են գարնանացան ցորենը, հաճարը, գարին, վարսակը, վարունգը, կաղամբը, պամիդորը, ծխախոտն ու խաշխաշը, իսկ ջերմոցներում նաև ձմերուկն ու սեխը: Ծոզի պատճառով պահանջվում է արհեստական ոռոգում. խոշոր չտիով այդ կուլտուրաներին նպաստում է հողի հավերժական սառածութիւնը, որն ամառվա ընթացքում մակերեսից հալչելով խոնավութիւն պտշար է ստեղծում բույսերի համար: Բնորոշ են նաև մառախուղները, որոնք հատկապէս ընակավայրերի շրջաններում առաջանում են ձմռանը սառն օդի ստորին շերտերում ավելացող խոնավութիւնից, որի աղբյուրն է հանդիսանում ծխնելուզներից բարձրացող ձուխը. սակայն Սրեկայան Սիբիրի կլիմայի համար ամենաբնորոշ երևույթը ջերմային ինվերսիաների լայն տարածումն է. գոգավորութիւններում ջերմաստիճաններն ավելի ցածր են, քան լեռնալանջներին և բարձունքների վրա, այդ դրութիւնը պահպանվում է քամիների բացակայութիւն շնորհիվ և խախտվում, երբ սրկե ուզգութիւնը քամի է փչում. քամին խառնում է օդի շերտերը և ներքին սառն օդի փոխարեն տաք օդ բերում վերից, այդ պատճառով քամիների գեպքում ամենուրեք ջերմաստիճանի բարձրացում է նկատվում, ըստ որում ինչքան մեծ է քամու արագութիւնը, այնքան ջերմաստիճանի բարձրացումն ավելի է:

Յակուտսկի հունվարյան միջին ջերմաստիճանները քամու տար-

քեր արագությունների դեպքում փոփոխվում են հետևյալ կերպ.

Քամու արագությունը
մ. վայրկ.

0—1 2—3 4—5 6—7 8—9 10 և ավելի
Օդի ջերմաստիճանը —43⁰ —41 —39 —37 —29 —18

Սիրիերի ծայր արևելքում, Ուսսուրյան երկրում, Ամուրի ստորին հոսանքում, Օխոտի ծովի արևմտյան ափերին, ինչպես և Կամչատկայում գոյություն ունի հատուկ կլիմայական մարզ ուսսուրյան կլիմայով, հարավում սրան մոտենում է Արևելյան Մանջուրիայի և Կորեայի կլիման: Հասկանալի է, որ հյուսիսում այս մարզն ունի ավելի խիստ և կոնտինենտալ կլիմա: Բնորոշ է մուսսոնային սեզոնը. ձմռանը փչում են հյուսիս արևմտյան քամիներ ցամաքից, իսկ ամառը ծովից փչում են հարավ-արևելյան խոնավաբեր մուսսոններ. ձմռան ջերմաստիճանը համեմատաբար ցածր է. օրինակ Վլադիվոստոկը, որ Ֆլորենցիայի դուգահեռից հարավ է գտնվում, ունի ձմռան միջին ջերմաստիճան՝ —12⁰, հունվարյան՝ —15,1⁰, այսինքն՝ մոտ 20⁰-ով ցուրտ է Ֆլորենցիայից (հունվ. +4,7⁰), տարեկան միջինը Վլադիվոստոկում +4,3⁰ է, Ֆլորենցիայում՝ +14,3⁰: Ամառը զով է, ջերմաստիճանի մաքսիմումն ընկնում է օգոստոսին (Օխոտսկում 12,9⁰, Պետրոպավլովսկում՝ Կամչատկայի վրա 14,6⁰, Վլադիվոստոկում 20,8⁰): Գարունն աշնանից ցուրտ է՝ ծովային սառույցների դարնանը հալչելու և մեծ ջերմություն կլանելու պատճառով: Ձմեռները չոր են, ամառները խոնավ, ամառամած, հաճախ խիտ մառախուղներով: Վլադիվոստոկում ամառը հաստատվում է խոնավ և շոգ եղանակ, գոլորշիները չեն չորանում և ծածկում են բոլոր առարկաները՝ ժանգով կամ բոբրոսով: անձրևը հաճախ մաղում է շաբաթներ շարունակ, մառախուղի պատճառով շրջապատը չի երեվում, արևը ծածկված է լինում: Եղանակի փոփոխությունը կատարվում է հանկարծակի, հաճախ պարզ, սաք օրվա մեջ ծովից ներխուժում է սառը մառախուղը և սկսվում է անձրևը: Ամենալավ, պարզ եղանակը աշունն է, երբ օդի ջերմությունը բարձր է և շրջի կարելի է ձերմակ զգեստներով, սակայն վառարանները տներում սկսում են վառել վաղ (հաճախ ամառվանից)՝ խոնավության դեմ պայքարելու համար: Տեղումների ընդհանուր քանակությունը մեծ է, քան տայգայի նախորդ մարզերում, բայց ընդհանրապես չափավոր է:

Վլադիվոստոկում 570 մմ., Այանում 890 մմ., Պետրոպավլովսկում
Կամչատկայի վրա 770 մմ.:

Տայգաների կլիմայի համար շատ բնորոշ է հավերժական
սառածության լայն տարածումը հողի մեջ, որն արդյունք է
տարեկան ցածր ջերմաստիճանների, ինչպես և ձյան բարակ
ծածկոցի, որը նպաստում է հողի սառեցման:

Հավերժական սառածության սահմանը ՍՍՄԽ եվրոպական մա-
սում սկսվում է Կանինից հարավ, տարածվում Մեկինից մինչև Բե-
րեզով (Օրի վրա), այնուհետև անցնում մինչև Ստորին Տունգուս-
կայի գետաբերանը, այստեղից հարավ, հարավ-արևելք մտնում
Անդրբալթիկյան երկիրը և Մոնղոլիա, Բլազովեշչենսկից սահ-
մանն անցնում է մինչև Հյուս. Կամչատկա: Այս տերիտորիայի
հյուսիսային մասում սառնությունը համատարած է, իսկ հարա-
վում կղզիներով: Սառած ամբողջ շերտի հաստությունը մինչև
70 մետրի է հասնում: Ամզերմայի շրջակայքում, Վայգաչ կղզ-
ու գլխաց փորված հորը 216 մետր անցնելով, դեռ չը կտրել սառած
շերտը, որի հաստությունը այստեղ նվազորվում է մինչև 400 մ.:
Ամառը հողի մակերեսը 1/2-ից մինչև 3 մետր խորությամբ հալ-
չում է: Ենթադրվել է, որ հավերժական սառածությունը սառ-
ցադաշտային էպոխայի մնացորդ է. ըստ երևույթին այդ ճիշտ-
է, որովհետև սառած շերտում հայտնաբերվում են սառցադաշ-
տային շրջանի կաթնասունների մնացորդները: Բայց անկաս-
կած է նաև, որ սառածությունը պահպանվում է ժամանակա-
կից կլիմայական պայմանների՝ աննշան ձյունածածկի և դաժան
ձմեռների շնորհիվ: Հյուսիսում սառածությունը տարածվում է
մինչև Սառուցյալ օվկիանոսի ափերը և անցնում նաև արկտի-
կական կղզիների վրա:

Սառածության շրջանում տայգայի ծառերը ունեն մակե-
րեսային փուխղ արմատասիւտեմ:

Բարեխառն գոտու թափաստանների կլիմա

Արևմտասիբիրական կլիմայական մարզից հարավ և հարավ-
արևմուտք, մինչև անադատների և նախալեռնային անտառ-
ների գոտին տարածվում են անտառատափաստանն ու տափաս-
տանը, որոնք կլիմայական հասկանիչներով տարբերվում են ար-
դեն նկարագրված բարեխառն գոտու մարզերից: Կղզիներով
տափաստանային տարածությունները հանդես են գալիս Արևել-

շան Սիրիբուս, Մինուսինսկի գողավորութեան մէջ, Յնդրբայկալում, իսկ Եվրոպայում՝ Միջին և Ստորին Դանուբյան դաշտավայրերում: Հյուսիսային Ամերիկայում նման կլիմա գոյութիւն ունի արեւմտ. երկայն. 100⁰-ից արեւմուտք՝ մինչև Ժայռոտ լեռները (պրերիաներում). Հարավային Ամերիկայում՝ Արգինտինայի պաժպտանների շրջանում:

Եվրոպայում տափաստանների կլիման պայմանավորված է նրա հյուսիսային սահմանով անցնող բարձեւարիկ առանցքի գոյութեամբ, որակից փչում են հյուսիս-արեւելյան և արեւելյան չոր և սառը քամիներ, հասկապես ձմռանը: Այդ պատճառով, չնայած հարավային դիրքին, տափաստաններում ամենուրեք ուժեղ սառնամանիքներ են լինում, Վորոշիլովգրադում հունվարյան միջին ջերմաստիճանը — 8,0⁰* է, բայց ծայրահեղ մինիմումներն այդտեղ հասնում են — 30⁰, իսկ Ղաղախսկան տափաստաններում՝ մինչև — 40⁰-ի. ի տարբերութիւն տայդայի կլիմայից, այստեղ ձմեռն ավելի կարճատե է: Ամառը տաք է և համեմատաբար չոր, չնայած տեղումների մաքսիմումը թափվում է հենց այդ եղանակին: Հուլիսյան ջերմաստիճանները 20⁰-ից պակաս չեն, բայց և 23,5⁰-ից ավելի չեն (Վորոշիլովգրադում 22,4⁰, Վորոնսեժում 20,6⁰, Ուլան Ուդեյում 20,0⁰): Տեղումների քանակութիւնը տարեկան կազմում է 200—450 մմ., տեղումների մաքսիմումը սովորաբար թափվում է ամառվա առաջին կեսին (հունիս և հուլիս ամիսների ընթացքում), բայց դեպքեր են լինում, երբ ամառը ամսից ավելի բոլորովին անձրև չի գալիս. 1921 թ. Պավլոժիյում երաշտը տեղ-տեղ տևեց ամբողջ երեք ամիս՝ ապրիլ, մայիս, հունիս: Այս երաշտները կործանարար են բուսականութեան, հասկապես ծառերի համար: Ուկրաինական և Հարավ-ուսսական տափաստաններում երբեմն փչում են արեւելյան և հարավ-արեւելյան չոր քամիներ, որոնք կոչվում են «սուխովեյներ»:

Մթանք ունեն խիստ ցածր հարաբերական խոնավութիւն՝ 15 տոկոս (տափաստանների համար սովորական է 35—45 տոկոս) և մեծ ջերմաստիճան (մինչև 42⁰), պարունակում են մեծ

* Անդրբայկալյան տափաստաններում հունվարյան ջերմաստիճանները ավելի ցածր են. Ուլան-Ուդեյում — 26,9⁰, Ներչինսկում՝ անգամ — 32,5⁰:

քանակութեամբ փոշի և տափաստանի հողադործութեան համար մեծ չափեր են հանդիսանում:

Սուխովեյների ծագումը, որ սկզբում կապում էին Ասիայի անապատների և կիսաանապատների աղղեցութեան հետ, ներկայումս բացատրում են ցիլիոնայի և անտիցիլիոնայի քամիներով: Օրինակ, հաստաավող անտիցիլիոնի հարավային եզրում տիրապետող քամիները կլինեն արևելյան ուղմբերից, իսկ անտիցիլիոնում, ինչպես զիտենք, վայրէջք հոսքերի պատճառով օդը չոր է լինում, այդպիսի անտիցիլիոններ Արևելասիլոնոպական հարթութեան վրա թափանցում են Արևելիկայից, կամ Ազորյան բարոմետրիկ մաքսիմումից. սուխովեյներ կարող են առաջանալ նաև ցիլիոնների առջևի մասում, որտեղ նույնպես արեւիկայան քամիներ են իշխում:

Ամենից հաճախ սուխովեյները փչում են գարնանն ու ամռանը, արագությունը հասնում է 10—16 մետրի մեկ վայրկյանում, փչում են սկզբում պոռթկումներով, ապա անընդհատ փոշու մառախուղով ծածկելով ողջ հոբիլոնը, այնպես որ 20 մետր տարածությունից հեռու ոչինչ չի երևում, արեւ թլոււմ է կարմիր մի բիծ: Բուսականությունը այրվում է թե օդի չորությունից և թե շիկացած փոշով ծածկվելուց: Սուխովեյների տեղումնությունը տարբեր է. 1885 թ. Չավոթիյում (Մ. Ուղեն) ամբողջ հուլիս ամիսը, Վորոշիլովգրադում՝ 21 օր շարունակ փչել է սուխովեյը, սովորաբար այդ վայրերում նրա տեղումնությունը հուլիս ամիսն կազմում է 8 և 3 օր:

Տեղումները, ինչպես ասվեց, 200—450 մմ. են հասնում Վորոշիլովգրադում, այսինքն տափաստանի արևմուտքում թափվում են 465 մմ., մաքսիմումն ընկնում է հունիս (62 մմ.) և հուլիս (56 մմ.) ամիսներին: Երկրորդական մաքսիմումը ընկնում է նոյեմբերին (40 մմ.), մինիմումը հունվարին (24 մմ.): Խոնավութեան քանակը բավարար է խոտային բուսականություն առաջացնելու, բայց անբավարար է ծառերի համար, մանավանդ որ չորութեան հետևանքով տեղումների ջուրը չի ձմվում հողի խորքը, ուր ծառերի արմատներն են տարածվում. սրանով էլ բացատրվում է տափաստանների՝ անտառներից զուրկ լինելը: Միայն գետահովիտներն են իրենց խոնավ հողերով տափաստանի գոտում ապաստան տալիս ծառային բուսականութեանը: Խոնավութեան պակասի մյուս հետևանքն էլ հողի թերասւլվացումն է, որի հետևանքով թե հումուսը և թե աղերը կու-

տակվում են և գոյացնում պարարտ սևահողեր, մինչդեռ տայ-
դայի խորութեամբ լվացվող հողերը աղաղերծվում և աղքատա-
նում են հումուսով, ստեղծելով այդ գոտուն հատուկ հողերի
պաղպուրային տիպ:

Հյուս. Ամերիկայում տափաստանային կլիման տարածված է
Մասկաչևան, Միսսուրի և Արկանզաս դեոտերի վերին և միջին հո-
սանքների ավազաններում և առանձնապես լավ արտահայտված է
100⁰ միջօրեականից արևմուտք, ընդգրկելով Կանադայում՝ Ալ-
բերտա պրովինցիայի, ԱՄՆ-ում՝ Մոնտանա, Հյուս. և Հար. Գա-
կոտա, Վայոմինգ, Նեբրասկա, Կոլորադո, Կանզաս, Օկլահոմա,
Տեխաս նահանգների ընդարձակ տերիտորիաները: Տարեկան
ջերմաստիճանները կենտրոնական հարթութուններում հասնում
են 6—10⁰-ի, ամառվա և ձմեռվա ջերմաստիճանները դեպի հյու-
սիս նվազում են հետևյալ չափերով (քաղաքները զասավորված
են 100⁰ ամ. երկ. միջօրեականից արևմուտք)։


Քաղաքներ	Աշխ. լայ- նութուն հյուսիս. լայ.	Ամենատաք ամսվա միջ. Կ ⁰	Ամենացուրտ ամսվա միջ. Կ ⁰	Տարե- կան միջ. Կ ⁰	Միջ. տեղում- ներ մմ-ով
Լեոն (ԱՄՆ)	21°07'	23,2	-14,0	18,7	650
Գենդեր	39°45'	25,4	-1,5	9,9	360
Շայեն	41°08'	19,5	-3,8	6,9	380
Կելզարի (Կանադա)	51°02'	15,7	-10,9	3,0	380
Էլ Լոսոն (Կանադա)	52°33'	16,2	-14,7	2,5	440

Ճվրասիայի տափաստանների համեմատութեամբ խոնա-
վությունն այստեղ ավելի է, մանավանդ հարավում: Տեղում-
ների մաքսիմումը թափվում է զարնան վերջին և ամառվո-
սկզբին, Կանադայում՝ ամռանը: Հյուսիսում կլիմայի կոնտինեն-
տալ բնույթն ուժեղանում է պրերիաների ձմեռը դաժան է
տևական ձյունածածկով: Խաղաղօվկիանոսյան ցիկլոններն այս-
տեղ չեն թափանցում, ձմռանն իշխում է Մանիտոբայի անտի-
ցիկլոնի աղբեցությունը: Երբ այդ անտիցիկլոնը թու-
լանում է, ցամաքի արևմտյան ափից քամիներ են
թափանցում այստեղ. խոնավությունը նրանք թողնում են լեռնե-

քի արեւմտյան լանջերին, իջնելով դեպի սլրերիաները, նրանք տաքանում և չորանում են աշխյան ֆյուների նման: Այդպիսի քամիները կոչվում են չիմուկ, նրանց տաքությունից և չորությունից 30 սմ. հաստություն ունեցող ձյան շերտը գուարշիանում է դեռ չհալված: Մովորարար չէնուկը փչում է վաղ գարնանը և ձմեռը շարունակվում 3—4 օր, բարձրացնելով օդի շերմաստիճանը հաճախ մինչև 30⁰-ով: Արագ հալեցնելով ձյունը, նա հնարավորություն է տալիս անասնապահությանն օգտվելու ձմեռային արոտատեղերից: Արեւմտյան և հարավային Արգենտինայում, որը նույնպես սափաստանների կլիմա ունի, տեղումների քանակը (200—500 մմ.) և ամառվա բարձր շերմաստիճանները (հունվարյան միջինը հասնում է մինչև 27—28. փ⁰) ստեղծում են իստային բուսականության համար նպաստավոր պայմաններ, անտառներ չկան: Բուսական տափաստանների նման այստեղ էլ տեղումների մաքսիմումը ընկնում է ամռան ամիսներին (դեկտեմբեր, հունվար):

Յուրա գոռու կլիմաներ

Բևեռային շրջաններից այն կողմ տարածվում են երկու կիսագնդերի ցուրտ դափները: Նրանց առանձնահատկությունն այն է, որ ձմռանը գիշերների, իսկ ամառը՝ ցերեկների տեղությունը գերազանցում է 24 ժամից, բեռններում հասնելով մինչև 6 ամսի: Նշանակում է, բևեռում ձմեռը ամբողջությամբ համընկնում է գիշերվա, ամառը՝ ցերեկվա հետ: Այստեղից էլ, ցուրտ դափն շերմություն ստանում է բացառապես ամառվա ընթացքում. երկար ամառային օրերի ընթացքում արևը զբաղում է հորիզոնին մոտիկ դիրք, նրա թույլ ճառագայթները հազիվ են տաքացնում մթնոլորտը: Ցարեկան միջին շերմաստիճաններն ամենուրեք 0⁰.-ից ցածր են և հողը մշտապես սառած է մինչև 100 մետր խորության վրա: Ավելի օվկիանոսային ափա ունեցող արևելահայկան կղզիների կլիման բնորոշ է ամառվա համարյա բացակայությամբ, որ Շրպիցերեղենում փետրվարի միջինը — 22,7⁰ է, օգոստոսին հազիվ 2,8⁰, մինչդեռ ավելի կոնտինենտալ պայմաններում ամառը բավականին զգալի է, այսպես, Բուլոնում (Լենայի գետաբերանի մոտ) հունվարյան միջինը — 39,1⁰ է, իսկ հուլիսյանը՝



- | | | | |
|--|---|--|--|
| <p>Область сплошной ледяной шапки.</p> <p>Районы отрыва ледяной шапки от берега.</p> | <p>Районы ледяной шапки с плавающим островом льда.</p> <p>Область с измененной характеристикой льда (подробности см. в тексте).</p> | <p>Вечная мерзлота только в безледных районах.</p> <p>Отдельные острова ледяной шапки.</p> | <p>Длинные границы ледяной шапки в пределах СССР.</p> <p>Предполагаемая граница ледяной шапки за СССР.</p> |
|--|---|--|--|

+12,5° է. Սաղաստիրում (նույն տեղը) տարեկան միջին ջերմաստիճանն է —16,5°, որ ամենացածրն է ՍՍՌՄ-ի տերիտորիայում: Ամերիկյան Արշիպելագի կղզիներում հունվարյան ջերմաստիճանները նույնքան ցածր են, որքան Լինայի գետաբերանում, հուլիսյան ջերմաստիճանները քիչ զերազանցում են Շպիցբերգներին (+3—+5°):

Հարավային ցուրտ գոտում նույնիսկ ամռանը զրական ջերմաստիճաններ չկան (—1,1°—6,7°): Ձմեռը Անտարկտիդայի ներքին մասերում խիստ ցածր ջերմաստիճաններ են իշխում (—45°) և միայն Գրեհեմի երկրում համեմատաբար տաք է (—16,6°), տեղումներն ամենուրեք տննշան են (90—300 մմ.), բացի առանձին տափնյա վայրերից, որտեղ լեռնոտ սելեֆը նպաստում է կոնգլոմերատային: Տեղումների քանակը ցուրտ գոտում ճշգրիտ որոշել դժվար է, որովհետև գոլորշիների կոնդենսացիան տեղի է ունենում հենց երկրի մակերեսին, սառույցների, ջրերի և ձյունապատ տարածությունների վրա:

Տուեդրաների կլիման: Եվրոպայի, Ասիայի և Հյուս. Ամերիկայի հյուսիսային ափերը, ինչպես և հարավային կիսագնդում բևեռային շրջանից դուրս ընկած օվկիանոսային կղզիները՝ Ֆալկլենդյան, Հար. Գեորգիայի, Հար. Յոկոնեյան, կերգելեն և այլն ունեն ցուրտ գոտու կլիմայի հատուկ ախպ՝ տունդրային կլիմա, որը համեմատաբար նպաստավոր է բուսական և կենդանական աշխարհի զարգացման, համար: Ջերմություն և տեղումների տեսակետից այս կլիման նման է Արկտիկայի և Անտարկտիկայի կլիմաներին, միայն այն տարբերությամբ, որ ամառվա ամենատաք ամսվա ջերմաստիճանը 0°-ից ցածր չի և հասնում է մինչև 10—12°-ի տունդրայի հարավային սահմանում: Չնայած տեղումների փոքր քանակության (մինչև 300 մմ.), տեղումներով օրերի թիվը մեծ է, տարեկան 80—100 օր և ավելի, որից աշնանը 30—40 օր: Չյան ձածկն տննշան է, որը նպաստում է հողի խորը սառչելուն: Ամպամածությունը բավականին մեծ է, մանավանդ ամառվա ամիսներին, երբ հարաբերական խոնավությունը կեսօրվա ժամերին չանում է 80—90°-ի Բամբիները մուսսոնային բնույթ են կրում, կապված ձմեռվա և ամառվա ընթացքում ձոփի և ցամաքի մթնոլորտային ճնշման տարբերությունների հետ: Ծովային կլիմայի պայմաններում տունդրային գոտին տարածվում է դեպի ցածր լայնությունները, ինչպես օրինակ Ֆալկլենդյան կղզիներում հար. լ. 52°, Ալե-

ուստյան և Կոմանդորյան կղզիներում հա. լ. 55—52⁰, մինչդեռ հյուս. կլիմայի կոնտինենտալ կլիմայի տաքամաններում բունդ-րան տարածվում է դեպի բևեռ, դիջելով հարավում իր տեղը տաքային, Քայմիր թերակղզում, օրինակ, անտառը հասնում է մինչև հյուս. լ. 72⁰-ը, նույնը և Լենայի ավազանում:

Տունդրայում աճում են մամուռներ, քարաքոսեր, բազմամյա թփուտներ և խոտեր. հանդիպող ծառերը դաճած են և խրոչ-ճուղ տեսք ունեն, ծուռված և դեպի հարավ թեքված բներով. դրա պատճառը քամիներն են, որոնք տունդրայում փչում են մեծ ուժով, առանձնապես Կարայի ծովի ափերին: Ձմռանը բուքը տևում է օրեր և հասնում է այնպիսի ուժգնության, որ կարող է տապալել մարդկանց և եղջերուներին: Մյուս կողմից քամին ցրում է առանց այն էլ նվազ ձյան ծածկը և այն կուտակում գոգավորութուններում, որի հետևանքով բույսերն ստիպված են դիմանալ մեծ սառնամանիքներին: Ենիսեյից աբելիլը քամու ուժը թուլանում է:

Լեռների կլիմա

Կլիմայի էլեմենտները՝ ջերմությունը, խոնավությունը, ճնշումը լեռներում ավելի հաճախակի են փոփոխվում. եթե հարթությունների վրա նրանց փոփոխությունը նկատվում է հարյուրավոր և ավելի կիլոմետրերի վրա, ապա լեռներում դրա համար բավական են միայն կիլոմետրեր կամ նրանց մասերը:

Լեռները կլիմայի վրա ազդում են երկու ձևով՝ իրենց բացարձակ բարձրությունը և ուլեֆի ձևերով: Բարձրության ազդեցությունն ամենից լավ արտահայտվում է մթնոլորտի ննջման վրա, քանի որ արդեն, անկախ ուլեֆից, ճնշումը պետք է նվազի դեպի վեր բարձրանալիս:

Վերևում բարոմետրիկ դրագիները մեծանում է, այսինքն ճնշումն ավելի դանդաղորեն է պակասում. եթե 45⁰ վրա, ծովի մակերևույթին, 0⁰ ջերմաստիճանի դեղքում դրագիները համասար է 10,5 մետրի, ապա 2.000 մետր բարձրության վրա նա կազմում է 17,2 մ., 6.000 մետրի վրա՝ 22,5 մ.: Բայց եթե ջերմությունն ավելանում է 1⁰-ով, ապա լեռներում ճնշումն ավելի շատ է նվազում, քան ծովի մակերևույթին (4.000 մետր բարձրության վրա 1,09 մմ., իսկ ծովի մակերևույթին միայն 0,32 մմ.). նկատված է, որ կյանքի համար ցածր ճնշումը:

մինչև որոշ սահման, արդելք չի հանդիսանում: Օրինակ Բոլի-
վիայում, Սեն-Վինսենտե բնակավայրում, 4.580 մետր բարձրու-
թյան վրա ճնշումը կազմում է 436 մմ.: Գանլայում (Տիբեթ)
4.610 մետրի վրա ճնշումը 533 մմ. է, սրանից բարձր բնակու-
թյունը, ըստ երևույթին, փտանդավոր է կյանքի համար: Օդի
ջերմությունը բարձրության յուրաքանչյուր 100 մետրին իջնում
է 0,5⁰, ամառն ավելի (0,62⁰), քան ձմեռը (0,50⁰), տարվա մի-
ջինը կազմում է 0,56⁰: Լեռներում ջերմության անկումը կախ-
ված է նաև ուղիքի պայմաններից. ուղղորդ լանջերին անկումն
արագ է կատարվում, պակաս լանջերին դանդաղ, եթե լանջը
դարձած է դեպի հորալ, ջերմության անկումն ավելի արագ է
կատարվում: Ջերմության ամպլիտուդներն էլ լեռներում ավելի
փոքր են, քանի որ նոսր օդը քիչ է ջերմություն կլանում և
հետևաբար քիչ էլ կորցնում է սառեցման ժամանակ: Գոգավու-
րություններում ամպլիտուդներն ավելի մեծ են:

Շատ բնորոշ են ջերմային ինվերսիաները, որոնք առաջա-
նում են միանգամայն խաղաղ անտիցիկլոնային եղանակի ժա-
մանակ, երբ զոգավորություններում կուտակված օդը սառչում
է և սառնությունը վերև չի տարածվում: Կլեմոն-Ֆերանում
նկատվել է —15,8⁰, իսկ նրա հարևան Պյուեի դե-Դոմ լեռան վրա
(Կենտր. Ֆրանսիական Չանդված, բարձրությունը 1.465 մ.) +4,4⁰
ջերմություն: Ինվերսիայի հետևանքով հաճախ լեռնային երկր-
ներում հովիտների հատակին մշակվող կուլտուրաները զրոտ-
հարվում են, իսկ լանջերի վրա պահպանվում: Մարդկային բնա-
կավայրերն էլ, մեծ մասամբ, հենց լանջերի վրա են հիմնվում:
Հողի ջերմության օրական ամպլիտուդը մեծ է և աճում է բարձ-
րության հետ միասին, քանի որ լեռները նոսր օդը հողի ոչ
ջերմություն ստանալուն է խանգարում, ոչ էլ ձախսելուն: Ա-
պառների ուժեղ մեխանիկական հողմահարությունը լեռներում
հենց այս ամպլիտուդներով է բացատրվում:

Օդի խոնավությունը լեռներում պակաս է, 2.000 մետր բարձ-
րության վրա մեկ խորանարդ մետր օդի մեջ եղած ջրային գո-
լորչիները ծովի մակերևույթի վրա եղած գոլորչիների կեսն են
կազմում, 4.000 մետրի վրա՝ մեկ քառորդը: Մակայն, երբ քա-
մին վեր է բարձրացնում գոգավորությունների օդը, վերջինս
բնկնելով սառը միջավայր, մեծացնում է հաբաբերական խոնա-
վությունը և ամպեր են գոյանում: Այդ է պատճառը, որ քա-
մինների հանդեպ բարձրացող լեռները մեծ ամպամածություն և

առտտ տեղումներ են ունենում, եթե, մասնավանդ, նախքան
լեռներին հասնելը, քամին անցնում է ասք օվկիանոսների և
ծովերի վրայով և հազնում ջրային գոլորշիներով: Ամպամա-
ծությունը ձմռանն ավելի պակաս է: Հաճախ ամպերը լեռնե-
րում հաստ ծածկոց են կազմում, ծով, որի մեջ կղզիների
նման կանգնած են ավելի բարձր դազաթաները, այս շերտի
մակերեսն էլ այն սահմանն է, որտեղ կատարվում է գոլորշի-
ների մաքսիմալ կոնդենսացիան: Սրանից վեր տեղումները քա-
նակը նվազում է, մաքսիմալ կոնդենսացիայի սահմանը արևա-
դարձային գոտու լեռներում ընկնում է 1.000 մետրի, բարեխառն
գոտում 1.500 մետրի վրա: Ճավա կղզու վրա նրա բարձրու-
թյունը 800 մետր է, Հավայան կղզիներում 700 մ., Հիմալայան
լեռներում 1.200 մ., Յիերրա Նևադա լեռներում (Գալիֆորնիա)
1.400 մ., Շվարցվալդում՝ 1300 մ.: Միևնույն լեռնային նրկրում՝
ծայրամասերում նա ավելի ցածր է, քան կենտրոնական գանգ-
վածների վրա: Սրինադ, նախաալպերում 1.300 մ., իսկ Մոն-
բլանի վրա 2.500.: Սովորաբար լեռնաշղթաների մի լանջն ավելի
խոնավ է, մյուսը չոր: Ինչքան խոնավաբեր քամու ուղղություն-
նը մոտ է ուղղահայացին՝ լեռնաշղթայի ածրածման ուղղության
նկատմամբ, այնքան հոգնահայաց լանջն ավելի է խոնավու-
թյուն ստանում, ըստ որում տեղումների քանակը գեպի վեր
բարձրանալիս աճում է:

Ջուրը լեռներում: Որպես ձյուն տեղումները լեռներում ա-
վելի շատ են. անգամ արևադարձային գոտու լեռների դազաթ-
ներին ձյուն է տեղում: Ջյան ծածկոցի սահմանը ձմռանն իջ-
նում է ցած, ամռանը բարձրանում լանջերով գեպի վեր: Առանձ-
նապես բարձր լեռներում գոյություն ունի երբեք չհասվող եռ-
վերթական ճյառն ծածկոց. սրա սահմանը կախված է ոչ միայն
Ջերմաստիճանից, այլև խոնավությունից. հաճախ ավելի
դերահեղում է վերջինին նշանակությունը: Սրինադ, Հիմալայան
լեռների հարավային լանջին հավերժական ձյան սահմանը 4.500
մետրի վրա է, իսկ հյուսիսային լանջին՝ 5.800 մետրի. այստեղ
Ջերմությունը հարավային լանջին ավելի բարձր է, բայց և
մեծ է խոնավությունն ու ձյան կուտակումը, որը հիշյալ սահ-
մանից վեր ամռանը Ջերմությունն այլևս ի վիճակի չէ հալեց-
նելու: Կովկասյան լեռներում հավերժական ձյան սահմանը մի-
ջին հաշվով 3.250 մետր բարձրություն ունի, բայց խոնավու-
թյան և Ջերմաստիճանների տարբերության շնորհիվ առանձին
մասերում բարձրանում կամ իջնում է միջին սահմանից. ա-

մենից ցածր է նա Մեծ Կովկասի արևմտյան մասի հարավային լանջին, որը դարձած է Սև ծովի կողմը, բնագավառը 2.700 մետրի վրա, ծայր արևելքում բարձրանալով հասնում է 3.750 մետրի, այնպես որ լեռների արևելյան ցածր մասում հովերժական ձյունով ծածկված են միայն առանձին բարձր գագաթները: Բաղարդյուզի 4.254 մ., Թֆան 4.130 մ., Կենտրոնական Ալպերում հովերժական ձյան սահմանը 2.800 մետրի վրա է, Պիրենեյան լեռներում 2.800 մ., Տյանշանում 4.500—4.800 մ., Կարակորումի լեռներում 5.300—5.600 մ., Արարատ լեռան վրա 4.400 մ. և այլն*:

Լեռնային ֆամիլեր: Լեռնային երկրների տեղական քամիներից հիշատակության արժանի են լեռնահովտային քամիները և ֆյոնները: Լեռնահովտային ֆամիլերը շրանման են բրիզներին, առնեն օրական ընթացք գիշերները նրանք փչում են լեռներից դեպի հովիտները, բերելով բարձունքների սառն ու թարմ օդը: Առավոտյան ժամի 9—11-ից սկսում են հովիտներից փչող քամիները, որոնք բարձրանում են լանջերով դեպի վեր: Իրատաճանն այն է, որ ջերմացման ընթացքում թե հովտում և թե լանջերի վրա օդը վեր է բարձրանում. բարձր հովիտների վրա, ադատ մթնոլորտում, միևնույն բարձրության վրա ճնշումն ավելի մեծ է լինում, քան լանջերի վրա: Սյս քամիները տաք են և խոնավ, բարձրանալով վեր, նրանք ամպեր են զոյացնում և պարուրում դադաթները:

Անդրկովկասում լեռնահովտային քամիներ գիտվում են Բուռի հովտում, Թրիլխախում, Արասխումանում, Բորժոմում, Իլիխջանում, Սեվանի ավազանում:

Ձյուները տաք և չոր քամիներ են, որոնք մշտական ուղղություն ունեն, իջնում են լեռներից, բարձրացնում են օդի ջերմաստիճանը, հալեցնում ձյունը, իսկ ամառը ֆյոնից խոտերը դեղնում, չորանում են, տերեւները թափվում են ծառերից: Ամենից լավ ծանոթ է ֆյոնը Ալպերում: Այդ լեռների հարավային լանջի օդը բարձրանում է վեր, սառչում և կոնդենսացիայի ենթարկում զոլորչները, անցնելով դեպի հյուսիսային լանջ արդեն չորացած, նա իջնում է այդ լանջով ցած, հետևաբար տաքանում և ավելի է չորանում: Ծյունը մեծ ավերածություններ է կատարում, հալեցնելով ձյունը հեղեղներ է առաջացնում, ձյան

* Հարավային կիսագնդում մեծ խոնավության և զով ամառների շնորհիվ հովերժական ձյան սահմանն ամենից ցածր է. օր. Էրիլի Անդերում 1400 մ., Հարավ. Պերդիա կղզում՝ ընդամենը 530 մ.

հյուաներ և անազին քարեր է թափում ցած, բայց և մեծ օգուտ է տալիս անասնապահներին՝ ազատում է արոտատեղերը, փչելով աշնանը, նա արագացնում է խաղողի և եգիպտացորենի հասունացումը: Առանձնապես տարածված են ֆյոններն Անդրկովկասում. այստեղ պլխավոր կովկասյան շղթայից նրանք իջնում են դեպի դաշտավայրերը և բարձրադիր հարթությունները՝ կոլխիդայի, Գարու, Մազուբամու, Մուխրանի, Ալազանի: Բութայիսում տարվա մեջ 114 օր ֆյոն է փչում, ամառը նրա չոր շնչից ծառերի տերևները սմքում, թափվում են, շնչելը դժվարանում է: Սևանի ավազանում ամենից շատ ֆյոնը փչում է մարտին և սեպտեմբերին:

Հաճախ, երբ լեռների վրա ազատ մթնոլորտից իջնում են օդային զանգվածներ, ֆյոններ են առաջանում միաժամանակ երկու հակադիր լանջերի վրա, ինչպես այդ նկատված է Ալպերում և կովկասում (1899 թ. մարտի 24—28-ին):

ՍՍԽՄ-ում ֆյոններ տարածված են նաև Միջին Ասիայում (Տաքենդե շրջան), Արիմի հարավային ավին, Ալթայում, Բայկալի ավազանում և այլն:

Արևադարձային գոտու լեռների կլիման ընդհանրապես նման է բարեխառն գոտու լեռների կլիմային: Տարբերիչ դժերն են. 1) օդի ճնշումը շատ փոքր է մեծ բարձրութայն, ինչպես և հասարակածային դեպրեսիայի շրջանում դտնվելու պատճառով. 2) չորությունը մեծ չափերի է հասնում, քանի որ մաքսիմալ կոնդենսացիայի սահմանն ընդամենն 1,000 մետրի վրա է, ալպիական գոտին այս սահմանից մի քանի հազար մետրով բարձր է ընկնում, ուր դոլորշիների քանակը ծովի մակերևույթին եղածի $\frac{1}{4}$ է կազմում. 3) ձյունն ավելի արագ է հալչում. հավերժական ձյան սահմանն ավելի բարձր է ոչ թե հասարակածում (4.700—4.800 մ.), այլ չոր արևադարձային շրջաններում, որտեղ ճնշումը բարձր է և իշխում են չոր քամիներ. օր. Պայչատայում (չոր. Ամերիկա, Անդեր) հասնում է 6.120 մետրի. 4) տեղական քամիները թույլ են արտահայտված:

Լեռնային կլիմաներին ընդդր է տեղումների քանակի աճումը ըստ բարձրութայն թե բարեխառն և թե արևադարձային գոտիներում: Մաքսիմալ կոնդենսացիայի սահմանում տեղումների բաշխումը կարծես կրկնում է ուլեֆի անհարթությունները, մաքսիմումի հասնելով բարձունքներում և նվազելով դոդափորություններում: Այսպես, Հավայի կղզու վրա Հոնոլուլու քաղաքում (հս. լ. 51°18'), որի ստորին թաղամասերը ծովի մա-

կերևույթին մոտ են, իսկ վերին թաղամասերը լեռան լանջին, տեղումների բաշխումը հետևյալ պատկերն ունի.

3 մ. բարձրութ. վրա	612 մմ.
15 մ. » »	982 »
123 մ. » »	2.295 »
260 մ. » »	3.652 »

Այսպիսով, քաղաքի վերին թաղամասերը 6 անգամ ավելի տեղումներ են ստանում, քան ստորին թաղամասերը:

Կովկասում տեղումների աճն ըստ բարձրության հետևյալ պատկերն ունի.

Բարձրությունը Տարեկան տեղումները

Օրջոնիկիձե	691 մետր	867 մմ.
Կոբի	1989 »	1191 »
Խաչի լեռնանցք	2388 »	1706 »
Գուգաուբ	2207 »	1515 »
Թբիլիսի	404 »	525 »

Սարահարթերի կլիման: Լեռնային բարձրագույն հարթությունները, ինչպիսիք են, Կենտրոնական Ասիայի, Տիբեթի, Պամիրի, Իրանի և Փոքր Ասիայի, ինչպես և Հայկական բարձրավանդակի հովիտներն ու գոգավորությունները, ունեն լեռների համեմատությամբ խիստ կոնտինենտալ կլիմա: Տեղումներն ամենուրեք աղքատիկ են, ջերմաստիճանների տարեկան և մասնավանդ օրական ամպլիտուդները արտակարգ մեծ են:

Մոնղոլիայում, օրինակ, ջերմաստիճանի օրական ամպլիտուդը ամենամեծն է փետրվարին, երբ հասնում է 18—20⁰-ի (Ուլան Բատորում 20,9⁰) Կոբդոյում թափվում են ընդամենը 100 մմ., Ուլան Բատորում՝ 244 մմ. տեղումներ: Պամիրում օրական ամպլիտուդը օգոստոսին 25,7⁰ է, տարեկանը 30,7⁰, ամառվա ջերմաստիճանները մեծ չեն, Պամիր Պոստում հուլիսյանը կազմում է 13,5⁰, բայց Տիբեթում բավականին նշանակալի են դառնում (17—18⁰), Լհասայում, 3.510 մետր բարձրության վրա, սիպտեմբերին ցերեկը ժամը 1-ին օդի ջերմությունը հասնում է 25⁰-ի, Իրանում հուլիսյան միջինն արդեն հասնում է 28,4⁰-ի (Թեհրան), հունվարյանը 0⁰-ից չի իջնում (+2,1⁰), թեպետ նշված են մինչև —16⁰ սառնամանիքներ: Տեղումների սեզոնային բաշխումը բազմազան է, Մոնղոլիայում, Պամիրում, Տիբեթում մաքսիմումն ընկնում է ամռան ամիսներ

րին. Տիրեթում ենթադրվում է նույնիսկ հնդկական ամառային մուստնի ազդեցութեամբ, որ անձրև է բերում, մինչդեռ ձմռանը մի քանի ամիս երբեմն տեղումներ չեն լինում: Չյունն այնքան սակավ է, որ արտաստեղերը բաց են ամբողջ տարվա ընթացքում: Հայկական բարձրավանդակում մթաքսիմումն ընկնում է զարնանը, իսկ Իջանում և Փոքր Սսիայում ձմռանը, միջերկրածովային կլիմայի որոշակի արտահայտութեամբ: Ամպամածութեամբ յունն այստեղ տարեկան 30 տոկոս է կազմում, օդոստասին 11 տոկոս, փեթրվարին 53 տոկոս:

Քարձր սարահարթերում օգն աչքի է ընկնում զարմանալի չորութեամբ, իսկ խաղաղ եզանակին՝ նաև պարզութեամբ ու թափանցիկութեամբ, այնպես որ հեռավոր արարկաները երևում են պարզ գծազրույթեամբ: Ամառներն աչքի են ընկնում ուժեղ քամիներով, որոնք տեղ-տեղ փչում են մայրսից մինչև սեպտեմբեր: Տուրֆանի իջվածքում այդ քամիները բարձրացնում են հող և քարեր, վայր են գցում կենդանիներին:

Արևադարձային գոտու սարահարթերը, ընդհակառակը, աչքի են ընկնում ջերմաստիճանների տարեկան փոքր ամպլիտուդներով: Հարեշտանի, Մեքսիկայի սարահարթերը հյուս. կիսագնդում, Էկվադորինը՝ հասարակածի վրա, Հյուս. Զրլի, Պերուի և Բոլիվիայի սարահարթերը հարավային կիսագնդում ունեն տարվա ընթացքում հավասարաչափ բաշխված ջերմաստիճաններ: Կլիմայում (Էկվադորի մայրաքաղաքը) 2.816 մ. բարձրութեան վրա ամենատաք ամսին՝ սեպտեմբերի միջինը $13,1^{\circ}$ է, ամենացուրտ ամսինը (մարտ, հոկտեմբեր, նոյեմբեր)՝ $12,7^{\circ}$, այսպիսով տարեկան ամպլիտուդը միայն $0,4^{\circ}$ է, Մոխ-Արերայում ընդամենը $3,4^{\circ}$ (ապրիլ $16,8^{\circ}$, դեկտեմբեր $13,4^{\circ}$): Չերմաստիճանների օրվա ամպլիտուդները մեծ են Էկվադորում՝ մինչև 14° , Հարեշտանում չոր ժամանակ մինչև $20-21^{\circ}$ (ցերեկը $22-24^{\circ}$, գիշերը $3-4^{\circ}$), երբեմն գիշերվա ընթացքում ջերմութեամբ ընկնում է մինչև -3° , ցերեկը բարձրանում է մինչև $+29^{\circ}$, Էնիթային անձրևների ժամանակ օրվա ամպլիտուդները սակասում են: Այսպիսով այդ սարահարթերի վրա տարին բոլոր եզանակը նման է մեր զարնանային եզանակին: Տեղումներն այստեղ շատ են: Էկվադորում՝ 1.250 մմ., Հարեշտանում 1.300 մմ., Պերույում, Բոլիվիայում և Մեքսիկայում տեղումները շատ ավելի պակաս են (460—580 մմ.):

Յուրա գոտու սառցապատ սարահարթերի կլիման բնորոշ-

վում է հետևյալ տվյալներով — Գրենլանդիայում 3,030 մ. բարձրութեան վրա փետրվարի միջին t^0 — 47,2⁰, հուլիսինը՝ — 11,2⁰, միջին տարեկանը՝ — 39,2⁰, Անտարկտիդայում 2,800 մ. բարձրութեան վրա հունվարյան միջինը՝ — 18⁰ (?), հուլիսյանը՝ — 45,6⁰, տաքեկանը մոտավորապես — 26⁰:

Տեղումների քանակը հաշվի չի առնված, առատորեն եղյամ է դոյանում անմիջապես երկրի մակերեսին, ամառը ինսուլյացիայի տեղումները մեծ է, բայց ձյունն ու սառույցը ստացվող ջերմութեան 64—84 տոկոսը անդրադարձնում են: Միջնուրրտային ճնշումը մեծ է, հատկապես ձմռանը, ուժեղ ինվերսիայի պայմաններում, այդ պատճառով ցուրտ սարահարթերից քամիները փչում են դեպի ծովափ:

Միկրակլիմա

Նկարագրված կլիմայական տիպերն ընդգրկում են ընդարձակ տարածութեաններ, կլիմայական խոշոր մարզեր: Այդպիսով դրանք մակրոկլիմայի (մակրո—խոշոր) տիպեր են:

Հաճախ, սակայն, հարկ է լինում խոսելու կլիմայական այնպիսի տարբերությունների մասին, որոնք զգացվում են մի քանի տասնյակ մետրի կամ հազարի սանտիմետրի վրա, այսինքն՝ միկրոկլիմայի (միկրո—փոքր) մասին: Հայտնի է, օրինակ, որ կողք-կողքի գանձող վարելահողերն ու անտառները միևնույն կլիմայական պայմանները չունեն. վարելահողի փոխարք մակերեսը թույլ ջերմահողորդականութուն ունի, շուտ տաքանում և շուտ էլ սառչում է, անտառում թե տաքացումը և թե ցրտելը ավելի դանդաղ են կատարվում, քանի որ ծառերի տերևները ցերեկը ջերմութեան որոշ մասը կլանում և սովերի մեջ են պահում հողը, գիշերը՝ արգելք են հանդիսանում հողի շատ սառչելուն պահպանելով անտառի մեջ բավականին ջերմութուն: Տարեկան միջին ջերմաստիճանները բացատրվում քիչ ավելի բարձր են, քան անտառում, օր.՝ Բուզուլուկյան սոճուտում (Ուլալ) 0,5⁰-ով, Լենինգրադի մարզում Լուգա և Գատչինա քաղաքների միջև՝ 0,2⁰-ով, բայց ձմռանն անտառը փոքր ինչ տաք է բացատրների և գաշտերի համեմատությամբ (Հար. Շվեդիայում 0,2⁰-ով): Օդը թե բացարձակ և թե հարաբերական խոնավութունը բուսականութեամբ պատած տերիտորիաներում ավելի մեծ է, քան մերկ տարածութեանների վրա: Անգամ ոչ մեծ

բարձրութիւններէի և ոչ այնքան լայն ու խոր ձորերի հակադիր լանջերին նկատուած ենք միկրոկլիմայական տարբերութիւններ, որոնք բխում են լանջերի էքսպոզիցիայից, այսինքն դիրքից՝ արևի ճառագայթների նկատմամբ, խոնավութիւն կամ չոր օդ բերող քամիների ուղղութիւնից, բուսական ծածկի առկայութիւնից: Մեծ քաղաքները իրենց քարն շինքերով, ասֆալտապատ փողոցներով ու հրապարակներով ավելի ուժեղ են տաքանում, քան նրանց շրջակայքը, իսկ նրանց սառչելուն խանգարում են թե՛ փոշով ու դոլորշիներով հարուստ մթնոլորտը և թե՛ քամիների թույլ ուժը: Մոսկվայի, Լենինգրադի, Փարիզի տարեկան միջին ջերմաստիճանները $0,5^{\circ}$ -ից մինչև $1,5^{\circ}$ ավելի են, քան նրանց շրջակայքում: Քաղաքի վրա տեղումներ ավելի շատ են թափւում, որովհետև ամռանը օդի վերընթաց հոսքերի հետեանքով կույտավոր ամպեր են առաջանում, որոնք, ճիշտ է, թույլ տեղումներ են տալիս, բայց կրկնվում են շատ հաճախակի: Տաքութիւն հետեանքով քաղաքի վրա ճնշումը թույլ է, հետեանքին շրջակայքից դեպի քաղաք են փչում քամիներ, որոնք ավելի սառն օդ են բերում: Ինչպես դեռերի հովիտներում, քաղաքի փողոցներում էլ օդը շարժման մեջ է, դերեկը նա շինքերի պատերից ու տանիքներից վեր է բարձրանում և իջնում փողոցի մեջտեղը, դիշերը հակառակ ուղղութիւնով է կատարվում շրջանառութիւնը: Վերջապես շատ դայտուն միկրոկլիմայական տարբերութիւններ են ներկայացնում անապատային ու կիսաանապատային շրջաններում ոռոգվող տարածութիւնները: Ստանալով մեծ քանակութեամբ ջուր, նրանք խոնավացնում են իրենց վրա դառնվող օդը: Տաքեանտի մոտ 5 սմ. հողի մակերեսից բարձր, ոռոգվող դառում օդի հարսերական խոնավութիւնը հասնում է 55% -ի, չորոգվող տարածութիւն վրա՝ 23% -ի, երկու չափումներն էլ կատարված են ամռան կեսօրին, միաժամանակ: Օդի ջերմաստիճանները, համապատասխանաբար, կազմում են՝ 31° և 41° :

Ստիճից հետևում է, որ մարդկային հասարակութիւնը կարող է ազդել կլիմայական պայմանների վրա, բուսապատելով խոպան տարածութիւնները, ստեղծելով արհեստական ջրամբարներ ու վտարման ցանց, չորացնելով ճահիճները կամ մյուս կողմից կտրտելով անտառները, չորացնելով բնական ջրամբարները, բարձի թողի անելով ոռոգման ցանցը և այլն: Հասկանալի է, որ մի գեղջում ազդեցութիւնը կլիմայի վրա դրական

կլիմայի, երկրորդ զեպքում՝ բացասական: ՍՍՌՄ-ում դեռ Հայրենական պատերազմից առաջ ծավալվել էին տախտատանային դասում արհեստական ջրամբարներ ստեղծելու, Ջալոլժյեի խորան տարածությունները ուղղելու և բուսապատելու աշխատանքները, որոնք հետագայում ևս առաջ են տարվելու մեծ չափերով. նրանք բարերար ներդրածություն կունենան հիշյալ վայրերի կոնտինենտալ կլիմայի վրա, որով ավելի կմեծանա այդ ձեռնարկումների անտեսական էֆեկտը:

Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Յ Ց Ո Ւ Ն

1. *Л. С. Берг.*—„Основы климатологии“, Ленинград, 1938.
2. *Л. С. Берг.*—„Природа СССР“, Москва, 1938.
3. *А. И. Воейков.*—„Климаты земного шара, в особенности России“, СПб, 1884 г.
4. *А. А. Григорьев.*—„О методологических установках и назревших задачах советской физической географии“, в „Пробл. физ. геогр.“. I, 1934.
5. **Բ. Զ. Գրգրիեհիս**—ՍՍՌՄ ֆիզիկական աշխարհագրությանը, Երևան, 1945:
6. *В. Кенпен.*—„Основы климатологии“ (климаты земного шара). Москва, 1938.
7. *А. Крубер.*—„Общее землеведение“, ч. II, Москва, 1938.
8. **Յ. Գ. Լիսիցյան**—Հայաստանի ֆիզիկական աշխարհագրությանը, Երևան, 1940:
9. *А. Ф. Лайстер и Г. Ф. Чурин.*— „География Закавказья“, Тиф, лис, 1929.
10. *Э. Мартони.*—„Основы физической географии“, т. I, М-Л, 1939
11. *В. И. Оболенский.*—„Основы метеорологии“, Ленинград, 1937
12. *Е. С. Рубинштейн и др.*—„Курс климатологии“, Москва, 1941
13. *М. Д. Семенов-Тяньшанский.*—„К теории ландшафтообразующего процесса“, Уч. Зап. Лен. Гос. Унив., т. XXI, 1939.
14. *И. В. Филюровский.*—„Опыт исследования климатов Кавказа“, СПб, 1912.
15. *И. Wagner.*—„Lehrbuch der Geographie“, Hannover, 1922.

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Կլիմատոլոգիայի առարկան և նշանակությունը	3
1. Մթնոլորտ (աամոսֆերա)	6
2. Օդի ջերմության բաշխումը	16
3. Աամոսֆերայի ճնշումը և քամիներ	37
4. Օդի խոնավությունը և մթնոլորտային տեղումները	53
5. Ցամաքների և ծովերի տեղեցությունը կլիմայի վրա	63
6. Կլիմայական կլասիֆիկացիա և կլիմայական մարզեր	67



ՎՖ 12673,

պատվեր № 400,

ախրամ 600

8 տպագրական մամուլ

Ստորագրված է տպագրելու 1946 թ. գեկտ. 20-ին

ՀԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ



FL0010928

ԳԻՆԸ 15 ՈՒԻՐԸԻ 1ա.504.

A $\frac{11}{15622}$

На правах рукописи

А. АСЛАНЯН

ОСНОВЫ КЛИМАТОЛОГИИ

(Материалы)

(На армянском языке)

Изд. Гос. Заочного Пед. Института Арм. ССР
Ереван—1946